

Լ. ՍԱՎԵԼԵՎԵԿ.

ԶԲՈՒՅՑՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՅԻՆ



ԹԵՏՐԱՑ

327+3

0-33

444

Ամելև, Լ.

Գրույցներ համաշխարհայի  
ովատերազմի մասին:

—	—	—	—
—	—	—	—
—	—	—	—
—	—	—	—
—	—	—	—

327-2  
U-93

940..

Վ. Ը.

V

✓

# Հայոցական գրաւորակ

Լ. ՍԱՎԵԼՅԵՎ

4478


ԶՐՈՒՅՑՑՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

21/2/2  
2/2/2

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ


4/11  
8/16/61

Ուսու. քաղաք Երևան, ԳՈՒՂՅՈՑՆ



ՏԵՐԵՎԱՆ

1961



## ՆԱԽԱԲԱՆ

1914—1918 թվականների համաշխարհային պատերազմի ժամանակաշրջան մեջ չափելու չեն դրվեր Վեպեր, պատմվածքներ, մարդկային պատմության մեջ չտեսնված այս պատերազմի մասնակիցների սրագրերն ու հիշողություններն աշխարհի խոշորագույն զբաղարձններում ամրող բաժիններ են կազմում:

Այս առևելի պատերազմը լուսաբանող դրամեր վիճնելու մասն գանգատվել չի կարող նաև մեր խորհրդային ընթերցողը 1914—1918 թ. թ. պատերազմի մասին մենք մեծ թվով գեղարվեստական գրքեր ունենք մեր արամազրության տակ:

Այդ գրքերը մեզ ցույց են տալիս այն առնջանքներն ու առաջանքները, վոր կրել են խարեյությամբ ու բանությամբ համաշխարհային պատերազմի խրամատները քշված ժողովրդական մասնաները։ Այս գրքերը պատմում են, թե պատերազմի ընթացքում ինչպես եր արթնանում աշխատավորության գիտակցությունը, ինչպես եր աճում նրա բողոքն այդ յեղբայրապատճեն պատերազմի դեմ։

Այս և այդ գրքերի նշանակությունը մեր ընթերցողների համար։

Բայց մեզ հարկավոր են նաև այնպիսի գրքեր, վորոնց լուսաբանեյին այս պատերազմի, պատմությունը, պատմեյին տառնձեռն մարտերի մասին, մեզ ծանոթացնեյին առզմական անխեկային ու առզմական արվեստին։

Մեր խորհրդային յերկրի բառեջության կեսը Հոկտեմբերի հասակակիցն եւ Այս յերիտասարդությունը ձնվել և այն ժամանակ, յերբ 1914—1918 թ. թ. պատերազմի թնդանոթները դադարել եյին վորոտալուց, և նա այդ պատերազմի մասին գիտեմ հիայն հայրերի ու ավագ յեղբայրների պատմութներից։

Այդ ընթերցողներին պետք է ցույց տալ անցած պատերազմի իսկական գեաքը, նրանց առաջ բաց անել այդ պատերազմի ժագան գաղտնիքը և իսկական նպատակները։ Գետք և նկա-

շագրել տալ այդ պատերազմում գործադրված պայքարի բոլոր յեղանակների ճշմարիտ պատկերը և ծանոթացնել տեխնիկական այն բոլոր միջոցներին, վոր այնքան լայնորեն գործադրում ենին բոլոր պատերազմող պետությունները:

Սույն գիրքը, վորի նախարանն են հանդիսանում այս առ զերը, առաջինն ե 1914—1918 թ. թ. պատերազմի մասին, վոր նպատակ ունի ընթերցողին ծանոթացնել իմպերիալիստական պատերազմիների եյությանը՝ պատմելով անցած պատերազմի կոնկրետ դեպքերի մասին և այն մասին, թե կտպիտալիստական յերկրներն ինչ ձեռքով են նախապատրաստվում նոր պատերազմի:

Այս գրքից ընթերցողը կիմանա, թե Բնչակես են սկիզբ առնում իմպերիալիստական պատերազմիները, Բնչ նպատակներ են հետապնդում և առաջին ներթին ժամ դեմ եռ ուղղված պատրաստվող համաշխարհային պատերազմի սուր ծայրը:

Այս գրքից ընթերցողը կիմանա ցամաքի վրա, ծովում է սղում մղվող պայքարի այն յեղանակները, վոր առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ գործադրում եյին կտպիտալիստական յերկրներն ու նրանց բանակները, և վորոնք զորագրվելու յեն նաև ապագա պատերազմի ժամանակ:

Իմանաւ, թե թշնամին Բնչակես ե գործելու, պայքարի Բնչ-պիսի ձեռքը ու միջոցներ ե գործադրելու նա ապագա պատերազմում և պատրաստ լինել նրանց դեմ—այդ նշանակում ե՝ կիսով չափ դյուրացնել թշնամուն ջախջախելու, նրան «ցիչ արյան» վեռվ վոչնչացնելու խնդիրը:

Այս գիրքն ընթերցողին կողնի պատկերացնել ապագա պատերազմը, կինը պարի, թե մեզանից ամեն մեկն Բնչ պետք ե անի, վորպեսողի ամրապնդի մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը, վորպեսողի պատուաստ լինի խորտակիչ հարվածով պատասխանելու, թշնամու հարվածին:

Գնդապետ Ի. ԶՈՒՐԵԲՅԱՆ

Խնդիր Տաղմաշեցի անվան լենինի շքանշանիք առաջմասաբարեկան ակադեմիա



Ա Ն Վ Ե Լ Ի Պ Ր Ե Լ Ի



## ԶՐՈՒՅՑ ՎԵՐԴԵՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Այս պատահել և քսաներկու տարի առաջ, համաշխարհային պատմերազմի ժամանակի:

Արդյուն յերկար ամիսներ պատերազմ եր, զատ արյունահեղ ժարաներ եյին յեղեւ, բայց և այնպես հակառակորդներից և վոչ մեկը դեռ վճռական հաջողության չեր հասել Գերմանիայի զինվորները դառն հեգնանքով եյին վերհիշուած այն խոսքերը, վոր տուել եր վելինելմ Ա պատերազմի տառջին որերին: «Զինվորներ, — բացականչել եր կայսրը և ցուց տվել իր պալատի առջևի ծառերը, — այս տերենները դեռ չգեղնած ու չթափված՝ դուք տուն կվերագանաք հաղթանակով»: Դրանից հետո արդեն վոչ թե մի, այլ յերկու անգամ դեղնել ու թափվել եյին այդ տերենները, նորիցն անել, բայց հաղթանակը դեռ ելի հեռու յեր առաջվա նման:

Ցեզ ահա, 1915 թվի վերջին, գերմանական շտաբի գաղտնիք խորհրդակցությունը վորոշեց ուժերը կենտրոնացնել վերդինի տմրոցի դեմ, այդտեղ հակառակորդին վճռական հարված հասցնել:

Ցեզ նույնիսկ մենք չկարողանանք Վերդինը միանգումից վերցնելու — ասում եր այդ խորհրդակցությանը գերմանական գըշթավոր հրամանատարը, — ապա գոյն ֆրանսիական բանակից դուրս կկորզենք նրա բոլոր ուժերը: Մենք կշգձեցնենք նրան անընդհատ մարտերով, կազանք նրան ինչպես ջրաղացում:

Գերմանական հրամանատարությունն իզուր չեր վերդինն ընտրել Այդ մըրոցը, վոր ամենաուժեղն և աշխարհում, պաշտպանում եր և՛ գեպի Ֆրանսիայի խորքերը, և՛ գեպի Փարիզ՝ յերկրի մայրաքաղաքը տանող ճանապարհները:

1916 թվի փետրվարի 21-ին, տապատյան վաղ Վերդինի տոկ հանկարծ վորոտացին թնդանոթները — հազար յերկու հարյուր քսանեինք գերմանական թնդանոթներ:

Ցերեք հարյուր հազար գերմանական զինվորներ սկսեցին պահու պատրաստվեր:

Իննը ժամ շարունակվեց գնդակոծումը, ողբերյունն ու սու-  
լոցը ըստնել եր Վերդենը: Ցեղ հանկարծ ասեն ինչ լուեց: Տիւեց  
խաղաղություն: Գերմանական դինվորները զբո՞ի Նեսվեցին:  
Վերդենյան դրադացը պատվել սկսեց:

Հինգ որ անընդհատ գերմանական զինվորները հարձակում ենին գործում. Հինգ որ անընդհատ վիլհելմ Ռեմսվորդին՝ թագավորության պահական գործում է առաջատար դեր:



ժառանգը զերմանու-  
կան լուսագույն դըն-  
դերը քշում եր վեր-  
դենի վրա Մեկը  
մյուսէ հատեից, ինչ-  
պես ալիքներ, գարնը-  
վում եյին նրանք ամ-  
բոցի առաջին դեկ  
ամրություններին,  
շարժվում եյին գեղիք  
թուլածոն ու դեպի վա-  
և դարնվելով նրանց՝  
մշշում:

Տասնյակ ան-  
գամիներ հետ եյին  
շպրտվում դեղմանա-  
կան ջոկատները՝ բազ-  
մաթիվ սպանվածներ  
թողնելով տեղում. Ու-  
նորից եյին նետվում  
դեպի առաջ՝ գրավելով  
անտառներ ու ձորեր.

Ամեն անդամ ա-  
զելի ու ավելի համա-  
կանչ

မြန်မာစု အပေါ် အမြတ်ဆင့် ဖြစ်ပေးလိုက်သည်။

Ները և գերմանական զորքերն ավելի ուժ  
ամրություններին:

Վերջապես հինգէրորդ որը գերմանացիները բոլորովին մատկան Դուռը ունին:

Այդ որը վաղ առավոտից մոլեխում եր ձյունահողմը։ Աւ-  
բողջ Վերդենը պարուքիել եր միապաղաղ սպիտակ բարուքավ։  
Ֆըսնսիական հրամանատարությունն իզուք եր փորձում կապվել

Դուռմանի հետ. աեղացող թանձը ձյան միջով լույսի աղջա-  
շանները չեյին յերևում, իսկ հեռագրալարերն ու հեռախոսալա-  
րերը կորմի եյին գերմանական ռումբերից:

Ամբողջ որը վոչ մի բան հայտնի չեղավ Դուռմանի պիճակի  
մասին: Յերեկոն վրա հասավ: Դուռմանից զեր վոչ մի լուր չկար:

Ուշ գիշերին վաղելով ֆրանսիական շտարը մտավ ամբող-  
ջովին ձնակոլու մի վիրավոր զինվոր: Նա պատմեց, վոր սարսա-  
փելի դժբախտություն և պատահել—գերմանացիները գրավել են  
Դուռմանը:

Լուսագեմին ֆրանսիական հրամանատարությունը մի ուժեղ  
լոկատ ուղարկեց Դուռմանը հետ վերցնելու:

Բայց այդ ջոկատը տեղ չհասավ: Նա հետ ել չվերադարձավ:  
ճանապարհին ընկավ գերմանական զնդացիրների կրակի տակը

ամբողջովին հնձվեց, վոչնչացվեց մինչև վերջին մարդը:  
Դրանով վերջանում և վերդենյան ճակատամրատի առաջին  
մասը. գերմանական բանակը հաղթող դուրս յեկավ—գրավեց  
Դուռման ամբությունը, այժմ նրան մոռմ եր վերցնել Վո ամ-  
բությունը:

Փետրվարի 28-ին ինչ-վոր տեղից Վո ամրոցին՝ մոռեցավ  
ֆրանսիական համազգեստով զինվորների մի բազմություն: Վոչ  
վոք նրանց վրա ուշադրություն չդարձրեց. դա սովորական բան  
եր՝ առաջավոր գծից զինվորները հաճուխ եյին մոռմում ամրոց,  
հանգստանալու: Միայն մի ծեր զինվոր՝ ամրոցի լամպավառը ձայն  
ովեց յեկավորներին: Բայց նրանք վոչինչ չպատասխաննեցին՝ մե-  
կը մյուսի հստեկից սկսեցին լցվել ամրոցն այն անցքերով, վոր  
առմբերը բացել եյին պատերում: Լամպավառն սկսեց զբաղվել  
իր զործով: Յեկ հանկարծ—կամ, գուցե նրան միայն այդպես-  
թվաց—նրա ականջին զերմաներեն մի խոսք հասավ: Առանց  
զլուխը հետ զարձնելու՝ լամպավառը լսողությունը սրեց: Այժ,  
ֆրանսիական համազգեստ հազած այդ զինվորները իրար հետ  
իսուսմ եյին գերմաներեն:

Կամացուկ, վորպեսզի իր վրա ուշադրություն չզրավի, վեր-  
կացավ լամպավառն իր տեղից և մոռեցավ ողբանշանային  
պատմին:

Մի ըսողեյից հետո ամբողջ ամրոցում բոցավառիցին

պահանջման լամզիկները, և նշեց ստգնագույնը զանգը — թշնամին  
ամբողջ ներսումն է:

Երջապատեցին ծպաված գերմանացիներին ու աեղն ու աե-  
ղը գնդակահարեցին:

Արքամանկությունը չանցավ: Նշանակում և՝ ամրոցը պետք  
է աւելով վերցնել: Դանդաղորեն, կախվերով սկսեցին առաջ շարժ-  
վել գերմանական զորքերը դեպի Վո ամբողջը, մեար առ մեար  
գրավելով ֆրանսիական խրամատները:

Բայց գերմանական թագաժառանգը ել չեր կարողանում  
է ամբողջիւ. նա առաջուց արդեն վելինելմ Ռից շնորհավորական  
հետազիր եր ստացել և այժմ կամենում եր, վորքան կարելի յե,  
շուտ պատասխանել այդ հետազրին՝ վերդենի գրավումով: Զորո  
անգամ նա իր զորքերը զբոհի նետեց, Յեվ չորս անգամն ել ֆրան-  
սիացիները հետ մղեցին զբոհը: Գերմանական բանտկը թագաժա-  
ռանգի շուապողականության պատճառով հաղարավոր մարդիկ  
կորցրեց:

Այն ժամանակ գերմանական հրամանատարությունը վորո-  
շեց նոր գրոհը հետաձգել, մինչև վոր զորքերը մի լավ ամրաց-  
նեն իրենց զրաված դիրքերը:

Դա տևեց յերկուսուկես ամիս: Որը որին, անընդհատ գըն-  
դպակության տակ գերմանացիները գետնի տակ նոր խրամա-  
ներ եյին պատրաստում: Կարծեն թե անխոնչ մըջյուններն  
— յստեղէ հսկայական մըջնանոց են կառուցում, անցուղորձ անում  
նեղլիկ անցքերով ու ծուռումուռ փողոցներով, ինչ-վոր քաշում-  
առնում, շուռ ու մօւռ տալիս, ամրացնում:

Իսկ մինչ գերմանացիները գետնի տակով առաջ եյին շարժ-  
վում գեղի վե ամրոցը, ֆրանսիացիները, վոչ մի ըստի չկորց-  
նելով, ամրացնում եյին բերդը և նրա կազեմատներում<sup>1)</sup> գար-  
սաւ եյին անհրաժեշտ կենսամթերքը:

Որ-ավուր ֆրանսիայի զինվորները Վո ամրոցն եյին փո-  
խակառում ձեռքի նորակներ, փամփուշաներ, պահածոյի բանկա-  
ներ, խմելու ջրով լիքը տականեր: Հակերը շալակած, նրանց  
անցնում եյին անտառակներով ու ձորերով և մանում աւրոց,  
թագնվելով թշնամու կրակոցներից: Ահա և վերջին ձորը այս-  
ուեկ պետք և հանգստանալ ամենավատանգավոր վազքից առաջ,  
Դրանից դենը բոլորովին դատարկ տեղ և, մի քաց հովիտ այն

1) Կազեմատ — ամրոցների պահանջների առէ կառուցած կամորտկառ  
շենք:

գետք և վաղեկ անցնել զերմանացիների կրտկոցների ընդհատում-  
ների միջացին։ Հենց վոր թնդում և կրտկոցը, զինվորները բե-  
ներով նետվում են առաջ։ Ով ժամանակին տեղ հասնել չի կա-  
րողանում, նա կորած ե...

Յերկու հակառակորդն ել այսպիս եյին պատրաստվում գո-  
տեմաբարի։ Յերկուսն եւ, նախառենելով վճռուկան մարտը, ու-  
խառում եյին բոլոր ուժերը քաշել դեպի Վերդեն։



Մինչև մեղամ Փարէդէ ովարուաները մորիէ զայտոյէ երի և յնթաք-  
զած զորքեց սկզբանական համար։

Պերմանացիների համար, ինարկե, զժվար չեր նորանոր  
ուժեր փոխադրել—յերկաթուղիները նըանց ձեռքումն եյին։  
Բայց ինչ անեյին Փրանսիացիները, զեպի Վերդեն տանող յեր-  
կու յերկաթուղաղձերն ել կորել եր զերմանական բանակը։

Հաղորդակցության միայն մի միջոց եր Թում—ինուպին։

Այդ որերին խնուղին նոր անուն ստացավ—«Սըբազան ճանապարհ»։ Վոչ մի հետիոտն, վոչ մի ձիասայլակ չեր համարձակվում յերևալ այդ ճանապարհին։ Անվերջ ժապավենին նման յերեց շարքով շարժվում եյին այդ խճուղով բեռնատար ավտոմոբիլները։ Ամեն մի հինգ վայրելյանում մի բեռնատար Նույնիսէ Փարիզի ավտոբուսները մորիլիզացիայի եյին յենթարկված դորք փոխադրելու համար։

Հազար հինգհարյուր բանվոր ու գիշեր նորոգում եյին խճուղին, վորպեսզի շարժումը և վոչ մի լուսե կանգ չառնի։

Յերկու ըանակներն ել ուժեր եյին կուտակում, յերկուսն ել մարտի եյին պատրաստվում։ Առաջինը գերմանացիներն ավարտեցին նախապատրաստությունները, հունիսի սկզբին նըանց նորէց հարձակման անցան։

Վո ամրոցի տոջեի հողն արդեն ամբողջովին կտրտված եր գերմանական խրամատների ցանցով, ինչպես թըթուրի կըծուած տերև։

Հազիվ եր լուսացել, յերբ գերմանացիներն այդ խրամատներով գըոհի անցան ու ներխուժեցին Վու Յերեկոյան զեմ նըանց համարյա ամբողջ ամրոցն արդեն գրավել եյին։ Սակայն Փրանսիական կայազորը դեռ շարունակում եր գիմադրել Նա Թագնվել եր ամրոցի ամենախոր տեղը, քաշվել նըա հսկայական նկուղները և ամրացել այնտեղ։

Յեզ ահա, Վո ամրոցը միաժամանակ ունեցավ յերկու կայազոր, յերկու պարետ—գերմանականը՝ ամրոցի վերին հարկում, ֆրանսիականը՝ ներքնում, գետնի տակ, ուղիղ գերմանառ կանի տակ, Բավական եր միայն, վոր ֆրանսիական զինվորը գլուխը գուրս հաներ գետնի տակից, իսկույն վերեից ձեռքի նըանակը նըա վրա կթռչեր, Բայց գերմանացիների համար ել շատ գժվար եր ամրոցի խորքերն անցնել նըա ծուռ ու մութ անցքերով, Թրանսիացիներն այստեղ հողով լցված տոպրակներ եյին կիտել և նըանց հետեւ գնդացիրներ դրել։

Անցավ յերեք որ. Փրանսիացիներն այլաւ խմելու ջուր չուանեյին։ Ամրոցը պաշտպան եր ամեն կողմից Ռադիոն վաղուց այլես չեր դորժում։ Հեռախոսային հաղորդալարերը կտրտված եյին,

անողական աղջանշանները ծխի ու փողու պատճառվ չեյին յերեսում:

Բայց թնջղես իմաց տալ յուրայիններին, վոր ամբողի խորքում պայքարը շարունակվում է, վոր ֆրանսիական կայտողը գեռն իր ձեռքում և պահում ամբողի նկուղները

Ի՞նչպես հաղորդել Նրանց, վոր գետնի տակ մի բուռը մարդիկ ոզնության են սպասում իրենց բանակից:

Վահից վոչ հեռու գոնվոզ Սուլվիլ ամբույթում առավոտյան ցած իջավ մի աղավնիւ Նրա վոտքից կապված եր ալյումինե մի փոքրիկ խողովակ, խողովակում բարակ թղթի վրա գրված—գրված եր վո ամբողի պարետի կարճ զեկուցադիրը—«Եարունակում ենց դիմանալը Ցենթրկովում ենք զազի, կրակի ու ծխի շատ վտանգավոր գրոհի, Անհրաժեշտ ե, վորքան կարելի յե շուտ, ոզնության հասնել. սա իմ վերջին աղավնին եւ»:

Սուլվիլց պատասխանեցին տեսական աղջանշաններով—«Արիացնք, շուտով զրոհի կանցնենք»:

Ֆրանսիական տանջված կայազորը ժամառժամ խոստացված ոզնությանն եր սպասում:

Անցնում ե մի որո Անցնում ե յերկրորդը, Դրոհը զեռ չկա:

Արդեն յերկու որ եր, վոր Վոի ստորերկրյա նկուղներում նոտած ֆրանսիական զինվորները վոչ մի կաթիլ ջուր չունեյին Նրանք լիզում եյին նկուղի բետանե պատերը—սառը, խոնավությունից թաց պատերը Շնչելը համարյա անհնար եր—պայթող ռումբերը թունավորում ելին ոգը:

Իսկ գերմանական կայազորն այդ ժամանակ անխոնջ աշխատում եր վերեսում: Նա զեպի ներքն ճանապարհներ եր անցկացնում, կը ծում—խրվում եր ամբության ել ավելի խորքերը:

Պայթյունները հաջորդում եյին մեկը մյուսին—այդ զերմանացիներն եյին քարութանդ անում հողաթմբերը, մաքում զեպի նկուղները տանող ճանապարհները:

Բայց ֆրանսիական կայազորն անձնատուր չեր լինում. Նո վեռևս ոզնության հույս ուներ:


Ցեզ ահա ոզնությունը կարծես վրա հասավ.—ֆրանսիական հրեանին սկսեց Վոի գնդակոծումը: Նշանակում ե, զրոհ և պատրաստվում: Բայց ֆրանսիական հրեանավորները խփում են չափազանց փոքր կալիբրի արկերով: Այդպիսի արկերով ամբողի վեց մետր հաստության պատերը ծակել չի լինի:

Այն ժամանակ ֆրանսիական պարետն սպասպործեց ամբու

Եթ եր ձեռքում մաստ միակ աշտարակը, վորովեսպի հրետանա-  
գորներին զգուշացնի իրենց սխալի մասին:

Բայց զինվորը դեռ նոր եր սկսել աշտարակից ոպտիկական-  
ազգանշաններ տալ, յերբ ոռումբի բնկորը ներս թռավ աշտարա-  
կի անցքից ու փշրեց ոպտիկական գործիքը, Ազգանշաններ տալն  
ոյլես անհնար յեղավ:

Այժմ ամրոցի նկուզներում փակված Փրանսիական կոյտ-  
գորին միայն մի բան եր մոռմ—համբերել Սովորել, թե ինչո՞ւ  
կերպանալու սկսված զբո՞ւը:



Հրային զբու.

Դիշերված ժամը 2-ին, Վո ամրոցից դեպի հարավ, այսուղ,  
ուր տեղավորված եյին Փրանսիական զորքերը, հրթիռների պայ-  
ծառ մի փոքր գալուզելով յերկինք սլացավ. այդ զբուն սկակու-  
նականշանն եր, Պայթյունների փայլի ժամանակ ամրոցի աշ-  
տարակից յերեսում եր, թե ինչպես Փրանսիական ջոկատները  
փորձում են ապատել—անցնել զեպի Վո, ինչպես նրանք ընկնառ-  
են խաչաձև զնդակում տակ, ինչպես են զինվորները թագնը-  
վում ոռումբելի փորած ձագարանման փոսերում Յերեսում եր, թե  
ինչպես զերմանացիները ցըշապառում են նրանց, զնդականարան,  
գերի վերցնում:

Դրոհը շնաջողվեց, Այժմ արդեն իզուր եր ոգնություն սպա-  
ռել Վերջին հույսն ել չըացավ:

Այսուամենայնիվ Վոկի Փրանսիական կայտղորը չեր ցան-  
կանում անձնատուք լինել Նա մինչև վերջը մաց իր պատում:

Այժմ արդեն ամբողջ ներքնանարկը չեր Փրանսիացիների  
ձեռքին, այլ նրա մի մասը միայն Նույնիսկ վերավորների հա-  
մար մի կարի ջուր ձեռք բերելն անհնար եր: Դարշահուառ-  
թյունը, քայլայման ծանր գարշահուառթյունը սոզում եր դեպի  
ըսլոր նկուղները. Փրանսիացիներն իրենց մեռելներին թաղերու-  
աեղ չունեցին: Իզուր եյին նրանք փորձում պատերի մեջ փո-  
մար փորել, վորպեսզի գեթ այնտեղ թաղեցին մեռելներին. պատն  
ամուր եր, չեր քաղցիում:

Իսկ պայմբյուններն ավելի ու ավելի մատիկ եյին զզրգում.  
այդ գերմանացիներն եյին պայմենաւմ վերջին նողաթմբերը...


Հունիսի յոթի գիշերը Փրանսիական կայտղորը փորձեց մի  
անգամ ել ազգանշաններ տալ ջարդված ոպտիկական դորձիքով:  
Այնքան թույլ եյին այդ ազգանշանները, վոր Սուվիլում նրանց  
վարաւ լեյին կարողանում Ամբողջ հազորդագրությունից միայն  
յերկու խոսք հաջողվեց կարդալ յերկու խոսք—... մի լքեց...  
Լուսաղեմին գերմանացիները քարուքանդ արին վերջին  
նողաթումը և ներխուժեցին նկուղները. Վո ամբոցն ամբողջո-  
վին անցավ գերմանական բանակի ձեռքը:

Այսպես վերջացավ մարտի յերկորդ մասը—գերմանացինե-  
րը հաղթեցին:

Նրանց գրավեցին բերդի ամենաուժեղ յերկու ամբություններն ել—Դուռմոնն ու Վոն: Մինչև Վերդենը շատ քիչ եր մա-  
սել—ընդամենը չորսուկես կիլոմետր: Նորից մի փոքր շանգ: և  
ինքը բերդը, հենց Վերդենը կզբավվի:

Սկսվեց Վերդենյան մարտի վերջին մասը:

Դիտեք արդյոք դուք, թե հիվանդուսցում ինչպես են  
արյուն սի մարդու յերակից մյուսի յերակը ներարկում: Առօպավ-  
եկի մի ծայրը դրված և արյուն տվողի յերակի մեջ, իսկ մյուսը՝  
արյուն ընդունողի: Անընդհատ շիթով հոսում և արյունը մի մար-  
դուց մյուսի մեջ, և նա, ով տալիս և արյունը, աստիճանաբար  
թուլանում ե...



Ավտոմեքենային խճուղին՝ «Սրբազն ճանապարհը» հիշեց-  
նում և արյուն փոխանցելու այդ խողովակը—նրա մի ծայրը  
գրված և Ֆրանսիայի սրտում—Փարիզում, մյուս ծայրը՝ Վեր-  
պենում:

Անվերջ, անընդհատ ու միակերպ ժապավենի նման ոլո-  
նում են խճուղով ավտոմեքենաները: Վերգենից գեռ տասնյակ  
կիլոմետրների վրա զինվորները լսում են տարորինակ խուէ  
բվվաց: Դա կոհիմների վորոտն եւ Հողմաղացի թևերի նման յերեսում  
ու չըտնում են զերծանական ու ֆրանսիական գնդերը՝ հերթա-  
փոխելով իրար: Յեզ այդ բոլորը միշտ միենույն տեղում: Տասնյակ  
անգամներ գերմանացիները խլում են հակառակորդից ամրություն-  
ների հետեւմ գոնվող միենույն փոքրիկ անտառակը ու տասնյակ  
անգամներ կրկին հետ են տալիս այն ֆրանսիացիներին: Գեր-  
մանական բանակն այլևս ուժեր չունի նա կարծես ջատավել և  
թուլունի և Վոխ մարտերում: Բայց թազաժառանգը, վոր իր իսկ  
զինվորների կողմից դաշին անունն եր ստացել, նորից և գրուի  
քում դորքերին: Յեզ ահա, անտառակը կրկին գրաված ու  
կրկին հետ տրված: Անվերջ պատվում եւ զերգենյան հողմաղացը:

Այդպիս շարունակվեց ամբողջ չորս ամիս: Յեզ վերջապես  
վրա հասավ վախճանը:

Ֆրանսիացիների վճռական հարձակումն սկսվեց հոկտեմբերի  
19-ին: Ֆրանսիական ծանր հրետանին սկսեց ամբակում Դուռ-  
մանը:


Միսի վարագույրը վոչ մի բոպե չեր ցրվում Դուռմանի  
վրայից: Գիշեր ցերեկ աղջամուռջի մեջ եր նա: Ծնցվում եր ամ-  
բոցը մինչև իր ամենախոր նկուղները, կարենս յերկրաշարժից:  
Մասի մացցորդները շարունակ հանդչում երին նախասենյակներում  
կաշեմատների կամացների տակ ցեմենտի փոշին ամպերի նման  
քուլա բոււա բարձրանում եր: Նա սողում եր նախասենյակները,  
նստում գենքերի ու պատերի վրա:

Վեց որ անընդհատ ծանր հրետանին քարուքանդ եր անում  
Դուռմանը:

Այդ վեց որերի ընթացքում Դուռմանի առջեի հողն այնպես  
եր կերպարանափոխվել, վոր հաղար տարվա ընթացքում ել չեր  
կարող այդպիս փոփոխվել: Թիչ տառջ այստեղ կային անտառներ,  
ցլուրներ, մարգագետիններ, շինություններ, բազմաթիվ գյուղեր:  
Ազմ այդ բոլորի փոխարեն—ամբողջովին մերկ, սև, փորփոքա-

անտպատ եւ միջու և ճիշտ այդպես ե յերեռում լուսինը իր մեռած խառնարաններով:

Յոթերորդ որը կոչի մեջ մտան Գրանախացիների բերտե արտակարգ ժանրության թնդանոթները: Այնքան թանգ եյին նույնում այս թնդանոթները, վոր Գրանախական ամբողջ բանակում այս տեսակ թնդանոթների թիվը հազիլ տասի յեր հասնում: Բայց զբա գործարեն նրանցից ամեն մեկը հանդային կործանարար ուժ ուներ: Կեսորին այս թնդանոթներն սկսեցին ամբակածել Դաւամոնը:



Գալիս և մասուացիած հրետանին:

Ավագով լոված ծանր տոպորակները, վորոնցով խցկած եյին ամրոցի պատուհանները, առաջին իսկ կրակոցից դուրս եյին թռչում այստեղից, ինչպես խցանը շին բերանից: Ոգի ճնշումը ժինսահան եր անում յերկաթյա դռները: Պատերից սկսեցին քարերի բեկորներ թափվեր Մետաղի կտորուանքը բվկոցով թռչում — անցնում եյին նախասենյ սկներով ու յելարաններով: Ամբողջ ամբոցը նանում եր ու փշրվում:

Առաջին ոռմբն ընկավ հիվանդանոց ու կայծակի վորոտով պայթեց այստեղ: Իսկական եծմբանուա փշեց, շաղվեց կարմր-

տուքը վերևում Յերրորդ առամբը խորառակեց գորանոցը, հինգերուցը՝ ամբողի գլխավոր մուտքն ավերեց. Գերմանական զինվորները կծկված նստել եյին կաղմատների անկյուններում. Նրանց գեները փողոց գորշացել եյին. Աչքերը մարում եյին անջնությունից. Ամեն մի նոր հարվածի ժամանակ նրանց միոյն առանձին եյին ել ավելի ուժով սղում իրար:

Վեցերորդ առամբն ընկապէ կազեմատ. Այնուղ փամփուշտներ ային պահպատմ. Հրդեն սկսվեց:

Բղուր եյին մարդիկ գես ու գեն նետառում ջանալով հանգչանել հրդեհը. Զուրը հերիք չեր անում. Սկսեցին գործի դնել նույնիսկ բարձնների զելտերաջուրը. Բայց վոշինչ չեր ոգնում, կրակն ու ծուխը հաղողետե թափանցում եյին կազեմատների խորքերը. Հըացանի փամփուշտների պաշարները կաղ-կապ պայթում եյին հարճացաւով:

Ամբողջ գիշերը ըսցերը չեյին հանդարտվում, մի նկատից մյուսն անցնելով, ամբողջ գիշերը դադարում եր հրդեհը գետնի առկ:

Առավոտյան թանձը մառախուղի միջով տօրոցից շարժմաց յերկար մի թափոր. Մարդիկ գնում եյին զույգերով. Յուրաքանչուր զույզը տանում եր մի-մի պատզարակի, իսկ պատզու մի վրա պառկած վիրավոր. Զինվորները սայթագում եյին, նստած զետնին՝ շահնչ քաշելու Նրանց սիրտը խառնում եր Նրանք շըմած եյին պայթյաններից, գաղերից թռւնվարված եյին, հրդեհը բռցերից այրված. Գերմանական կայազրն այսպես թողեց ամբոցը.

Բայց Դուռմանի պատմությունը դրանով չվերջացավ. Նրանից հետո, յերբ արդեն կայադորը հեռացել եր ամբոցից, ոյնունզ թափառում եյին զերմանական միքանի տառնյակ զինվորներ. պրանք իրենց մասիրից հետ մեցած դյնվորներ եյին, վորոնց մոլորվէ եյին մառախուղի մեջ. Նրանց ըլլոր կապերը կարված եյին իրենց բանակից, ուստի նրանցից մեկն իրեն հայտարարեց պարետ ու սկսեց պատրաստություններ անանել ամայացած ամբոցը պաշտղանելու. համար. Տասներիննը մարդ տեղավորվեցին մռւտքերի մաս, իսկ քսաներորդն սկսեց ռաշ-ողբեր ուղարկել սպնություն խնդրելով. Վաշ վոք չեր պատասխանում է վերջին նրա հաղորդումն եր—«Թույլ կայազորը պահում եւ ամբոցը՝ մինչև սպնական ռւժերի ժամանումը»:

Ինչպես վոչնչացան այս մարդիկը, վոչ վոքի հայտնի չե-

Հենց նույն սրբ Փրանսիական զինվորները Դաւաճոնը վերց-  
տին, դռառով գրավեցին նաև Վո ամրոցը:

Դրանով վերջանում և վերդինյան մարտի յերրորդ մայը,  
նո շարունակվեց ութ ամիսու Այդուն ժամանակի ընթացքում  
արանվեցին հինգ մարտու հազար մարդ:

Այդպես և համաշխարհային պատերազմի բաղմաթիվ մար-  
մբից մեկի՝ Վերջենյան մարտի պառակտունը:

## ԳԻՄՆԱԶԻԱՏ ՊՐԻՆՑԻՊԸ

Խչմւ յեն պատերազմինը լինում: Խոչպես և խչմւ համար  
ակազից 1914 թվի համախարհային պատերազմը:

1914 թվի հունիսի 28 ին սերբիացի գիմնադիստ Գավրիէ  
Պրինցիպը ատրանակից կրակեց ավստրիական կայսրի յեղբոր  
ադայի երցւերցող Ֆրանց-Յուղինանդի վրա: Թնդակը ծակեց  
ելցւերցողի քներակը, և նա ընկավ մեռած:

Այս զնդակից ել—այսպես և դրված պատրիո-  
թյան գասագրքում—առև ջանավ ևս մոշխարհային պատերազ-  
մը: պատրիացիներն այս սպածությունից դայրացած՝ պատե-  
րազմի դուրս յեկան սերբիայի դեմ, բայց ոռուները պաշտպան  
կանգնեցին սերբերին: Այն ժամանակ, վորոպեսդի ավստրիացի-  
ներին ոգնեն, գերմանացիները պատերազմ հայտարարեցին ոռու-  
ներին: այս անգամ ել Փրանսիացիներն ոգնության հասան  
ոռուներին: իսկ հետո ել պատերազմին խառնվեցին անզիւցի-  
ները, բելգիացիները, թուրքները, ճականացիները, իտալացիները,  
ամերիկացիներն ու այլ ժողովուրդներ...

Դուրս և գալիս, վոր միայն մի կրտեսցը բոլոր ժողովուրդ-  
ներին ստիպեց պատերազմ սկսել օսմանասուն ժիյունն մարդ  
կովի զուրբ յեկան ավստրիական երցւերցողի համար, վորին,  
միանայն և, ել չոր կարելի կենդանացնել:

Երեց այդպես և յեղել միշտ և արդյոք, վոր համախար-  
հային պատերազմն առաջ ցըրել և սերբիացի զիմնապիստը:

Գավրիէ Պրինցիպը գեռ ծնված ել չեր, նա գեռ այն ժա-  
մանակ աշխարհ և չեր յեկեւ յերր գերմանական զիլիավոր շտա-  
բը արգեն Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ պատերազմելու  
պլան եր կազմել:

Գավրիլ Պրինցիպը դեռ խոսել եւ չդիտեր, յերբ Ֆրանսիան  
և Ռուսաստանը դաշն եյին կտակել ապագա պատերազմի. զեսու-  
քում էրար ոգնելու մասին:

Գավրիլ Պրինցիպը դեռ ատրճանակ կրտեկել չեր սովորեց  
յերբ Անդրիան գաղտնաբար Ֆրանսիային աջակցություն եր խոս-  
ացել ապագա պատերազմի դեպքում:

Յեզ, վերջապես, սպանությունից հետո ձերբակալված Գավ-  
րիլ Պրինցիպը Հարցաքննության ժամանակ իր ցուցմունքները  
գեր չեր կարողացել տալ, յերբ ավստրիական լրազրում արգելված  
առված եր. «Այս մուսենաց մեզ համար բացարձակ բարենպատա-  
կ. յեթե մենք ալժմ ել վարանենք պատերազմ սկսելու, ապա  
հասաւապես ստիպված կլինենք յուրկու կամ յերեք տարուց հե-  
տո պատերազմել, և վատթարություն պայմաններում»:

Վհձ Գավրիլ Պրինցիպի պատճառով չեր, վոր բռնկվեց պա-  
տերազմը. Առանց նրան ել պատերազմը կսկսվեր. Մի տարի անց,  
ևնաց սերբիական Կառավարության հրամանով, Պրինցիպին դըն-  
դականաբեցին. Յեզ վոչ վոք անգամ չնկատեց, վոր ավտորիստ-  
կան երցիւրոգին սպանողն այլևս գոյություն չունի. վոչ վոք  
ել գրա հետեւանքով պատերազմը չգաղարեցրեց:

Սերբիացի զիմանապիստի կրակոցը ծառայեց միայն և միայն  
վորպես առիթ, վորպեսզի պատերազմական գործողություններն  
ավելի վաղ սկսեն, սակայն համաշխարհային պատերազմի պատ-  
ճառը նա չեր:

Բայց ինչմեռ ավտորիստկան և զերմանական մինիստրներն  
այնպիս համառությամբ պնդում եյին, թե պատերազմի պատճառն  
այդ չարագուշակ կրտեկոցն եւ ինչմեռ համար եյին հավատացնում  
նրանք, վոր իրենք բռլորս վիճն ել ցանկություն չունեյին պատերազ-  
մելու, վոր իրենց հարկադրել են այդ բանն անելու. Յեզ ինչմեռ  
այլ պիտությունների մինիստրները նույնպես պատերազմի ծագ-  
ման մասին զանազան պատրվակներ եյին վնտառում, հնարովի-  
որդարացումներ:

Վորովկետն նրանք բոլորը զիտեյին, վոր ժողովուրդը դեռ  
և պատերազմին:

ԶԵ վոր, հենց այդ մինուույն որերում զերմանական բան-  
գորները զրում եյին իրենց կոչում. «Մենք զեմ ենք պատերազ-  
մին. կեցցեմ ժողովուրդների յեղքայրությունը»: Յեզ հետ այդ-  
ժամանակ Գետերբուրգում, Փարիզում, Լոնդոնում աեղի ունե-  
ցող ցույցերը պահանջում եյին խողազության պահպանումը:

Ժողովուրդը չեր ցանկանում պատերազմնի, Վորովեսպի հնացավոր լիներ պատերազմ սկսել, պետք եր ժողովրդին խարեր Այդ պատճառով բոլոր կառավարություններն ել շատ խնամքով թաղցնում եյին այն, վոր իրենց կողմից պատերազմի հարցը վազուց արգելն պատրաստված ու վորոշված բան է, դրա համար ել նրանք հենց պատերազմ սկսելու տակիններ եյին փընտռում:

Իսկ յերբ նրանց չեր հաջողվում հարմար տակիթ գտնել, այն ժամանակ նրանք առանց այլևայլության ուղղակի հնարում եյին:

1914 թվի ողոտառոսի մեկին գերմանական կառավարությունը մի հազորդադրություն բաց թողեց. «Ֆրանսիացիներն ոմքակոծում են գերմանական Նյուրենբերգ քաղաքը»: Այս ծանուցումից անմիջապես հետո Գերմանիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային. Իսկ կես տարուց հետո ինքը՝ գերմանական կառավարությունը խոստովանեց, վոր Նյուրենբերգ քաղաքի ոմքակոծում իրոք տեղի չի ունեցել—իբր թե կատարվել ե հեռազրական սխալ, վորը և գերմանական մինիստրներին մոլորության մնջ ե զցել: Այնուամենայնիվ գերմանական կառավարությունը Ֆրանսիայի դեմ պատերազմը շղադարեցրեց:

Այդպես մի շաբաթվա ընթացքում համարյա բոլոր մեծ ժողովուրդները ներգրավեցին պատերազմի մեջ: Իսկ նրանցից հետո հերթը հասավ և փոքր ժողովուրդներին:

Հենց սկզբից Հունաստանը հայտարարեց, թե ինքը պատերազմին չի խառնվելու, չեղոք և Աթարու Սակայն նրան թույլ շտվին, վոր յերկար ժամանակ դուրս մնա պատերազմից:

1915 թվի հունվարին անդիտական մինիստր Գրեյը առաջարկեց Հունաստանին՝ Գերմանիայի և Ալյաստիալի դեմ դուրս դաւ Դրա փոխարեն, վորպես վարձատրություն, Գրեյը խոստացավ հաղթության գեպքում նրան տալ Թուրքիայի Զմյուռնիա քաղաքը: Հունաստանը հրաժարվեց: Այն ժամանակ Զմյուռնիայի փոխարեն Գրեյը խոստացավ պղնձով և վոսկով հարուստ կիսպրու կղզին: անզիւական կառավարության համար շատ կարելոր եր նոր դաշնակից ձեռք բերել, հունական դորքերը թուրքիայի դեմ առզդել: Բայց հունական կառավարությունն այս անզամ ել հրաժարվեց—հա շատ լավ զիտեր, վոր հունական ժողովուրդը պատե-

բողք չի ցանկանում, և շատ վտանգավոր գործ եր համարաւ բացարձակորեն ժողովրդի կամքին հակառակ դուրս գալ:

Այս ժամանակ, 1915 թվի դեկտեմբերին, տեղի ունեցած յերեք պետությունների՝ Անդլիայի, Թրանսիբայի և Խոտիայի արտաքին գործերի մինիստրների հանդիպումը, Գրեյն առաջարկեց քննության յենթարկել այն հարցը, թե ինչպես վարդել Հռենասա-անի հետ. նա համառությամբ հրաժարվում և պատերազմին խօսնվելուց Մինիստրները վորոշեցին. հարկավոր և Հռենասա-նին համոզել, իսկ վորագեսպի հորդորութերն ավելի ուժեղ ազդեն՝ շարժածածակ կրնատել կենսամթերքի ներմուծումը Հռենասատանը:

Անդլիական, ֆրանսիական և իտալական նավահանգիստների պետերը գաղտնի հրաման ստացան՝ հռենական նավերն առաջիւ պես ներս թողնել նավահանգիստ, բայց այլև թույլ չտալ հետ գառնալ դեպի ծովը:

Պարզ ասած՝ Հռենասատանին սովոր եյին մատնում:

Այդ որդանից սկսվում և պայքարը. խոշոր պետությունները համերաշխորեն պատերազմի յեն հրում Հռենասատանին, իսկ փոքրիկ Հռենասատանը ջղածգորեն խուստվում և պատերազմից Անհավասար և անհուսալի պայքար:

1916 թվին յերեք մինիստրները նորից հանդիպում ունեցան ու կրկին քննության առան այն հարցը, թե ինչպես վարդեն Հռենասատանի հետ. Գրեյը յերկուուղ եր կրում, վոր յերկա-ըատեղ ողակումը կարող և ուժասպառ անել հռենական բանակը և այն ժամանակ Հռենասատանի մասնակցությունը պատերազմին վոչ մի ոգում չի բերի. Մնացած մինիստրները համաձայնվեցին Գրեյի հետ և վարչեցին, դեպքերն արագացնելու համար, ուղարկան նավախումբ ուղարկել հռենական ջրերը:

Սեպտեմբերի յերկուամին նավախումբը տեղ հասավ, նավերը խարիսխ զցեցին հենց հռենական մայրաքաղաքի մոտ. Գեներալ Սարայլը՝ դեսանտի (այս հանած զորք) հրամանատարը միանգումնից պահանջեց, վորագեսպի հռենական բոլոր յերկաթուղիներն այդ որդանից իրեն յենթարկվեն. Հրաժարվելու դեպքում սպառ-նաց ծովագերն ամբակոծել:

Հռենական կառավարությունն արտակարգ նիստում վորոշեց կառարել այդ պահանջը Հռենասատանի մինիստրների. խորհրդի նախագահը հայտարարեց, թե դիմադրության մասին ստածել անգամ չի կարելի. Պետք և միայն ձգձգել ժամանակը և, քանի

Դա զեթ ոմենափոքք Ըստավիրությունը կա, խռառափել պապեցող էց:

«Միակ հույսը,—առում եր մինիստրների խորհրդի նախագահը,—Սարային դիջումներով հոգնեցնելն եւ:

Բայց նա այս բանում խիստ սխալվեց. գեներալ Սարայն ոյն մարդկանցից չեր, վարոնց կարելի յեր զիջումներով հոգնեցնել իր իրավասության տակ տոնելով յերկաթուղիները, նա պահանջեց, վոր իր հսկողությունը լինի փոստի վրա. Փոստի վրա հակողության իրավունք ստանալով նա անմիջապես հսկողություն պահանջեց նաև հեռագրի վրա. Իսկ հեռագրությունն ստանալով մյուս որը պահանջեց նաև սաղիոնն:

Հասավ այս ժամանակը. յերբ հունական կոռավարությունը տռանց Սարայի

թույլտվություն. նն ստանալու մինչև անդամ իր արտասահմանյան զեսպանելու հեռագիր ու զարդել չեր կարողանում:

Բայց այս բուքորն ել քիչ թվաց դիներակ Սարային. չե վոր նրան հանձնարարված եր՝ ինչ դնով ել լոնի, Հուն ստանին պատելը պահանջման մեջ քաշել:

Սեպտեմբերին իննին ֆրանսիական և անգլիական գիվանապետները միասին զրունում եյին զեսպանատան այգում. Հանձնարժ թփերի հետեւ կրակոցն ընդացին. Անմիջապես իրազարկեցին ամբողջ այգին, բայց կրակողը կարծես գետնի տակ եր անցել. Բարեբախտաբար գիվանագետներից վաչ մեկը չվիրավորվեց:

Մասնափորձի մասին տեղեկանալով վրդովված գեներալ Ստորայլ հունական կառավարությունից պահանջեց, վոր հանցավորները, ինչ գնով ել լինի, գոնվեն. Հենց նույն որը նուշագործ ափ հանց մի ուազմալուն ջոկատ՝ իբր թե գիվանագետների պաշտպանության համար:



Անգլական և ֆրանսիական նավերը խորիս գցեցին:

Հունական կտոռավարությունը հասկացավ, թե ուր և ունաւմ այս գործը՝ Գիշերը, այն տան առաջ, ուր կառավարությունը նիստ ուներ, շտապ կարգով խրամատներ փորձեցին և տան շրմ կողմը փշալարերով պատվեց:

Ռուսական դեսպանն այդ բոլոր դեպքերը ծածկազրած հետապրով հաղորդեց Պետրովգրադ Նա ավելացրեց, թե՝ հանցավորները, ինարկե, յերբեք չեն գտնվին, վորովհետև մահափորձը ըստ իր տեղեկությունների, սարքել և հնաց ինքը՝ գեներալ Սարյալը:

Մինչև այդ, անխոչ գեներալ Սարայլը, ժամանակ չկորցնելով արգեն նոր պահանջ ներկայացրեց—վողջ հունական ռազմական նավատորմը, յերեսուն և մեկ նավ, ամրողջովին իրեն պետք և տրվի Պատասխանի համար ժամկետ և տրվում տանձը կու ժամ:

Հունական մինիստրները շփոթված հավաքվեցին պահպանութեան և մեկը մյուսի հետեւից հայտարարեցին՝ նոր պահանջերից ազատվելու միայն մի միջոց և մասցել և այդ միջոցն և՝ յենթարկվել մեծ պետությունների կամքին, նրանց հետ դաշնակցած կամի մեջ մասնելը Այս տեղով՝ հունական բոլոր մինիստրները հրաժարական ավին նոր կառավարությունը գեներալ Սարայլին պատուիսանեց, թե ինքը, ողիջելով ուժին, պատրաստ և ամեն բանից Միքանի որից հետո Հունաստանը հայտարարեց, վորինցն ել պատերազմի մեջ և մտնում:

Բայց այստեղ, յերբ կառավարությունն անձնատուր յեղավ, պարզի մեջ խառնվեց հունական ժողովուրդը:

Այն ժողովուրդը, վոր մինչ այդ վոչ մի գնով չեր ցանկանում պատերազմել, այժմ սիրով դենքի դիմեց: Միայն թե նա զենքը գործադրում եր վէճ այնպես, ինչպես այդ ցանկանում եյին Քըեյը. Սարայլն ու ինքը՝ հունական կառավարությունը:

Ժողովուրդը զենքի դիմեց, վորպեսզի խուսափի պատերազմից:

1916 թվի գեկտեմբերի մեկին փողոցային կոմի ժամանակ պյարարորբոք գեներալ Սարայլը գլխովին ջախջախվեց հունական պատումբների կողմից և փախավ իր ամբողջ դորքի հետ:

Այս հաղթությունը Հունաստանին տվեց վերջին, կարճատե հետաձգումը: Չնայած Հունաստանի կառավարությունն արդեն պատերազմ եր հայտարարել, բայց սիրանի ամրս շարունակ նու զեռ պատերազմական գործողություններ չեր սկսում:

Բայց այդ ամիսներին ողակումն այնքան եր ուժեղացել վոր մարդիկ սկսեցին քաղցից մեռնել փողոցներում: Իտալիան

գրավեց Հունաստանի արևմտյան անկյունումը, Թրանսիան՝ արևելյանը Հունիսի կեսերին անզորութրանսիական զորքերը գրավեցին Հունաստանի մայրաքաղաքը:

Ենք շուտով հունական զինվորներն արդեն կովում ենին զանազան ռազմաճակատներում՝ անդլիական, Փրանսիական և իտալական զինվորների հետ կողք-կողքի:

Այդպես Հունաստանը մասվ համաշխարհային պատերազմի մեջ: Արժե՛ արդյոք պատմել, թե ինչ միջնորդ պատերազմի մեջ քաշվեցին Զինաստանը, Հաբուին, Լիբերիան, Սիրիա:

Վոչ մի ժողովուրդ պատերազմ չեր ցանկանում: Այնուամենայնիվ, Նրանք բոլորն ել ստիպված յեղան պատերազմեր Նրանց պատերազմի մեջ քաշցին խորամանկությամբ, խարեռությամբ ու բանությամբ:

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ

Պատերազմ առաջացնողը Գրվրիւ Գրինցիսի գնդակը չեր: Ապա ուրեմն թնջն եր իրոք, վոր պատերազմ առաջացրեց, թնջն եր նրա ծագման իսկական պատճեռը:

Այս պատճեռը գտնելու համար պետք է նայել անցյալին, Հարկավոր և հիսուն տարով հետ վերադառնար:

Կես զար առաջ աշխարհի ամենառութեղ ու ամենահարուստ պետությունը Անգլիան եր: Այն ժամանակ Անգլիայում յերկաթու ածուխ ափելի շատ եր արդյունահանվում, քան վորնե այլ յերկրում: Անգլիական բանկերի նկուղներում հակայական քանակությամբ վոսկու պաշար եր պահպառմ: Նրա ռազմական նագատորմը հսկում եր ծովերն ու ովկիանուները, վորպեսզի վոչ վոչ չկարողանա հարձակվել Անգլիայի վրա ու նրանից իւել ծովային առևտուրը, հափշտակել նրանից իր գաղութները:

«Մովերի տիրունիք»—այդպես եյին անվանում նրան կետ զար առաջ:

Բայց հենց այն ժամանակ, հիսուն տարի առաջ, առաջին անգամ նկատվեց, վոր Անգլիային մրցակից և դուրս յեկել Այդ մրցակիցը Գերմանիան եր:

Գերմանիան, ճիշտ ե, դեռևս շատ թույլ եր Անգլիայից, բայց զբա փոխարեն նրա հղորությունն անում եր խիստ արագ:

Տարեցտարին նու ավելի ու ավելի վասանգավոր եր գառնում  
Անդլիայի համար:

Ահա Գերբանիան Հասավ Անդլիային յերկաթաձուլման դրց-  
ծում. Ահա արդեն առաջ անցավ նրանից. Ահա սկսեց նրանից  
առաջ անցնել նաև ածխի հանույթի ասպարեզում. ահա  
Համաց-կամաց սկսեց իր ձեռքը վերցնել ծովային առևտուրք:  
Յեկանա, վերջապես, ուժեր կուտակելով, Գերմանիան սկսեց սպ-  
առկան մեծ նավատորմ կառուցեր.

«Մեր ապագան ծովումն եւ,—ասում եր Վիլհելմ II 1890  
թվին. Այդ խոսքերը կարելի յեր հասկանալ միայն այսպես.—  
Գերմանիան նավատորմ և կառուցում նրա համար, վորպեսզի  
ովկիանոսի այն կողմը հողեր հափշտակի, ժամանակի ընթացքում  
Անդլիայից խլի նրա տիրապետությունները»:

Դա բացարձակ մարտակոչ եր, բացարձակ սպառնալիք. Դա  
շամաշխարհային պատերազմի առաջին նախանշանն եր:

Գերմանական կառավարությունը շուտով խոսքից գործի  
անցավ. 1900 թվին նա Անդլիային մի անսպասելի հարված  
հասցըրեց. Նա սկսեց կառուցել մի նոր յերկաթուղագիծ—ուղիղ  
մանապարհ Բեռլինից Բադեն:

Անդլիական մինիստրները հասկանում եյին. Հենց վոր ճա-  
նոպարհը շինէի, նրանով գերմանական ապրանքները կհսկեն  
զեզի. արեւելք, ունակի Ասիա կշտապեն դերմանական վաճառական-  
ներն ու ինժեներները, իսկ անհրաժեշտ բուպեյին զեզի այստեղ  
կշարժվեն նաև գերմանական զորքերը. Գերմանական կառավա-  
րությունն ամբողջ փոքր Ասիայի տերը կդառնա:

Դա համաշխարհային պատերազմի յերկրորդ նախանշանն եր:

Անդլիան այն ժամանակ սիրո չեր անում ուժով կանգնեց-  
նել Գերմանիային. Բայց հենց այն ժամանակվանից անդլիական  
թագավոր Եղվարդ V 11 համարյա ամեն ատրի ուղելիորություններ  
եր կատարում Յեղվոպայում. Անդլիական լրագրերն այդ ուղելո-  
ւությունները շատ հասարակ ձևով եյին բացարում. «Մեր թա-  
գավորը, —զբում եյին նրանք, —ընավորությամբ տուրիստ ե, նա  
մանապարհորդությունը բայց ամենանալի ամենը ամենը  
զիանաց. Եղվարդ VII դնում եր համաձայնություն ստեղծելու  
այն բոլոր յերկրների կառավարությունների հետ, վորոնց սպառ-  
նում եր Գերմանիան Խիստ գաղտնապահությամբ նա գաշնա-  
կիցներ եր փնտում պատերազմի համար:

Անցավ միքանի տարի, և Գերմանիան նոր հարված հաց-

բեց իր մըստկիցներին՝ Անդլիոյին և Ռուսաստանին. Ավագոց-  
չունդարիան, Դերմանիսյի զաշնակիցը, իրեն միացրեց ոյն եռ-  
զերը, վարտեղ սերբերն եյին ոպրում—Բոսնիան և Հերցեგո-  
վինան։ Դրանով նա Գերմանիայի համար ճանապարհ եր մաք-  
րում գեղի արևելք։

Այդ միևնույն ժամանակ գերմանական կռավարությունը  
ֆրանսիական հողի վրա միջոնի դառալիք գերմանցիների ձեր-  
բակալման չնշյան առիթը պատրիակ բանելով՝ իր գեղազանին հրա-  
մայեց հեռանալ Փարիզից։

Այդ պատահեց 1908 թվին Յևկ ու համաշխարհային պա-  
տերազմի յերրորդ նախանշանն եր։

Թե այս անգամ վորքան մեն եր պատերազմի վանդը, կա-  
ցելի յև իմանալ Անդլիոյի ծովային նախակին մինիստր լորդ Ֆիշե-  
րի հիշողություններից։ Դաղանի խորհրդակցությունը լորդ Ֆիշերը  
հայտարարեց. վոչ մի միտք չկա սպասել Գերմանիայի կործակ-  
մանը, ավելի ձեռնուու յև նրանից ոռաջ ընկնել լորդ Ֆիշերին  
այսպիսի պլան առաջարկեց. անակնկալ կերպով, ոռանց պամե-  
րազմ հայտարարելու, ծովում արջապատել գերմանական նավե-  
տրում և ջրառույզ անելը։

Այդ պլանն այն ժամանակ մերժվեց. լորդ Ֆիշերն որպէս  
չափից գուրս եր շտապում. և՛ Գերմանիայում, և՛ Անդլիոյամ  
վեռան ամեն բան պատրաստ չեր պատերազմ սկսելու համար։

1908 թվին հաջողվեց խաղաղությունը պահպանելը

Բայց յերեք տարի ել չանցավ. յերբ Գերմանիան մի նոր հայ-  
գած հասցըրեց, այս անգամ՝ Աֆրիկայում։

Եսա վազուց Գերմանիան աչք եր անկել Աֆրիկայի որո-  
րական հողերի՝ Մարոկկոյի վրա։ Բայց Քրտնսիական զորքերը  
կարողացել եյին գերմանական զորքից ավելի շուստ մանել Մա-  
րոկկո։ Դրանով, թվում եր, վոր որդեն լուծված և ոյն հարցը.  
Թե ում ե պատկանելու Աֆրիկայի այդ մասը։

Գերմանիան, սակայն, չեր հաջովում այդ մտքի հետ. 1914  
թվի ամսանը գերմանական «Պանտերա» սազմոնավը հանկար-  
ծակի յերեաց Մարոկկոյի նավահանգիստներից մեկում և թը-  
կանոթներն ուղղեց գեղի ծովափը։

Դա համաշխարհային պատերազմի չորրորդ նախանշանն եր։

Ֆրանսիական գլխավոր շտարն արգին շտապ միջոցներ եր  
ձեռք առնում, վոր գիմադրի գերմանական զինվորների Ֆրան-  
սիա ներխուժելուն։ Անդլիոյան նավատրմն արգին գաղափ-

Հրամանով ռազմական պատրաստության մեջ եր դրված Ռուսական կառավարությունն արդին վարուում եր՝ ինքը խառնվիլն յի պատերազմին, թե վոչ:

Թվում եր, թե այս անգամ արդեն խաղաղությունը պահանջել չի հաջողվի:

Սակայն, վերջին բովելին գերմանական կառավարությունը վարուցից պատերազմը հետաձգել. ուժերի հարաբերությունն անշահավետ թվաց նրան. Բացի այդ, Ֆրանսիան Գերմանիային մի կտոր հող զիջնեց Աֆրիկայում. ճշգրիտ ե, դա արտացցիներով բնակեցված Մարոկոն չեր, այլ նեզր բնակիչներով Կոնգոի մի շերտը, բայց գերմանական կառավարությունը կարծես դրանով ժամանակավորապես բավարարվեց:

1911 թիվը անցավ բարեհաջող, առանց պատերազմի:

Բայց խաղաղությունն արդեն այնպիս եր խախիլը վոր ամեն մի բովել կարելի յեր պատերազմ սպասել:

1912 թիվն Գերմանիայի և Անգլիայի միջև յեղած հակամարտությունն այնպիսի սրության հասավ, ինչպիսին մինչ այդ յերբեք չեր յեղել, Գերմանիան իր ամբողջ ուժերը լարեց, վորպեսպի, վորքան կարելի յե, ավելի շատ ուղանակվեր կառուցիլ անապահան, այս ժամանակ անգլիական կառավարությունը հայտարարեց. ի պատճեն գերմանական ամեն մի նավի, Անգլիան, երկուան և կառուցելու:

Հետեւալ տարին, 1913 թիվն Վիլհելմ II-ը Բելգիական թագավոր Ալբերտ I-ին գաղանաբար հազորդեց, վոր Գերմանիայի պատերազմը Ֆրանսիայի հետ վարոված բան ե և շատ չի ուշանաւ:

Այսուհետեւ վրա հասավ 1914 թիվը. Դուրս թռավ գընդակը. Պրինցիպի տորենանակից, սպանվեց ավատրիական երց-էերցուզը. Ծեզ այդ սպանությունից ոգտվեցին մեծ պետությունների կառավարությունները, վորպեսպի, վերջապես, սկսեն պատերազմը...

Այդպես սկսվեց համաշխարհային պատերազմը — բոլորվին եւ վեց հանկարծակի և վեց պատահարար. Այդ պատերազմը նախապատրաստվում եր համառերեն, աստիճանաբար, տասնյակ տարիների ընթացքում. Պայքար Ասիայի և Աֆրիկայի համար, պայքար նոր հողեր ձեռք բերելու համար, — առա թե ինչը ծնեց այդ պատերազմը...

Բայց Գերմանիայաւմ, Անգլիայում, Ֆրանսիայում և Ռուս

առատանում ունեն եյին հարկավոր նոր հողերը Ռվերը եյին այդ  
ժարդիկ վերոնք վորոշել եյին, ինչ զնով ել լինի, պատերազմ  
առաջացնել Ենք մեջ եր տվել նրանց այնպիսի իշխանություն,  
վոր կարսողացան պատերազմի մեջ քաշել համարյա բոլոր պետա-  
թյուններին:

## ՌԱԴԻՈՒՄԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս ԲԵԼՊԻՄԱՅԻ միջինաւտեր Լե-Շյենի՝ Աֆրիկայի ռադիու-  
մի հանրի ախրոջ պատմությունը՝ Վորպեսպի այդ պատմության  
մեջ ամեն բան պարզ լինի, այն պետք ե սկսել համաշխարհական  
պատերազմից:

Անգլիան, Ֆրանսիան և Բելգիան չորս տարի պատերազ-  
մում եյին Գերմանիայի զնմ և վերջապիս հաղթեցին նրան: 1919  
թվին Աֆրիկայի գերմանական հողերն անցան հաղթող յերկը-  
ների ձեռքը: Նախկին գերմանապատկան կոնգոյի մի կառը բա-  
ժին ընկավ Լե-Շյենին: Այդ հոդի մի մասում զանվեց շատ թան-  
գարժեք մի նյութ—ռադիում:

Դա շատ կարեսոր գյուտ եր—ռադիումն այնքան սակավ է  
պատահում, վոր նրա հանոււյթի ամրող ժամանակամիջոցում ձեռք  
ե բերվել մի կիւողըամից վոչ ավելի ռադիում: Իսկ նրա կարիքը  
չափազանց մեծ ե. ռադիումով բժշկում են քաղցկեղով տառապո-  
չիվանդներին, ռադիումը համարյա միակ միջոցն և այդ սարսա-  
փելի հիվանդության գեմ:

Լե-Շյենը դարձավ ռադիումի թագավորը:

Բայց Լե-Շյենը աշխարհում ռադիումի միակ արքան չեր-  
թագիւմի յերկու այլ արքաներ ել կային. մեկը Զեխոսլովա-  
կիայում յեղած հանքերի տերն եր, մյուսը՝ Կորուադոյում—Ան-  
դրիկայում: Ուրիշ մրցակիցներ Լե-Շյենը չուներ:

Եերկու հին հանքավայրերն ել աղքատ եյին ռադիումով:  
Փոշու հատիկի չափ ռադիում ձեռք բերելու համար պետք եր քան-  
դել ու մազել այնքան հող, վոր մի ամրող զնացք ովհանել չեր  
մինի:

Ի՞նչպիսին կլինի աֆրիկական նոր հանքավայրը—առաջ-  
գաններից ավելի հարժաւատ, թե՛ աղքատ: Այդ վոչ զգիակ  
բացի Լե-Շյենից, իսկ Լե-Շյենը վոչ վոքի չեր հայտնում:

թեև աշխարհում միայն յերեց մարդկային սաղիումի-  
առելորականներ, բայց յերկիրը նրանց չառ նեղ եր թվում. նրան-  
ցից յուրաքանչյուրը ցանկանում եր, վոր սաղիումի տուերի աճ-  
րող սպուաը միայն ինցն ստանա, չըստանի վորին մեկի հետ-  
և են մեկը ձգտում եր վոչնչացնել իր տիսուաններին:

Եւզ աւա, նրանց մեջ կատաղի պայշտը սկսվեց. Ծաղիու-  
մի արքաներից ամեն մեկը բոլոր միջոցներով աշխատաւմ եր  
անանկացնել մյուս յերկուսին, և այսպես տնել, վոր նրանց հան-  
գովոյրերում աշխատանքը դադարի:

Այդ պայքարում Լե-Շյենց հազթող դուրս յեկավ, Ժամանա-  
կավորապես նա զարձավ սաղիումի միակ արքան յերկուղի գու-

մա: Եւզ վոր Լե-Շյենց հազթոց, նա սահմաննեց սաղիումի-  
առարեկան հանույթի կայուն ժանակ և նշանակեց մի գրամ սա-  
ղիումի հաստատում արժեք: Նա հայտարարեց, վոր ինքը ոտ-  
քեկան վաթսուն գրամ սաղիում և ձեռք բերելու, և մի գրամը  
արժենալու յի հարյուր հազար առւըլի: Դա նշանակում է՝ Ձ-  
գուա սաղիումին դեռք և վճարվի հինգ փութ վոսկի:

Բայց քաղցկեղից տարեկան միլիոնավոր մարդիկ են մեռ-  
նած: Նրանց գրիելու համար այս վաթսուն զբամբ բավական չի:

Եւզ վոչ միայն հիվանդներին չի բավականացնում ացք  
սաղիումը, այլ նաև զիտնականներին՝ իրենց փորձերի համար:

Մաղիումի նշանավոր հետազատող պղոբիսոր Սուպիին գրու-  
ե, «Այն զիտնականները, վորոնց զտել են սաղիումը ու նրա  
մեռք բերելու միջոցները և մեծ աշխատանքով ձեռք բերած իրենց  
ամրող զիտությունը նվիրաբերել են մարդկությանը, այժմ ի-  
դինս կի չեն դեմք շատ համեստ չափով սաղիում ձեռք բերելու՝  
զիտական անհրաժեշտ հետազոտությունների համար»:

Լե-Շյենին շատ խնդրեցին ավելացնել սաղիումի հանույթը  
և ցածրացնել արժեքը: Լե-Շյենց պատասխանում եր խուսափե-  
զական ձեռվով—հանգանորում, տառալ եր, աշխատանքն ընթանամ  
և լրիվ թափով, հանգանյութը քանոզում ու մաքրում են ամե-  
նաբարդ և ամենակատարելագործված մեջենաները: Հենց այդ մե-  
քուարները ինչ արած, հանգավայրում օհիչ սաղիում կա:

1929 թվին Զվիցերիսայում հայտարարվեց համաժողովրդա-  
կան բաժնեգրություն. պետք եր փող հավաքել հինգ զրոմ սա-

գիտում զննելու համար: Հենց նույն տարին Ֆրանսիան զննեց վեց գրամ, իսկ Դիբժանիան՝ ընդամենը շորս գրամ:

Սակայն զանվեց մի մարդ, վոր չէավատաց Ան Շյենին: Դա անգլիացի բժիշկ Խոզեն-Հեստն եր: Նա ուղևորվեց արևելյան Աֆրիկա, վորպեսզի իր աշխով տեսնի, թե ինչպես են այնտեղ ասպիտմ ստանում: Բայց յերբ Խոզեն-Հեստը վերջապես հասավ իր նպատակին, պարզվեց, վոր այդքան յերկար հանապարհորդությունն իզուր և յեղել, նրան թույլ չտվին հանգստանոր մասնել: Ամրոցի պես նու շրջապատված եր փշալարերով, դարձաների առաջ կանգնած եյին պահապաններ, և վոչ մի կողմանկի մարդ չեր կարող մուտք գործել շրջապարապից:

Բայց Խոզեն-Հեստը համառ եր: Նա հետ չվերադարձավ, այլ հանգստանորի ջրկիրի հետ պայմանավորվեց, վոր նու բժշկին պազմանի ներս անցկացնի փշալարերից:

Յեզ ինչ տեսավ անկոչ հյուրը, յերբ մոտվ Ան-Շյենի աիգապետության մեջ:

Մի տասնյակ նեղոր բանվորներ բահերով փոռում են հողը, վոչ մի մեջենա, վոչ մի կատարելավործված հարմարություն՝ հանգանյութն արագ մաքրելու համար: Հանգանորը կարող եր անհամեստ ավելի ռադիում տալ, յեթե ավելի լավ սարքավորված լիներ: Այստեղ հանգանյութը հիսուն անգամ ավելի հարուստ եր սաղիստմով, քան մյուս հանգանորերը:

Ան-Շյենը զիստ ավորյալ կերպով այդքան քիչ ռադիում եր հանում, վորուեսզի մարդկությունը ռադիումի յուրաքանչյուր փոշու կարիք ողպար, վորպեսզի մի գրամի համար կարողանար հարյուր հազար ռուբլի վերցնել:

Այսպես և ռադիումի արքայի պատմությունը:

Ինչու համար այստեղ պատմեցինք Ան-Շյենի, նրա խարգուխ նենագամառնթյունների մտսին: Միթե այդ բանը վորեն կատ ունի պատերազմի հետ:

Հենց բանն ել այն ե, վոր Ան-Շյենին ուղղակի խարգախ անվանել չեր կարելի: Նա զործում եր համաձայն իր յերկրի որենքների, նա ամենին չի խախանել այդ որենքը: ԶԵ վոր ռադիումի հանգանորը նրա սեփականությունն եր, ուրեմն ինչպես ռադենար, այնպես ել կարող եր վարվել նրա հետ:

Ասենք, յեթե նա մինչև անգամ որենքի դեմ մեղանչած ել միներ, ինարկե, վոչ զոք չեր համարձակվի նրան պատասխանաւորվության կանչեմ Ահա թե ինչու Լե-Շյենը բնելդիական ընդհանուր ընկերության դիրեկտորներից մեկն եր:

Այս ըշնկերությանն եւ պատկանում Բելգիայի քարածիի և յերկաթահանքի պաշարների կեսից ավելին, Նրա ձեռքումն են գտնվում յերկաթահանության, ապակու, քիմիական գործարանները, գոմինյան վառարանները և նավաշինարանները։ Այդ դեռ Բելգիայում Բայց դրանից զատ Հարավային Ամերիկայում յերկաթուղիներ ունի, Զինասահանում՝ քարածիս շախուեր, փոքր Ասիայում՝ Ալենկորոկս, ասսար և զորջապես Աֆրիկայում՝ պղնձահանքեր, աղամանզիֆ և գուկու ըլուններ։

Ահա թե ինչքան հզոր և այս ըշնկերությունը։ Նրա գիրեկտորներն ամբողջ Բելգիայի խսկական տերերն են հանդիսանում, այդ յերկրի խսկական կառավարողները։

Միայն Բելգիայում չե, վոր գործերն այդպես են գասավորված։ մի անտեսազետ զեւ համաշխարհային պատերազմից տռոջ հաշվել եր, վոր Գերմանիան կառավարում են միայն յերեք հացյուր մարդ, Անգլիան՝ մոտ հարյուր մարդ, Միացյալ նահանգներ՝ ութուն մարդ, ութուն ամենահարուստ բանկիրներ, վաճառականներ և գործարանատերեր։

Բոլոր կապիտալիստական յերկրները իրականում կտուգարում են վոչ թե այս մարդիկ, վորոնք նիստեր են անում պառլամենտում կամ մինհիստրների խորհրդում, այլ նրանք, ովքեր տիրուժ են յերկաթուղագծերին, ելեկտրոկայաններին, գործարաններին ու հանգանորերին։

Հսկայական և այդ մարդկանց իշխանությունը. Նրանք իրենց կամքն են թելազրում նախազահներին և մինհիստրներին, Նրանք են վորոշում պետությունների ճակատագիրը Նրանք յերկրի խսկական տիրակալներն են։

## ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Լե-Շյենի պատմությունն սկսվում և պատերազմից Զիներ պատերազմը, Լե-Շյենը հող չեր ստանա. արևելյան Աֆրիկայում և չեր գտանա սաղիումի արքան։ Սակայն այս պատմությունը պատերազմի հետ չի վերջանում, Լոեցին թնդանոթները, դադուց

պայքարն սազմանակատներում. բայց իւ-Շյենը շարունակում եր պայքարնելի Հենց խաղաղության այս տարիներին նա կարողացավ կոլուրագոյի և Զեխոսլովիակելոյի իր հակառակորդներին հախցը դաւ իւթավ ե, այս պայքարը դենքի ուժով չի վճարում, այլ ուժին, ավելի քիչ նկատելի միջոցներով. Նա կարծեն անտեսանելի յև դասնում, ինչպես այն գետը, վոր անհետանում է զետնի տակ, Ստկայն ամեն բռնե ստորերկրյա ջրերը կարող են նորից դուրս ժայթքել. Ամեն բռնե նորից կարող են վորատ թնգանոթները:

Խհարկե, համաշխարհային պատերազմը ռազիումի համար չեր մղվում: Նու միայն քիչէկներին ու դիտնականներին եւ հարկավոր Բայց չե վոր ռազիումը միայն մեկն և այն նյութերից, վորոնք թվարկված են Մենդելեյեվի աղյուսակում: Ռազիումի պատմությունը միայն մեկն և իննսուններկու իրար շատ նման պ տություններից:

Մենդելեևի աղյուսակը տիեզերը ինվենտարի ճիշտ ցուցակաթիվն ե, քիմիական հիմնական ելեմենտների ցուցակազրումը, վորոնցից կազմված և ամեն ինչ աշխարհի վրա:

Բայց, ակնոս, վոր աղյուսակում նշված չե, թե ութեան պատկանում այս բոլոր նյութերը: Այդ պետք եր անելի:

Ահա աղյուսակի տասներեքերորդ վանդակը—ալյումինիում: Աշխարհում յեղած ամբողջ ալյումինի կեսը պատկանում և բանկիր Մելոնին. աղյուսակի տասներունը վանդակը կալիումն եւ Ալբուզի կալիումը բաժանված և քրանսիական և գերմանտիկան կապիտալիստների միջև Յերեսուներորդը ցինկն եւ Ցինկի համաշխարհային պաշարի յերրորդ մասին աիրումն Գարբիման աղյուսակուվ մի մարդ, կիսուներորդը անտգն եւ Նա գտնվում և անգլիական վաճառականների ձեռքին: Ութսուներորդը սնդիկն եւ Սնդիկի միքանի արքան արքաներ կան—իսպանական և իտալական: Ութսունութերորդը ռազիումն եւ Նրա մասին մենք արդեն խոսեցինք:

Ամեն մի վանդակում, ամեն մի քիմիական ելեմենտի տակ կարելի յե գրել այն մարդկանց աղքանունները, վորոնք նրան համար պայքարում են, կարելի յե նկարել այն դրոշակները, վորոնցից նրանք կոչվի յեն դուրս գալիս: Իննսուններկու վանդակ կա Մենդելեևի աղյուսակում, դրանք իննսուններկու խոշոր գյուտեր են. և միենույն ժամանակ դրանք իննսուններկու համբավոր տափթներ են ապագտ պատերազմի համար:

Բայց չե վոր Մենդելեյեվի աղյուսակում ցույց են արված

միայն հիմնական քիմիական ելեմենտները, Բայց գեռ մոռմ ե-  
այլ նյութերի մի հակա քանակ, վորոնք նույնպես կարող են պա-  
տերազմ ի պատճառ դառնար Ածուխ, նավթ, սետին, բամբակ—  
այս բոլորի պատճառով կարող ե արյունանեղ պատերազմ  
բռնկել:

Յերկրի բույր տիրակալների, բոլոր կապիտալիստների  
պատճառ թյունը նման է ԱԵ-Շյենի պատճառ թյանը. դա վոչ մի-  
բույր չդադարող բացահայտ ու գաղանի պայքարի պատճառ թյուն  
է. Գաղտնի պայքարը կոչվում է «իսաղաղություն»։ Բայց հենց  
այդ խաղաղությունն ել միշտ նորանոր պատերազմներ և ծնուժ:

Ամեն մի յերկրի տիրակալներին քիչ են թվում այն հա-  
րըստությունները, վորոնց տերերն են իրենց Նրանք ձգուժ  
և ինչ գնով ել լինի՝ լայնացնել իրենց տիրակալությունը  
պատվել բոլոր ախոյաններից։

Հանկանալի յե, թե ինչու յեն նրանք այդպես համառու-  
թյամբ հետապնդում այս նպատակին ԶԵ վոր նրանք բոլորն ել  
ապրում են ուրիշ աշխատանքով. վորպեսզի իրենց համար  
հարստություն ստեղծեն, նրանք աղքատության են մասնել  
իրենց սեփական յերկրի ազգաբնակությանը Յեվ, ահա, նրանք  
իրենց յերկրում այլև չեն կարող վաճառել այն բոլորը, ինչ  
վոր արատգրում են նրանց զործարաններն ու զավոդները, չեն  
կարող ստանալ այն սպուտը, ինչ վոր իրենք են ցանկանում։

Այդ պատճառով ել նրանք բոլոր միջոցներով ջանում են  
մուտք գործել ոտար յերկրներ, վորպեսզի այնուեղ ևս միլիոնա-  
վոր նոր մարդկանց սպիտեն աշխատել իրենց համար, և այն-  
եղից նոր հարստություններ գուրս կորպեն։

Դրա համար ել նրանք շտապում են նաև զեսլի ուրիշ մայր  
ցամաքներ՝ Ասիա և Աֆրիկա։

Ամեն մի յերկրի տիրակալներին նոր հողեր են հարկավոր։  
Բայց վերտեղից ձեռք բերել այդ հողերը։

ԶԵ վոր յերկրագունդը վաղուց և ամբողջովին հայտաբեր-  
ված և ամրող ջովին, առանց մասը մասը բաժանված և նրա աերե-  
րի մեջ, Նոր մայր ցամաքներ ստեղծեն, հասկանալի յե, նրանց  
չեն կարող Մնում և մի բան—համար կարող են ուրիշի հողերը։

— Մենք կամ կընդարձակվենք, կամ կզայթենք—ասում է  
Մասովինին։

— Մեզ գաղութներ են հարկավոր, — հայտաբարում ե զեր-  
մանական մինիստրը Շախարը:

— Զինաստանը նվաճելու համար մենք առաջ պետք ե նվա-  
ճենք Մոնղոլիան և Մոնղոլիան, — ասում ե ճապոնական մինիս-  
տրը Տանտկան, իսկ Զինաստանը նվաճելով մենք կնվաճենք  
մըրդջ աշխարհը:

— Մարդը մարդու համար զայլ ե, — կտրուկ ասում ե ան-  
գլուխական մինիստրը Բոլղվինը:



Աֆրիկան 1837 թվականից առաջ նշված  
են յեզրոպական պետությունների  
գողությունները:



Աֆրիկան 1837 թվականից առաջ նշված  
են յեզրոպական պետությունների  
գողությունները:

Մենք կտրծում ենք, վոր անգլիական մինիստրն իրավացի  
յի միայն կիսով չափ: Նու լիովին իրավացի կրիսեր, յեթե իր  
այդ ասացվածքի մեջ յեղած «մարդ» բառը փոխարիներ «կա-  
պիտալիստ» բառով:

Կապիտալիստը կապիտալիստի համար, իրոք վոր, զայլ ե:  
«Արդեն այս և շահագործողների որենքը, — ասում ե ընկեր  
Ստալինը — հարվածել հետամնացներին ու թույլերին: Կապիտա-  
լիտմի գոյացյին որենքը, Դու հետ մնացիր, զու թույլ ես — նշա-  
նակում ե՝ զու իրավացի չես, ասել ե՝ քեզ կարելի յե հարվածել  
ու սորկացնե: Դու հպոր ես, նշանակում ե՝ զու իրավացի յես,  
ասել ե՝ քեզանից պետք ե զգուշանալ»:

Այդպիս պատահեց նրա համար, վոր պատերազմի վերջում գերմանացիների ուժերն արդեն քայլայլած եյին։ Նրանք քայլայլած եյին վոչ թե ֆրանտուա, այլ թիկունքուա։ Գերմանական զորքերը զեռ միշտ առաջ եյին գնում, հաղթանակներ տանում։



Մեր առնելիքստանեցւ,

Ըայց զործարանները Գերմանիայի թիկունքում արդեն չելին կարողանում հասցնել այնքան ռազմական մեջենաներ, վորքուն մոր պահանջվում եր. նրանք մետաղ քիչ ունեյին: Յեզ մինչև անդամ, յեթե գերմանացիները լարեյին իրենց բոլոր ռաժերը և պատրաստեյին հարյուրավոր տանկեր, մինչույն ե, այդ տան հետը Նրանց պետք չպիտի գային: Նրանք չեյին կարող տեղաբարից շարժվել, նրանք կմնային առանց վառելանյութի—Գերմանիային նավթը չեր հերքում:

Իսկ մվ մաշեց Գերմանիայի ռաժերը, մվ զբկեց նրան նավթից և մետաղներից:

Այդ հաջողվեց անգլիական ռազմական նավատրումին: Անգլիական ռազմական նավերը թուլացրին Գերմանիայի դիմագրությունը, գյուրացրին իրենց զորքերի հաղթանակը:

## ԾՈՎԱՑԻՆ ԴԱՎԱՏՈՐՄԸ

Ռազմանավը ամենաբարդ կառուցվածքն ե, զոյություն ունեցող բոլոր մեքենաներից ամենահական:

Ամենից առաջ դա մի վիթխարի առւն ե: Գիտանավի վրա, որինակ, ապրում ե հաղար հինգնարյուր մարդ: Յեթե նրան քիթը դեպի վեր կանգնեցնեն փողոցի մեջտեղում, նա բոլոր անեցից բարձր կլինի, ավելի բարձր քան Լենինգրադի Բահակյան յնկեցեցին:

Գծանավն ունի իր ելեքտրոկայանը, իր ռադիոկայանը, իր հեռախոսացանցը, ջեռուցումը, պահեստները: Նա ունի իր աստղադիտարանը, վոր կազմված ե բազմաթիվ բարդ ռադիոէկական գործիքներից: Ավելի ճիշտ կլիներ ասել՝ գծանավը մինչև անգամ տուն չե, այլ ամբողջ մի լողացող քաղաք:

Տանկի զբանից քսան անգամ ավելի հաստ պողպատե զրահով և պատած այս քաղաքի պատերը: Նրա հոկայական աշխարհականները պատվում են իրենց ծանր թնդանոթների հետ միտունությունիւն: Այս լողացող քաղաքի մեջտեղում աշխատում ե գործարանը, վոր կոչվում ե մեքենաների բաժանմունք:

Ովկիանոսի վրա թափառող հզոր ամրոց—ահա թե ինչ ե գծանավը: Նա հարյուր միլիոն ռուբլուց ավելի արժեն, այսինքն ավելի թանգ, քան գործարանը կամ ելեքտրոկայանը: Իսկ այդպիսի մի նավը յերկար չի ապրում, ավելի պակաս, քան մարդու քսան տարեկան նավը արդեն ծերացած ե համարվում:

Դժանավերը և գծային հածոնավերը ծովային նավատարմիւ-  
տմենառութեղ նավերն են. Պատերազմի ժամանակ նրանց հան-  
կարծակի հարձակումից պահպանում ու ոգնում և զանազան մաս-  
նազիտությունների նավերի մի ամրող բանակ:

Ահա զրահակիր ու թեթև հածոնավերը. Դրանք ծովերի-  
ժամապահներն են, նրանք պահպանում են ծովային ճանապարհ-  
ները, վորսում են հա-  
կուռակորդի առելորա-  
կան նավերը:

Ահա ականակիրնե-  
րը, Դրանք ուժանե-  
տեր են, Բայց նրանք  
նեսուած են վոչ սովո-  
րական ռուժերը, այլ  
ստորջրյա, Այդ ստոր-  
ջրյա ինքնաշարժ ար-  
կերը կոչվում են տոր-  
պեդ կամ ծովային  
ակուն:


Ահա զրահանավերը՝  
դանդաղընթաց, զրա-  
հով պատաժ, կարծեա-  
կրիաներ լինեն: Դը-  
րանք պաշարող զոր-  
քերն են. Նրանք մո-  
տենում են ավերին-  
և ամրակոծում ափա-  
յին ամրությունները:

Տորպեդոյին կա-  
տերները (նավերը)

ծովային հեծելազորն եւ Անսովոր արագընթաց ու ճկուն այդ նա-  
վերը խմբով նետվում են մեծ նավի վրա, ջանում են ականնե-  
րավ ջրառույղ անել նրան: Տօրպեդային կտտերները շատ վտան-  
գավոր են գծանավերի համար:

Խտանիները և ուռկանարկները ծովային սապյորներն են.  
Խտանիները ջրի տակ դնում են մեծ, տանձանման ականներ-  
ուռկտնարկները վորսում են նրանց:


Ծովային նավատարմի ունի և իր գումարկը. նավատար-  
մարները, արհեստանոցները, փրկարար հիվանդանոցային նա-



Յանազ.

վերը Վերջապես, արդեն Համաշխարհային պատերազմի ժամանակ  
Հայունվեցին ջրասույզ նավերի դեմ պայքարելու հատուկ նավեր  
և ավելուկիր նավեր՝ լողացող անընդունակ:

Համաշխարհային պատերազմից առաջ Անդրայի նավատարմ  
մենից մեծն եր Նա Անգլիային ոգնում եր բոլոր հինգ աշխար-  
համասերում սփռված չորս հարյուր միլիոն մարդկանց հնագան-  
դության մեջ պահելու իզար չե, վոր անգլիացիք մի հին առան-



### Ավելիներ:

ունեն, վոր ասում ե՞ «Յեզ թող ոգնի մեզ ասովածն ու նավա-  
տորմը»:

Աշխարհում յերկրորդ տեղը բռնում եր գերմանական նա-  
վատորմը:

Յերր պատերազմն սկսվեց, ամբողջ աշխարհն սպասում եր  
յերկու խոշորագույն նավատորմների կռվին, ծովային վճռական  
ճակատամարտին: Բայց գերմանական հրամանատարությունը  
խուսափում եր մարտից: Նա իր նավերը տարտվ նավահանգիստ  
և նրա մուտքը փակեց ականներով:

Ամբողջ չորս տարի Բաց ծովի նավատորմը — այդպես եթէ կոչվում գերմանական ռազմական նավատորմը — համարձակվեց բաց ծով դուրս գալ Միայն նրա առանձին նավախմբերը յել բեմենում ելին պաշտպանված նավահանգստից:

Անգլիական նավատորմը չեր ել փորձում թափանցել գերմանական նավերի այս ազաստարանը: Բայց դրա փոխարեն նա աիրեց ծովային բոլոր ճանապարհներին և վոչ մի տունուական նավ թույլ չեր տալիս վոչ Գերմանիա մանել և վոչ ել Գերմանիայից դուրս գալ: Նա բլոկադայի յեր յենթարկել այդ ամբողջ յերկիրը, և այն զարձրեց:



Ազգմանավը բռնում է տունուական նավը:

Հորս կողմից պաշարված ամրոցի նման մի բան: Նա Գերմանիայի վիզն եր զցել սովի ողակը և գանդաղորեն, բայց հաստատապես խեղզում եր նրան:

Մինչեւ անգամ գերմանական հեռագրական կարելը, վորդիք տակով անցնում եր ամբողջ Աստղանոտյան ովկիանոսի միջուկու ու Գերմանիան կապում Աժերիկայի հետ, պատերազմի հենց առաջին որերին կտրատվեց: Անգլիական ծովակալությունը հատուկ նավ ուղարկեց ովկիանոս, վորպեսզի այդ կապը կարի:

Բլոկադան ծանրապես ազդեց վոչ միայն Գերմանիայի, այլև

ուրիշ պետությունների վրա։ Ահա մի որինակ պատերազմից առաջ բոլոր յերկրներն անդգայացնող միջոցներն ստանում եյին Դերմանիայից։ Պատերազմական գործողություններն սկսվելուց հետո այդ միջոցները միանգամից անհետացան բոլոր դեղատներից, — ստիճանած վիրահատությունները կատարում եյին առանց նարկողի։ Յեկ հիվանդները լազարեաների, հիվանդանոցների վիրահատության սեղանների վրա սարսափելի տանջվում եյին վիրարուժի դանակի տակ։

Բայց անգլիական կառավարությունը բլոկադան չեր վերացնում։ Ֆե վոր բլոկադան մժանեցնում եր հաղթանակը։

Գերմանական հիվանդանոցներում աղյուսակազմված թղթե վրա գծագրում եյին բեկրելուն զիծ—զերմանական յերեխաների մահացության կորադիմք։ Ամսեամիս սև գիծն ավելի ու ավելի վեր եր բարձրանում։ Սովոր կործանում եր Գերմանիան։

Իսկ գերմանական նավատորմը առաջվա նման խարիսխ զցած՝ կանգնած եր իր անվտանգ նավահանգստում։

Գերմանական կառավարությունը չեր կամենում ոխակի յենթարկել իր նավատորմը — չ՛ը վոր նրա վրա միլիարդներ եյին ծախսվել ձակատամարտում կործանվելու դեպքում նրա վերականգնումը պատ' բազմի ժամանակ անհնարին կլիներ։

## ԶՐՈՒՑՑ ՅՈՒՏԱՆԴԱԿԱՆ ՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Այնուամենայնիվ գերմանական նավատորմը մի անգամ թողեց իր ապաստարանը և կովի բռնվեց անգլիական նավատորմի հետ։ Ահա թե ինչպես պատահեց այդ։

Գերմանական ծովակալ Շենքը այսպիսի մի պլան մտածեց կովի բռնվել վոչ միանգամից ամբողջ անգլիական նավատորմի հետ, վոչ Մեծ նավատորմի հետ, այլ միայն նրա մի նավախմբի հետ։ Եեթե անգլիական նավերն ընկնեն այս ծուդակի մեջ և ընդունեն կոփիը, գերմանական նավատորմը, անկասկած, հիաղթի և հատակ կիֆեցնի նրանց։ Իսկ գրանից հետո արդեն կարելի յե մտածել անգլիական նավատորմի գլխավոր ուժերի հետ հակառակություն մտախ։

Այսպիսով, ծովակալ Շենքի խնդիրը հանգում եր հետկյալինողավել հակառակորդի ուժերի բաժան-բաժանությունից և մասմաս ջարդել նրանց։ Յեկ յերր, վերջապես, ծովակալ Շենքը ճիշտ աեղեկություններ ստացավ այն մասին, վոր անգլիական նավատորմի մեծ մասը մեկնել և հեռու հյուսիս, դեպի Որկնեյան

կղզիները, իսկ բաց ծովում մնացել են միայն միքանի տասնյակ անգլիական նավեր, նա վարոշեց իր պլանը կենսագործելու

1916 թվի մայիսի 32-ին, գիշերվա ժամը յերկուն, գերմանական նավատօռմը նավահանգստից դուրս յեկավ ժութ ծովը ևսի մյուս որը, յերրորդ ժամի սկզբին գերմանական առաջընթաց նավը բարձրացրեց «Տնանում ևմ հակառակորդին» դրույտ:

Հեռու ծովում դնում եր անգլիական դժանավերի մի խումբը նա բաղկացած եր ընդամենը հիսուներկու նավերից: Խակ գերմանական նավատօռմը յերկու անգամ ավելի մեծ եր, նա բաղկացած եր հարյուր տասնավից:

Անգլիական նավախումը ընդհառաջ շարժվեց հակառակորդին: Նա կովից խումափելու մասզրություն չուներ: Յերեկ անգլիացիք, նկատելով միայն գերմանական առաջընթաց նավերը, զինի չընկան, վոր այս նավերի հնատիք զալիս ե գերմանական նավատօռմն իր լրիվ կազմով, ամրող Բաց ծովի նավատօռմը:

Սովակալ Շենքի հաշվաները կարծես թե սկսում եյին արդարանալ: Նա հրաման տվեց կովի պատրաստվել...

Եթե այս կովի ամրող պատմությունը չեմ անի, կաշխատեմ հետևել մի նավի՝ գերմանական «Դերֆլինգեր» դժային հածանավի ճակատագրին:


«Դերֆլինգերի» վրա կովի տագնապի ազգանշան տվին հածանավի ազատ հրետավորը մտավ կլոր, հաստ զրահով պատան մինախցիկը և սկսեց պերիսկոպով դիմել ծովը:

Հորիդոնի վրա նա նկատեց անգլիական նավերը: Տասնինդ անգամ մածացնելիս նրանք շատ պարզ յերեսում եյին: Մովային վիթխարի կենդանիների նման նրանք հանգիստ ու վստահ լուզում եյին հանգիպելու Բաց ծովի նավատօռմին:

Անգլիական նավախումը ավելի ու ավելի յեր մոտենում, բայց կրակ չեր բաց անում: Գերմանական նավատօռմը ևս դեռ չեր սկսում կոխվը:

Անցավ հինգ, ասս, տասնհինգ րոպե: Բայց դեռևս ծովում և վոչ մի կրակոց չեր լսվում: Յնչ գերմանական, և անգլիական նավերի վրա մարդիկ տագնապային սպասողություն մեջ եյին:

Յեղ հանկարծ այս կողմից, ուր անգլիական նավերն եյին, լսվեց համազարկի խուլ ձայն: Նույն բոպեյին գերմանական դրոշակակիր նավի վրա զալարապտույտ բարձրացավ զրոշը՝ «Կրակ Բաց անել», և նույն վայրէյանին «Դերֆլինգերի» ավագ հրետագործ հեռախոսի փողով ազադակեց, «Համագմբկա»:



Մեր լինգուսի ավագանձի պը:

Նովի քսաներկու թնդանոթներից միանգամից դուրս թռավ բոցը:

«Խոշոր հրետանի—դրանավոր արկեր,—հրամայում եր աղաք հրետավորը.—ուղղություն յերկրորդ զծային հածանավի՛ վրա ձախից, 102 տատիճան։ Արտգություն՝ 26 հանգույց, ուղղություն՝ արելիք—հարավ—արեվելիք։ Նշանառություն՝ ութսուն կարևոտ վային։ Մեր հակառակորդն ունի յերկու կայս, յերկու խողովակ և ելի մի նեղ խողովակ՝ կիս կայմի մոտ Նշանացույց—ձախ, տաս վեր—կեսը Շարունակել։ Նշանացույց—ձախ յերկու Զորսուկեսով ավելի պակաս կավճ։

Հրետանալին բռնկումներն այժմ անընդհատ փայլվառում եյին, ինչպես կայծակն ուժեղ փոթորկի ժամանակ։

Նովիրի մոտ հանկարծակի բռւմնում եյին վիթխարի շապրվաններ, վորոնք տախտակամածները ծածկում եյին ջրի հեղեղով։ Մովի վրա ծխի ոն քուլաներ եյին սողում։

Հանկարծ անզլիական հածանավերից մեկը ցցվեց հետեւի մասի վրա, քիթը ցցեց բարձր դեպի վեր, կարծես ճգնում եր դուրս թռչել ջրից։ Թնդաց մի պայթուն, նավը շուռ յեկավ ու կորավ ալիքների մեջ։

Ամեն ինչ այնպիսի արագությամբ կտտարվեց, վոր կոմի աղմկում համարյա վոչ վոք չնկատեց կորուստը։

Այդպես խորառակվեց առաջին նավը։ Նրա ամբողջ անձնակազմից աղավեց միայն յերկու մարդ։ Հաղար քսաներկու մարդ խեղզվեցին։

Մի ըսպեյից հետո պայթեց անզլիական մի այլ նավ։ Նրա հետեւի մասը վերե ցցվեց։ յերեսում եր, թե ինչպես են ողում պատվամ պտուսակները, դռնակից թափվում իրերը, իսկ կորչքի աշտարակից շտապ դուրս եյին սողում մարդիկ։ Վիթխարի նավը կարծես թե սկսեց յերկու մասի բեկվել։ Հետո նա վեր թռավ ողի մեջ բարձր ու անհետացավ ծիրի սյունի մեջ։ Հետ յեկավ նա արդեն վսրպես բեկորների կարկուտ ու թափվեց ծովը...

Այդպես ընթանում եր ճակատամարտը գերմանական նավատորմի բացարձակ գերակշռությամբ և զարմանալի ել չեր։ Հեղվոր նա անհամեմտատ ավելի մեծ եր, քան անզլիական նավատորմի այս մասը։

Բացի զրանից, շուտով պարզվեց, վոր գերմանացիները միւրի կարեոր առավելություն ել ունեն։ Նրանց նավերը դիմա-

Դում եյին իրար հետեից դիպչող բազմաթիվ հարվածներին, նըսնց զրահը շափականց ամուր եր:

Սովորակալ Շենքը նախորոք հաղթահակ եր տօնում:

Յեզ հանկարծ՝ միջանի ըովեյում դրությունը փոխվեց:

«Հորիզոնի ամբողջ կիսաշրջանը հյուսիսից դեպի արևելք, — պատռում եր ծովակալ Շենքը հնառ, — հանկարծ փոխվեց հրեղեն ծովի գեռ նավերն իրենք չեյին յերեռւմ, բայց հորիզոնը փաթաթող ծխի ամպերում

միալար փայլատակում

եր անդիթական թնդանոթների կրակը»:

Այդ անդիթական հաճանակվերին ոգնու-

թյան եր գալիս ամ-

բող? անդիթական

նավ-տորմը՝ Մեծ նա-

վատորմը, ծովակալ

Տելլիկոյի հրամանա-

տարությամբ,

Ինչպես կարող եր

այսպիս պատահել, Ին-

չեւ մեծ նավ-տորմն

այսոր այստեղ ե, և

զայ թե իր նավահան-

դըստում՝ Որկնեյան

կղղիների մոտ:

Մըթե զերմանա-

կան նավատորմը, անգ-

լիցիներին ծուղակի

մեջ քաշելու փոխա-

են, ինքն ե ծուղակ

Այս այդպիս եր:

Յեզ ամեն ինչի մեջ մեղավորն ինքը՝ ծովակալ Շենքն եր

Նա բավարար չափով չեր մտահոգվում զինվորական գաղտնիքը պա-

հելու մասին. Նա իր հրամաններն ուղարկում եր ուղիղոյի միջո-

ցով, իսկ հակառակորդն այդ հրամանները վորսում եր և զերծանում:

Գերմանական նավատորմին հանդիպելու զուրս յեկած անգ-

լիցիան առաջին նավախումբը շատ լավ գիտեր նրա քանակը՝

Նա անհավատը կովի բռնվեց միայն նրա համար, վորպեսզե



Այդուհանդանուց անդիթական առա-

ջին նավը:

պահի զերմանական նավերին և ժամանակ տա արդեն նամբա ընդ-  
կած միծ նավատառը մին մոտենալու ճակատամարտի վայրին:

Շովակալ Շենը չմտահռովվեց նաև այն բանի մասին, վոր-  
ժամանակին ուղարին հետախուզության ուղարկեր. և առա նա  
այժմ դեմ առ դեմ կանդնած և հաջորդ հիսուն ամենաուժեղ  
նավերից կազմված անգլիական նավատորմի տառն:

Մեծ նավատորմը լրիվ ընթացքով գալիս եր հանդիպելու  
Բաց ծովի նավատորմին. Անգլիական ըորոր նավերում զանգերն  
արդեն մարտի տագնապի աղջանշանձեր եյին տվել Գերմանական  
նավատորմի ճակատապիրն արգեն վարովված եր: Հիմա Զելլիկոն  
նրան խկույն կազմի բր ճանկերք մեջ.

Բայց ինչու ծովակալ Զելլիկոն չի սկսում մարտը, ինչը յե-  
պասում նա:

Բանից դուրս յեկավ, վոր ուղղության հաշվարկումի մեջ  
անգլիացիների մոտ ինչ վոր սխալ եր տեղի ունեցել: Մեծ նա-  
վատորմը մոտեցել եր ճակատամարտի վայրին վճչ այն կողմից,  
վորտեղից վոր հաշվի յեր տեղը, և վոչ ել այն կարգով, վոր հանձ-  
նաբարված և կանոնադրությամբ:

Զգույշ ծովակալը վարանում եր կանոնադրությունը խան-  
գարել Ժամը վեց և տասնեւհինդ բոպերին նա ռադիոյի միջոցով  
հրամայեց մեծ նավատորմին վերակազմվել: Քսանեւհինդ բոպել Մեծ  
նավատորմը շուռ ու մուռ եր գալիս: Ցեղ յերբ վերջապես նա  
բացվել սկսեց, գերմանական նավատորմն արդեն կարողացել եր  
հեռանալ նրանից, տեղում թողնելով միայն մի խփած նավ:

Թվում եր, թե Բաց ծովի նավատորմը, վոր պատվեց միայն  
անսպասելի հաջողությամբ, այժմ պետք և արագընթաց սլանար  
զեպի տուն, իր պաշտպանված ապաստարանը:

Սակայն քսան բոպե չանցած՝ ծովակալ Շենը իր նավա-  
տորմը նորից դարձրեց անգլիացիների հանդեպ: Ինչու այդպես  
վարվեց նա: Նրա համար արդյոք, վոր վճռական մարտի բռնվի  
անգլիական ամբողջ նավատորմի հետ կամ միայն նրան համար,  
վորպեսզի անակնակալ գրոնով կորուստ պատճառի հակառակորդին,  
իսկ հետո նորից նահանջիր Անհայտ եւ Ինքը ծովակալ Շենը  
հետագայում իր վարմունքը զանազան ձեմքով եր բացատրում:  
Բայց նրանք, վորոնք այդ որը նրա հետ միասին նավի վրա  
յեն յեղել, լավ ելին հիշում նրա առաջին բացատրությունը— Եյ-  
պիս, —ասաց նա, —յես վրոշակի նպատակ չունեյիր:

Բաց ծովի նավատորմը շաբաթվեց զեղի Մեծ նավատորմի կի-

սաշրջանիւ ուղիղ մեջտեղը, ուղղուկի անգլիական բոլոր թնդանոթների կրտակի տակ:

Արեգակն արգեն ցած եր կախվել յերկնքում. ծովի վրա բարձրանում եր թեթևվակի մառախուզ. Հակառակ կորդը պարզ տեսնում եր զերմանական նավի ըրը. մայր մանող արեգակը լուսավորում եր նրանց. իսկ անգլիական նավերը համարլու արդեն անհետացան յերեկոյան մառախուզի մեջ:

«Դերֆիննկերը» շարժում վորպես առաջիններից մեկը գնում՝ եւ, հակառակորդի թնդանոթների հանդեպ, վորից նա մեկը մյուս միտերից հարվածներ եր ստանում:

Ամեն մի հարվածի ժամանակ նավը միայն ցնցվում եր ու դողում, ինչպես ամուր ձգված լարը. նրա բոլոր հեռախոսային ու բանակցության խողօվակներով կայծակի ճայթյուններին անման անցնում եր խուլ դղբղյունը:

Բայց առա գնդակը կոպավ ուղիղ հածանավի զրահավոր աշտարակին և ծակեց նրան: Վայրկենապես բռնկվեցին վառողի լիցքերը:

Այդ ժամանակ աշտարակում յոթանասունյոթ նավաստիներ կային. հինգին հաջողվեց ազատվել: Յոթանասուն յերկումը վողջվազջ այրվեցին այնաեղ:

Մի ուրիշ արկ կպավ մենախցիկին, վորտեղ գտնվում երավագ. հրետափորը: Մանր, զրահապատ դուռը թնդյունով պոկվեց: Դեղնաւեկանաշագույն թունավոր գաղերը սողացին մենախցիկը:

Մի նոր արկ ծակեց հետեւ մասի աշտարակի կտուրը: Սյունի պես վերև գալարվեց բոցը: Աշտարակում բոլոր մարդիկ վոհնչացան...

Միշտ նորանոր արկեր հարվածում եյին «Դերֆիննկերին»: Բոլոր նավախցերն արդեն ավերվել եյին. ատխատակամածերը վերածվել առշեղների կույտերի. ռադիոանտենները թափված եյին, լուսարձակները նավակորդից կախ ընկած լողում եյին ալիքների մեջ:

Բայց նավի հենց սիրաը, նրա մեքենաների բաժինն անփառ եր մեցել նա պաշտպանված եր տառնձնապես դիմացկուն պողպատով:

Մեքենական բաժինը դեռ աշխատում եր, և «Դերֆիննկերը» հրամանը կատարելով առաջ եր շարժվում:

Նրա թնդանոթները համազարկ համազարկի հետեւ եյին ապալիս:

Ավագ հրետավորն այլնս հռւյս չուներ դիպղնելու անդիմական նավերին. մասախուղի ու ծխի մեջ նրանք չեյին յերեսում Բայց նա զիտեր, վոր յեթե «Դերֆլինգերի» թնդանոթները դաշտաբեն վորոտալուց, մարդիկ նավի վրա իրենց բոլորովին անպաշտպան կղզան, և հռւյսահատությունը կպատի անձնակազմին:

«Դերֆլինգերն» տռաջ եր գնում: Միախառն բոցի յերկու այսն գալարվելով ձգվում եյին նրա վրա, ինչպես թաղման յերկու վառ կերոն...

Ընդասենը քառորդ ժամ տնեց՝ այս սարստիելի լողը: Յերե նա շարունակվեց ելի միքանի բոպե, «Դերֆլինգերն» ու գերմանական մյուս նավերը խորտակման պիտի դատապարտվեյին:

Բայց հենց այդ ժամանակ մարտի մեջ տեղի ունեցավ մի նոր ու վերջին բնկում: Ճովակալ Զելլիկոն նորից հրամայեց իր նավատորմին վերակաղմվել: Նա հաղորդագրություն ստացավ (ինչպես հետագայում պարզվեց՝ սխալ), թե ինչ վոր մատիկ տեղում գերմանական սուլդանավեր են յերեացել Նորից անդիմական նավերն սկսեցին ծովում ֆիզուրաներ գծել:

Այդ բանը ծովակալ Շենքին ժամանակ տվեց հետ վերցնել իր հրամանը և Բաց ծովի նավատորմը դուրս բերել ծուղակից, վորի մեջ նա ինքն եր գցել նրան:

Գյշերը վրա հասավ: Ամզերը պատեցին յերկինքը: Ծովը բոլորովին մթնեց:

Այստեղ, վորտեղ մի ժամ տռաջ կոիր է եր գնում, այժմ զատարել եր ու հանդարա: Միայն յերկու նավ եր մեռցել ճակատամարտի վայրում: Նրանց զրահը կարմրել ու պայծառորեն շողում եր մթության մեջ: Նրանց մեջ այրվում եր նավթը: Յերկու նավի վրա ել վաղուց արդեւ վոչ մի կենդանի մարդ չկար: Վաշ վորքի կողմից ուղղություն չստանալով՝ լողում եյին նրանը հռանքի հետ, ինչպես ուրվականներ:

Իսկ այդ ժամանակ Բաց ծովի նավատորմը, ճրագները հանգ ցըրած, արագությամբ գնում եր դեպի հարավ-արևելք, ուղղվելով դեպի իր նավահանգիստը: Գերանական նավերի շարքում վերջինը գնում եր «Դերֆլինգերը»:

Նրա հրետանային աշտարակները քարութանդ եյին յեղել զրահը բաղմաթիվ եեղերով ծակեկվել եր, նավամբարները՝ ջրով լցվել «Դերֆլինգերի» վրա սպանվածներն ավելի շատ եյին. քան կենդանի մնացածները:


Գերմանացիները գտնդադել չեյին կարսդ՝ լուսարձակներով ցուստվորելով ծովը՝ Բաց ծովի նավատորմը լըիվ է նթացքով կարում-

անցնում եր այս Շռվակալ Զելիկոն, ցանկանում եր նրանց հա-  
նապարհը փակել:

Առկայն Զելիկոյին այս մանյովքն ել չհաջողվեց:

Կես դիշերին մեծ նավատօրմի հետեից ինչ-վոր նավեր սո-  
վալով անցան: Անզինական հրամանատարությունն սկզբում նրանց  
իրենց նավերի տեղ ընդունեց: Բայց իրոք դրանք հենց զերմա-  
նական նավատօրմի նավերն եյին:

Բարեհաջող կերպով խուսափելով հետապնդումից՝ նրանց



«Դեշի լինզերն առաջ եր դնում: Միի սյուները գալարվելով  
ըստէրոնում եյին նրա վրա, ինչու թաղման կերպները:

Հուտով հասան իրենց նավահանգիստը և փակվեցին այնտեղ՝ այժմ  
արդեն մինչև պատերազմի վերջանալը:

Այսպես վերջացավ պատերազմների պատմության մեջ այս  
խոշրագույն ծովային ճակատամարտը: Այդ մարտում վոչնչա-  
ցան քանից ավելի նավեր, և գերմանական, և անգլիական: Մա-  
կաղթող դուրս յեկավ այնտեղից: Անզինական նավատօրմը, չնա-  
յած իր ուժերի խիստ գերակշռությանը, այդպես և չկարողա-  
ցավ դուխ բերել գերմանական նավատօրմի վաշնչացումը: Բայց  
գերմանական նավատօրմն ել իր խնդիրը շկատարեց, Գերմանիա-  
կան ծովային բլուղադայից:

## ՊԱՏԵՐԱԶՄ ԶՐԻ ՏԱԿ

Բլոկադան շարունակվում եր, Սովոն ավելի ու ավելի յերասատկանում, Հիվանդանոցային աղյուսագծված թղթի վրա և զին անզսպելիորեն վերև եր բարձրանում:

Բայց զա, իւարկե, չեր շփոթեցնում Գերմանիայի ղեկավարներին, Նրանց ուրիշ բան եր վախեցնում: Սպառվում եյին ռազմական պաշարները, առանց վրանց անհնար եր պատերազմ վարել Նավթը, պղինձը, անազը, ալյումինը, մեքենաներին քսնու յուղերը չեր բավականացնում: Ռետին բոլորովին չկար. ստիլված յեղան ավտոմոբիլներն արտադրել առանց շիների, զարանակավորված անիվերով: Խնճնաթիւններին վառելանյութը չեր բավականացնում...

1917 թվին գերմանական հրամանատարությունը վօրոշեց ինչ զնուվ ել իինի ազատել ծովային ճանապարհները: Այս, ինչ վոր մինչ այդ չհաջողվեց կատարել գերմանական ռազմական նաև վերին, այժմ ճանաձնաբարվեց սուլանավերին:

Գերմանիան սկսեց սուրջրյա անողոք պատերազմ:  
ի՞նչ և նշանակում սուրջրյա պատերազմ:

Մինչև 1914 թիվը վոչ մի կառավարություն, վոչ մի ծովակալություն ինչպես հարկն ե չեր գնահատել սուլանավերը: Մովակալները սովորել եյին նովի հղորության մասին դատել ըստ նրա մեծության, ըստ նրա վրա դրված թնդանոթների թվի, ըստ նրա կորպորածի դիմացկունության: Իսկ այդ բարորի մեջ, իւարկե, ջրասույզ նավը հետ և մնում նավից: Այդ պատճառով ել բարձարթիվ ծովակալներ պնդում եյին, թե սուլանավը յեղած-չեղածով մի փոքրիկ, վատ զինված, դյուրարեկ նավեկ ե, «Ճովային խաղալիք»:

Նրանց հաշվի չեյին առնում, վոր զրու փոխարեն սուլանավը ունի մի առանձնահատուկ առավելություն—անհկատելիորեն մոտենալ հակառակորդի նավին: Իսկ անհրաժեշտության ղեղքում՝ համարյա մի ակնթարթում անհետանալ հակառակորդի աշջից:

Այդ առավելությունն իրեն զգալ ավեց պատերազմի սկզբից հետ շատ շուտ:

1914 թվի սեպտեմբերի 22-ին անզյիական յերեք հածանավ՝ «Արտկիր», «Կրեսովի» և «Հոգ» կես գիշերին Դարվիչ նավահանգընությունը բաց ծով դուրս յեկան: Ուժգին քամի յեր փչում, ծովը խիստ ալեկոծված եր: Բայց այդպիսի մեծ նավերի համար այս

ալեկոնծությունը վատանգավոր չեր: Հաստ զրահ հաղած հսկա նա-  
վերն ամբողջ գիշերը զնում ենին դեպի հյուսիսի:

Իսկ նավերի հետեւից այդ ժամանակ ջրի տակով գնում եր  
զերմանական «Ա-Զ» փոքրիկ նավակը, Նա անդլիւական հա-  
ծանավերից յուրաքանչյուրի համեմատությամբ չափազանց  
փոքր եր: Նրա ամբողջ անձնակազմը բաղկացած եր քսան  
հոգուց:

Յերբեմն նավակը ջրից դուրս եր դալիս և իր ապակե ոչ-  
քով՝ պերիսկոպով դիտում եր ծովը: Այդ ժամանակ հորիզոնի  
վրա նու տեսնում եր անգլիական հածանավերի կրակը, իսկ նա-  
վերի վրայից սուլզանավի պերիսկոպը նկատել չեր կարելի: Նա  
բոլորովին անտեսանելի յեր մնում ջրային բլրակների արան-  
քում:

Առավոտյան քամին հանդարտվեց, ծովը խաղաղվեց, Արե-  
գակը դուրս նայեց: Անգլիական հածանավերի վրա նավաստինե-  
րը գործի անցան, սկսեցին տախտակամածը լվանալ, թնդանոթ-  
ները մաքրել:

Յեզ, հանկարծ, զորդոց լվեց: Անգլիական հածանավերից  
մեկը «Արուկիր»-ը շուր յեկավ և սկսեց արագությամբ սուզվել:

«Հոգի» վրա լսեցին պայթյունը և մտածեցին, թե «Արու-  
կիրը» ականի ընդհարվեց: «Հոգը» ոգնության շատպեց «Արու-  
կիրին»:

Բայց այսուեղ վորոտաց յերկրորդ պայթյունը, և «Հոգը  
գնաց ջրի հատակը, Տառը բոպեյից հետո ջրի պատովածքը փակ-  
վեց նրա վրա:

Այն ժամանակ «Արուկիրին» և «Հոգին» ոգնելու շարժվեց  
«Կրեսսին», վորպեսողի խեղդվող մարդկանց հավաքի: Ու նորից  
դղրդաց վորոտը: Չազատվեց նավախմբի և վերջին հածանավը՝  
«Կրեսսին»:

Մի փոքրիկ նավակ իր տորպեդային կրակոցներով այսպես  
վոչնչացրեց յերեք խոշոր նավերից բաղկացած անդլիւական մի  
նավախմբումը: Սուզանավը չկորցրեց և վոչ մի մարդ իսկ բրիտա-  
նական նավատորմը կես ժամվա մեջ կորցրեց հազար հարյուր  
նավաստի:

Այդ որը և անգլիական, և գերմանական ծովակալները հաս-  
կացան սուզանավի մարտական նշանակությունը:

Ի հարկե, անգլիական ոազմանավերն սկսեցին այդ որվա-  
նից ավելի զգույշ լինել, և սուզանավերն այլիս չեյին կազող

այդքան հեշտությամբ նրանց ջրասույզ անելու Բայց գերմանական հրամանառությունն ամեննեին ել հույս չեր զբել թե իր սուլդանավերը պիտի անզիւխական ռազմանավերի հետ կովկեն. նրանց համար անհամեմատ ավելի ձեռնուու յեր վորսալ հակառակորդի առևտրական նավերը.

Վոշնչացնել անզիւխական առևտրական նավատորմը, սովոր մատնել Անզիւխան—ահա վորն եր ստորդրյա պատերազմի պլանը:

Բայց, Անզիւխին ներմուծումից զրկելու համար,— դատում եր գերմանական հրամանառարությունը, — միայն անզիւխական նավեր խորտակելը դեռ քիչ ե, պետք է վոշնչացնել նաև Անզիւխի հետ առևտուր անող չեղող յերկրների նավերը,

Նախքան այդպիսի խիզախ պլան ընդունելը, գերմանական կառավարությունը շատ եր տատանվում. Նու վախենում եր, վոր գեռման պատերազմին չմասնակցող յերկրներն ել Գերմանիային դեմ գուշակ կամ. յեթե գերմանական սուլդանավերն սկսեն նրանց նավերը խորտակել:

Միայն 1917 թվին, յերբ Գերմանիան ցամաքի վրա հաղթելու հույսը համարյա կորցը եր, վերջապես վորոշեց դիմել ստորդրյա անողոք պատերազմի:

Բլոկադային Գերմանիան ըլոկագարով պատասխանեց, Այդ ժամանակից սկսած պատերազմը տարվում եր վոչ միայն ջրի վրա, այլև ջրի տակ. Ջրի վրա ռազմանավերի ողակը սղմվում եր Գերմանիայի շուրջը, Ջրի տակ՝ գերմանական սուլդանավերի ողակը կծկվում եր Անզիւխի շուրջը:

Ով մաս կիսնդի:

Կարելի յեր կ-ըծել, թե ծովը ի՞ն յե վիստացող սուլդանավերով: Նրանք հանկարծակի հայտնվում եյին, ջրասույզ անում մարդատար և առևտրական նավերն ու կրկին անհետանում ջրի տակ, վորպեսզի արգեն մի ուրիշ տեղում հայտնվեն: Խոկ քանի՛ հարցուը կամ, թերեփս, քանի՛ հաղար սուլդանավ ուներ Գերմանիան: Այն ժամանակներում, ինարկե, վոչ վոք չզիտեր: Խոկ այժմ դա արդեն զարդանիք չե:

Սովային պատերազմի ամենայեռուն ժամանակ ընդամենը գերմանական հիսուն սուլդանավ եր լողում ծովում: Հակառ հինգհարյուր սուլդանավորդ նավաստիներ — ահա ովքեր եյին սպառնում կործանելու ամբողջ անզիւխական առևտրական նավատորմը:

Այս հիսուն սուլդանավերը բանելու և վոշնչացնելու համար, միմիայն Անզիւխում մոքելի կացիայի յեր յենթարկված ութ հա-

Հյուր հազարից վոչ պակաս մարդ: Հարյուրավոր ռազմանավեր հետապնդում եյին սուլանավերին Յերեք հազար ողջապարիկներ, ինքնաթիւներ և դիբիժարըներ դիտային ծառայության եյին գրված: Չորս հազար առևտրական նավեր զինվել եյին թնդանոթներով: Յեզ միմիայն Հյուրսիսային ծովում սուլանավերի գեմ գրված եր 140.000 հատ ական: Բայց ծովում սուլանավերին գտնելը նույնքան դժվար էր, վորքան ասեղը՝ խոտի գեղում:

1917 թվին ապրիլին սուլանավերը ջրասույզ արին յերեք հյուրյուր նավ: Խոկ նավերն այդ ժամանակի ընթացքում վոշնչաց ցին ընդամենը միայն յերկու սուլանավ:

Մովով լողալը յերեք դեռ այնքան վտանգավոր չեր յեղել, վորքան այդ որերին:

Ամեն կողմից սարսափելի լուրեր եյին գալիս:

Ալիքներն ափ են հաւել մի լաստ, վրան լիքը մեռելներ: Պրանք սուլանավի կողմից խորտակված նավի ճանապարհորդներն են: Նրանք ծովում մեռել են ծարավից:

Ցամաքից հեռու՝ բաց ովկիանոսում զինվորական նավը պատահեց ձիերի մի ամբողջ յերամակի: Ձիերը լողում եյին ովկիանոսի մեջ,— նրանք ջրահեղձ եյին լինում և մեկ-մեկ գնում ծովի հատակը: ակնհայտ ե—այն նավը, վոր իր նավամբարում փոխադրում եր այդ ձիերը, քիչ առաջ ընկղամել եր սուլանավի ծողմից:

Հորանդական ձինորսներն իրենց աչքով տեսել են, ինչպես Ատլանտյան օվկիանոսում մարդատար նավը իջել ե հատակը: Մարդիկ չեն կարողացել անգամ արձակել փրկարար ժակույկներն ու անոգնական թպրում եյին ջրում, նրանցից վոմանք հատակն են իջել, մյուսներին շնաձկներն են խժուել:

Ստոր ջրյա պատերազմը քանի զնում ավելի դաժան եր դառնում: Վերջապես գերմանական հրամանատարությունը կարգադրեց խեղել վոչ միայն մարդատար, այլ մինչև ռնգամ և հրվանդներ ու վրբավորներ փոխազրող հրվանդանոցային նավերը: Կարմիր խաչի դրոշակը դադարեց վորպես պաշտպան ծառայելուց:

Այն ժամանակ Փրանսիական հրամանատարությունն իր հերթին կարգադրություն արեց, վորպեսզի ասեն մի հիվանդանոցային նավ իր հետ վերցնի միքանի գերմանական զերի ընկած սպաներ: Իրենք փոխ վըեժ գերմանական հրամանատարությունը Փրանսիական զերի սպաներին ուղարկում եր կրակի առաջին գծերը:

Դաշնակիցների ամբողջ ուժերը նետված եյին պայքարի՝ սուզանտվերի դեմ անգլիական, ֆրանսիական, ամերիկական բոլոր գյուղաբարներին մի պատվեր եր տրված—անտեսանելի թըւնամու դեմ միջոցներ փնտոել Յեզ արդ միջոցները շուտով դրանցվեցին:

Սովագնացները հիշեցին հինավորց, վաղուց ի վեր չզորացրված մի յեղանակ—բարանային հարվածը նկատելով սուզանտվին, առավել չեր փախչում նրանից, ու աշխատում եր, վորքանկարելի յի, ավելի շուտ հասնել նրան, հարվածնել նրան քթով, յերկու կես անել նրանու:



Առաջնորդի դժուկը հետո.

Նազի մռաենալը, Թողարկողներն սկսեցին զինված նավերին անդենի կերպարանը տալ:

Այդպիսի թակարդ-նավերը բարձվում եյին հակերտվ ու առականերով, իսկ նրանց յնդրերն ու խողովակները ներկվում եյին այնպիս, վորպեսզի նավը վոչչով չառարերվի սովորական առերրական նավից, Թողարկված նավը ծով եր գուրս գալիս տարր զբոշակ պարզած, վորմն չնպառ յերկրի գրոշակով, Յերբ զերծանական սուզանտվը հայտնաբռում եր այդպիսի մի նավ է մոռանենամ եր, պատրաստվելով ընկզմել նրան, նավաստիները՝ հաջում եյին խցանե գոտիներ, այնպիս ձևացնում, վոր անկարգորեն նետվում են փրկարար մակույկների վրա, տախատկամոծի վրա տաղնահար գեր-գեն են վազվզում, Ռազինհեռազրիչը կնդ աղդանան ե ուղարկացնում սկսության մասին՝ «SOS», Ռողովակից գուրս եր պրձնում դուրսառ թանձր ամոլ, կարծես թե շողեկաթսան վնաս-

շանձք և ստացեր Սուլդանավին ճլ ավելի յեր մռահնում նազին,  
վուպեսսդի վերջին հարվածը հասցնի

Յեզ այդ բուպեյին հանկարծ նավի վրա արագ բարձրանում եք  
անդիքական դք ոչակը, հակերի հետեւ թագնված թաղանոթները կը ա-  
կազմ եյին դիմավորում թշնամու սուլդանավին...

Պայքարի մի այլ միջոց ել հնարինց, վոր շատ նման եր յեր-  
մու հոդար տարի առաջ հոսմայացիների կողմից գործադրվող մի-  
ջոցին:

Հին Հոսմում կը կեսային հանդիսատեսների սիրելի զվար-  
ճություններից եյին այն կրիվները, վորումք կազմակերպվում  
եյին հրապարակում առորուել - գլադիւսոր գնրիների մեջ։ Այդ-  
պիսի կրիվներից ամենագագա՞նը սնկուտորի և ռետիւրի մնա-  
մութան եր Սեկուլարը հրապարակ եր զուրս գալիս լրիվ կերպով  
պինդած, վահանում և սրով իսկ ռետիւրը համարյա անպաշտպան։  
Դա մի ձեռքում բռնում եր փոք-  
րիկ յեռաժոնին, իսկ մյուս ձեռ-  
քում՝ ցանց Նա աշխատում եր  
հենց այս ցանցը գցել սնկուտորի  
պլութը, Ցերընին այդ նըան հա-  
ջողված եր Ցանցով բռնված  
սնկուտորն ընկնում եր գետին,  
թպրում, աշխատելով տեղից  
բարձրանալ բայց ամեն մի շարժ-  
ման հետ ավելի ու ավելի յեր  
խճճում ցանցում, ինչպես ճան-  
ճը վստայնում։ Այն ժամանակ ռետիւրը վազում եր զեզի նա  
և իր փոքրիկ յեռաժոնիով կոտըում նըա կոկորդը...



Այն ժամանակ ռետիւրը կոչում  
եր սնկուտորի կոկորդը,

Անդիբական նավերը, ճիշտ այնպես, ինչպես հոսմանական  
կը կեսի ռետիւրը, այժմ ցանցով դինված եյին ծալ զուրս կալիս։  
Նավի հետեւից հեռու ջրում ձգվում եր աննկատելի պողպա-  
տյա ցանցը։ Սուլդանավը մոտենում եր նավին և ընկնում ցանցը՝  
ինչպես ձուել Աշխատելով զուրս պրծնել, նա ավելի յեր խճճում։  
Նըա պատուտակը կոտըում եր Սուլդանավն յերբեք վերև  
գողալ չեր կարողանում, նըա անձնակադմը ջրի տակ շնչառեղձ  
եր լինում, վոչնչանում։

Սուլդանավերի գիմ պայքարելու համար բազմաթիվ միջոց-  
ներ հնարինին Այս միջոցներն ոգնում եյին -- այժմ ավելի քիչ  
նավեր եյին խորտակվում, քան առաջ Ցեր, այնուամենայնիվ, այս

միջոցները չեյին, վոր Անգլիան ազատեցին պարտությունից ու սովորությունները, թնդանոթները, խորընթաց ոռումքերը չեյին, վոր փրկեցին նրան, Անգլիային փրկեցին նրա գործարաններն ու նավաշինարանները,

Անգլիական և ամերիկական նավաշինարանները յերբեք այդպիսի քանակությամբ ու այդպիսի արագությամբ նավեր չեյին պատրաստել Սուլպանավերն ընկղմում եյին նավերը, բայց շարժեց զուրուս յեկածների փոխարեն միշտ նորերն եյին շարք մըտնուալ:

Դերմանիական հրամանատարությունը սխալվել եր իր հաշիվներում: Անգլիական նավատորմը վոչնչացնելու համար ծովում պետք եր ունենալ վոչ թե տասնյակներով, այլ հարյուրավոր սուզավուեր:

Դերմանիայի և Անգլիայի սոորջրյա պատերազմը վերածվեց նավաշինարանների մրցության: Գերմանիականները սուլպանավեր եյին պատրաստում, անգլիականներն ու ամերիկականները՝ նավեր: Յեկ այս մրցության մեջ Դերմանիան պարտվեց.

Սոորջրյա սուզանալիքն սկսեց տատիճանարար թուլանալ-Անգլիան կարծես սկսեց կազմուրվել այն հարվածներից, վոր Դերմանիան հասցըրել եր նրա նավատորմին:

Յեկ, այնումնայնիվ, վատանզը գեռեան շատ եր մեծ: սուլպանավերը շարունակում եյին խորտակել նավերը:

Բայց հենց այդ ժամանակ գործն անսպասելի ընթացք ընդունեց. Անգլիան Դերմանիային յերկու անգամ իրար հետեւից հարված հասցըրեց: Առաջին հարվածը հասցըրին անգլիական ծովագնացները, յերկրորդը՝ անգլիական դիվանազետները:

## ԶՐՈՒԵՑ ԶԵԵԲԻԹՈՒԳԵԱՆ ՌՊԵՐԱՑԻԱԾԻ

### ՄԱՍԻՆ

Անգլիական հրամանատարության պլանն այսպես եր. յերեաննար և սուլպանավերը վորսալ բաց ծովում, պետք և նրանց վնչնչացնել իրենց կայտնում:

Դերմանիական սուլպանավերի գլխավոր բազան բերդիական բը յուզգի քաղաքն եր, վոր զեռ պատերազմի սկզբում զբավել եր զերմանական զորքը: Բրյուզգի քաղաքը գտնվում և վոչ սուլպանի ծովի մոտ, այլ ափից տասնհինգ կիլոմետր հեռու Սովի հա-

Նա միացած եւ լույն ու խոր Զեերը յուղյան ջրանցքով։ Հենց այդ ջրանցքով եւ սուզանավերը ձով եյին դուրս զալիս։

Թվում ե, թե անգլիացիների համար ավելի հեշտ կլինելը բախանցել ջրանցքը և այնուղղ վոչնչացնել սուզանավերը։ Սակայն դա անհնար եր։

Յերկու հարյուր քսանհինգ գերմանական թնդանոթներ պահպանում եյին ջրանցքը։ Մինչ անգլիական նավերն իրար հետեւվից կարժվեյին ջրանցքով, գերմանացիները կարող եյին մեկը մյուսի հետեւից վոչնչացնել, ինչպես սպանում են յեղներին սպանդանոցում։

Բայց յիթե ջրով չեր կարելի հասնել մինչև Բրյուգդեն, ապա հասրավոր ջմր մոտենալ նրան ցամաքից։ Յերեք ամսվա ընթացքում 1917 թվի հուլիսի 31-ից մինչև նոյեմբերի 10-ը անգլիացիները տասնվեց անգամ գրոհի յեն դուրս յեկել գերմանական սոզմանակատի այն տեղը, վորտեղից վոր պետք եր ճեղքել Բրյուգդեյին հասնելու համար։ Այս դրուների ժամանակ նրանք կորցրել են ջորս հարյուր հազար մարդ։ Իսկ առաջ են շարժվել ընդամենը ութ կիլոմետր։

Վահ, ցամաքի կողմից ևս Բրյուգդեն անմատչելի յեր։

Մնում եր ողային ճանապարհը։ Ջմր կարելի արդյոք Բրյուգդեն ջախջախել ողից։

Անգլիական սավառնակները շատ անգամ են փորձել ոմբակոծել սուզանավերի կայտնը։ Միայն կես տարվա մեջ Բրյուգդեյի վրա կատարվել ե յոթանատուն յերկու ողային հարձակում, նետվել ե հազար իննհարյուր քառասույթոթ ոռումք։ Բայց գերմանական սուզանավերը կանգնած եյին բետոնե տունելներում՝ հաստ ու դիմացկուն կամարների տակ։ Ծումքերը չկարողացան ծուկել այս կամարները։

Այսպիսով, վոչ ցամաքի կողմից, վոչ ծովից, վոչ ողից գերմանական սուզանավերի բազային չեր կարելի մոտենալ։

Անգլիական հրամանատարությունը շուշ գլխի ընկավ այդ նա փոխեց իր պլանը։ Սուզանավերը վոչնչացնել անկարելի յենշանակում ե՝ պետք ե նրանց անվասա դարձնել առանց վոչնչացնելու։ Դրա համար պետք ե նրանց մուտքը դեպի ծով արգելել, փակել նրանց Բրյուգդեյում։ Իսկ ինչպես անել այդ։ Միայն մի միջոցով—Զեերը յուղյան ջրանցքը կողպել եցանով փակել այն։

Վորպես խցաններ պետք ե ոգտագործվեյին յերեք հաս-

անդըլիական հին նավերու Վարոշվեց նըանց ներս տանել ջրանց-  
քի բերանը և ընկդոմը

Սակայն այս պլանն ել շատ զժվար եր իրագործելու Զրանցքի  
բերանին համեմելու համար պետք եր նախ անցնել ձովապատճեղի  
մուտքի Խոկ պատճեղի վրա զրված եյին գերմանական յերեք մարտ-  
կոցներ, վորոնց ջըտնցքի մուտքը ոմբակոծման տակ եյին պա-  
հումը Շովապատճեղի մոտ գիշերու ցերեկ հակում եր ախանակիրը,  
Ջրանցքի բերանին մատենալու բարը տեղերում ականներ եյին  
որված: Յեվ, վերջապես, ոլողապայա-պարաններով կապված չորս  
հատ բեռնատար նավեր՝ քարերով բարձած ոլինդ փակում եյին  
ջրանցքի մուտքը: Ահա թե վորքան խոշընդուներ կային ճանա-  
պարհին:

Ենվ, այսուամենայնիվ, չնայած այս ձեռնարկության որ-  
տասովոր դժվարությանը, համարյա անհուսալիությանը, անզիւ-  
կան հրամանատարությունը վճռեց այդ քայլն անելի Նա ամեն  
ինչի պատրաստ եր, միայն թե կարողանար աղասվել ստորջրյա-  
թշամուց:

Անզիւացիները ոլլանը մշակեցին չափաղանց իս ամքով:

Նըտնց նավերը պետք ե ծովապատճեղին մուտճային ան-  
նկատելիորեն, ծխային վարագույրով ծածկված: Նավերից մեկը  
կանգնում և ծովապատճեղի մոտ ու դեսանու իջեցնում այնտեղ:  
Գերմանական հրետավորները, իհարկե, թնդանոթները կդարձնեն  
հանգած գետանահի դեմ: Մինչ մարտկոցներն զբարդված կլինեն  
դեսանտի վրա կրակելով, կործանեման զատապարաված անզիւա-  
կանց յերեք նավերը կթափանցեն ջրանցքի բերանը և կխորա-  
սուղվեն:

Ամենից դժվարն այդ ժամանակ դեսանահի գործն եւ Նա  
պետք ե պատճեղի վրա դիմանա վրդան կարելի իւ յերկար ժա-  
մանակ, վորպիսպի նավերը կարողանան իրենց խնդիրը կա-  
տարել:

Ալլապիսի գործի համար կարող են պիտանի լինել միայն ամե-  
նահամարձակ մարդիկը: Անզիւական հրամանատարությունը վորոշեց  
կամավոր նավաստիններից ջոկատ կազմակերպել գետանահի համար:  
— Համաձամյն եք արդյոք դուք մասնակցել այս վատանգա-  
վոր ձեռնարկությանը:

Իսմավորներից ամեն մեկը պետք ե պատասխաներ այս  
միակ հարցին, վորոնե բացատրություն չպահանջելով: Ամբողջ  
մտադրության հաջողությունը կախված եր նրանից՝ կհաջողվ

արդյուք մինչև վերջին ըռպե՞ն գաղտնի պահել այս Մի շատակոս կարող եթ ամբողջ գործը փչացներ

Լայն զաշտում ինչ-վոր ամբություններ պատկերացնող կտավներ են փոված և դեսանտի համար ընտրված նավաստինները պավորում են դրուել: Նրանք ըոլորն ել հիւնալի հասկանում ենքն, վոր իրենք շատով պիտի և զրուեն ճիշտ այդպիսի ամբությունների վրա, բայց վոչ կապից, այլ ընտրնից, և վոչ վարժական դաշտում, այլ էպի զաշտում: Բայց վերտեղ, վեր ռողմանակառումն են գտնվում այս ամբությունները, վարժվողներից վոչ վոր չպիտեց այդ:

Նախապատրաստումից միքանի շտրաբը հետո նավաստիններին նառեցրին մարանուիտ ուղեկորվող մի նավ, Նրանք բոլորը վճռեցին, վոր իրենց ֆրանսիական հակառն են տանում:

Սակայն բաց ծովում նավաստիններին սպասում եր մի այլ նաող՝ «Վինդիկատիվ» հածանավը, վորի վրա և փոխազրեցին նրանց ըոլորին: Հածանավը շարժվեց գեղի մի մենավոր կղզի և ափերի մոտ խորիսի դցեց: Այսուղեղ միայն նավաստիններին հայտարարվեց, վոր նրանց տանում են Զեերրյուգներ:

Այն ըռովեյից, յերբ գաղտնիքը բաց արին, այլնս վոչ վարել թույլ չարվեց նավից հեռանալը Անգամ հիվանդներին ցամաք չեցին թոշնում, այլ փոխադրում եյին հարեվան հիվանդանցային նավը:

Նավաստիններին, ճիշտ ե, թույլատրում եյին նամակ գրել հայրենիք, ավելի ճիշտ ասած՝ վոչ թե գրել, այլ ստորագրել ուղանների վրա կույտերով գարսված եյին նախորդը տպված տեքտուրվ բացիկները — «Յես ստացա ձեր նամակը, կամ «Յես չեմ ստացել ձեր նամակը, «Յես ըոլորովին առողջ եմ», կամ «Եք առողջությունը լավ չեմ: Յուրաքանչյուր նավաստի իրավունքներ ընտրել ցանկացած բացիկը»:

Նավաստիններն որերն անց եյին կացնում բարեհաջող յեղանակի սպասերով և, վերջապես, կատարվեց նրանց ցանկությունը: Սավառնակներով ուղեկցված, «Վինդիկատիվն» ոժանդակ նավերի մի ամբողջ նավախմբի հետ դուրս յեկալ ծովը: Խավարի մնջ, դիշերով, անզլիական նավերը մտնեցան Զեերրյուգեյին: Արդեն աջ կողմից յերեսում եյին լույսի շերտերը, գերմանական լուսորձակների ճառագայթները: Ռակետները բոցավառվող ոճերի նման դաշտարվելով յերկինք եյին թռչում ու սուզվում ծովում: Արդեն

շավում եր թնդանոթների դղբղոցը, յերեսում եյին նրանց բռնկում-նե ըք, Առաջինը ինչպես, վորոշված եր նախորոք, կովի տուն սո-վառնակները, Գերմանական գենիթային թնդանոթներն սկսեցին-նրանց գնդակոծել: Բայց այդ ըստեյին քամին հանկարծակի փոխեց իր ուղղությանը, սկսեց հարս վից փշել: Դա նշանակում էր. ծխային վարագույր կախելն անհնար ե, քամին նրան հետ կը չի նավահամբի-ծովակալը հրամայեց հետ գարձնել նավերը, Լրիվ խավարի մեջ նա-հանջեցին անգլիական նավերը Զեերըյուղգեյից և վերադարձան-իրենց կզզին, առանց վորսե բանի համանելու:

Իսկ միքանի շարաթից հետո նրանք կրկին շարժվեցին-դեպի Զեերըյուղգեն, Այս անգամ ել նրանք ստիպված յեղան վե-րադառնալ կես ճանապարհից, վորովհետև ծովում խիստ ալեկո-ծություն բարձրացավ:


Վերջապես անգլիական նավերը յերրորդ անգամ ճանապարհ-ընկան. 1918 թվի ապրիլի 23-ի գիշերն անգլիական արագընթաց-կառերները բարորովին մոտեցան ծովապատճեղին և ծխային ծած-կույթ բաց թողին, Կատերների հատեկից, ծխի մեջ թագնված, պատճեղին մոտեցավ «Վինդիկատիվ» հածանավը. Բայց ալիքները դիզում եյին այնպիսի կատաղությամբ, վոր «Վինդիկատիվը» վոչ մի կերպ չեր կարողանում կանգնել պատճեղի մոտ իզուր եր նա-հեռում կատվի ճանկ-խարիսխները—նրանք միայն քերծում եյին-պատճեղը, պոկում բետօնի կտորներ և ընկնում ջուրը: Ընդա-մենը միքանի մետք եր բաժանում «Վինդիկատիվը» պատճեղից, բայց նավասանդուխք զցել, վոչ մի կերպ չեր հաջողվում: Այս ժամանակ «Վինդիկատիվին» ոգնության հասավ հարեան նավը. նա-հենվեց նրա կողքին ու սղմեց նրան պատճեղին:

Անմիջապես կամրջիկներ, սանդուխքներ զցեցին: Նավաս-տիներն սկսեցին մթության մեջ մագլցել պատճեղավ, Գերմա-նական մարտկոցը կրակ բաց արեց նրանց վրա: Ռմբացիքներն սկսեցին դղբղաւ, նոնակները սուլել, լուսարձակների անհանգիստ ճառագայթները դես-դեն ընկնել: Հրդեհների բոցը փաթթեց պատճեղի ապրանքատները, «Վինդիկատիվի» վրա կայմերն սկսե-ցին այրվել, խողովակը փուլ յեկավ, մենախցիկը քանդվեց: Իսկ նավասարիները միշտ բարձրանում ու բարձրանում եյին պատճե-ղի վրա: Նրանց զրուի յեր առաջնորդում լեյտենանտ Գարրի-սոնը,

«Գարրիսոնը հիանալի ֆորվարդ եր.—հետապայում նրա մա-մին հիշում եր «Վինդիկատիվի» նավապետը,—նա նեղ նավասան-

դուխքով համարձակությամբ գնում եր վերջին գրոհի, գեղի-  
ստույդ մաս։ Այդ գրոհը ֆուտբոլի զաշտում նրա շահած բոլոր  
գրանչների արժանապոր լրացումն եր։

Մինչ զեսանտը կռվում եր պատճեցի վրա, զբաղեցներով՝  
դերմանական մարտկոցները, անգլիական «Տ-3» սուզանավն—  
դրազված եր մի այլ վոչ ավելի պակաս կարելոր ուղերացիարվ—  
նա մտավ ջրանցքը նրա համար, վորպեսզի քանդի այն կամուր—  
ջը, զեղի վորն արդեն շատպում եյին մարտոցներին ոգնության—  
ուղարկված ջոկատները։ Սուզանավն առաջ ընկավ նրանցից։ Նա



### «Վենդիկուլը» կոնդուում և պատճեցի մաս։

Լանդենց կամրջի անցքի մասու Հրամանատարը նրան միացրեց  
պայթուցիչի մեխանիզմը։ Նովաստիներից մեկը վառեց պատ—  
ույզը։

Ենթակույթը բռպելից հետո «Տ-3» սուզանավը պետք է պայթեր—  
կամրջի հետ միասին։ Մի վայրկյան անգամ չեղ կարելի կորցնել։  
Սուզանավի անձնակազմը փոխադրվեց մատորային մակույկի վրա—


— Առաջ լրիվ թափով, — կարգադրեց հրամանատարը։

Բայց այսուղ պարզվեց, վոր մակույկն անընդունակ է վու—  
սիսյն լրիվ, այլ անգամ ամենազանդադ ընթացքի՝ նրա մոտումը

Հրաժարվեց ծառայելուց: Իսկ պայթուցիչի մեխանիզմը կանգնեց-  
նելն արդեն ուշ եր... կրակը վաղում եր պատրուզի վրայով:

Բարեբախտաբար, մակույշի վրա, համենայն դեպս, թիեր կու-  
յին, Նավաստիները ամբողջ ուժով դոռ տվին նրանց: Յերեսք  
իրենց կյանքում այնպես լարված չելին թիավարեր Յեզ ԲՇազես  
կարելի յեր չշատաղել: Հաղիզ եր մակույշի յերկու հարյուր մետր  
հեռացել կամքջից, յերը պայթեց խաղուցիչ դղրդյունը: Վեթ-  
խարի ալիքը վոտից ցգումի թօջեց նավաստիներին: Լամուրջը  
պայթեց, բայց պայթյունը նրանց չդիպավ: Սակայն նրանց  
ուղերացիայի զլլասվոր նպատակը վոչ կամուրջը պայթեցնելն եր,  
ոլոչ ել ծովապատճեցի գըտավումը: Ամենից կարեսըն եր խցանել  
ջրանցքը:

Յերեք նավերը բոլոր խոչընդուներից անցնելով, մտան



Հաղիզ եր հեռացել մակույշի կամքջից,  
ողոյթեց դղրդյունը...

ջրանցքի բերանը  
Դրանք միջանի հա-  
ղոր տոնն առաջա-  
թյամբ ականակիր  
հին հածանավեր եյին  
Անդիական հրամա-  
նատարությունը գիտ-  
մամբ ընտրել եր  
այդպիսի խոշոր նա-  
վեր, վորպեսզի վոչ մի  
վերամբարձ կրանով  
հնարամվոր շինի հա-  
տակից բարձրացնել  
նրանց: Յեւլ, վոր-  
պեսզի կարելի չի-  
ներ նրանց մասերի

ըստանել և ջրից մաս-մաս դուրս քաշել, նրանք լցված եյին ցե-  
մենատով: Ըստ հրամանի նավաստիները միանդամից ծորակները  
քաց արին ու հեռացան նավերից: Հածանավերն իջան հատակը:  
Զրով շաղախաված ցեմենտը պինդ կպավ նավերի կմախքներին,  
որպէսնելով նրանց անքակտելի խոշոր բնկորներ: Քարի նման  
պինդ յերեք խցանները փակեցին ջրանքի մուտքը:

Այժմ դեստոր պատճեցի վրա այլևս անելիք չուներ: Նա-  
վաստիները վիրավորներին և մեռածներին ուսերին դրած նավա-  
ստանգուխներով ու աստիճաններով շապեցին իրենց նավը:

«Վինդիկատիվն» ամբողջովին բոցով բռնված՝ հեռացավ պատ-  
նելիք...

Անգլիական նավատարիները ցեմենտով ու արյունով փակե-  
ցին հակառակորդի սուզանավերը Բրյուգգեյում:

Դերմանիայի համար դա ծանը հարված եր. նրա ստորջրյա-  
նավատարմի ամբողջ մի յերրորդ մասը մասց Բրյուգգեյում:

Մինույն ժամանակ անգլիական կառավարությունը Գեր-  
մանիային հասցըեց մի ռւբիչ հարված:

Այդ նույն որը Հոլանդիայի, Դանիայի, Նար-  
վեգիայի մինհստըներն Անգլիայից ստացան մի գրություն-  
Դրության մեջ շարադրված եր չմված պահանջ. այս չեղոք յեր-  
կըրների առևտութական նավերն ամբողջ պատերազմի ընթացքում  
պետք և տրվեյին Անգլիային:

Գրությունը կազմված եր շատ քաղաքավարի տանով. Փոխա-  
նակ «մենք պահանջում ենք», անգլիական դիվանագետները գրում  
եյին— «մենք խնդրում ենք», Բայց հենց նույն տեղում հասկացնել  
եյին տալիս. վոր նրանց խնդիրը պետք և կատարվի անհապաղ.  
Ավելի լավ և միանգամբ համաձայնվել, այլապես անգլիական-  
ուսպանական նավատարմն ստիպված կլինի ուղղակի մանել այս  
չպատերազմող յերկըների նավահանգիստները և տանել նրանց  
բոլոր նավերը:

Ի՞նչ կտրող եյին պատասխանել փոքրիկ, չեղոք յերկըները  
ծովային հղորագույն պետության այս քաղաքավարի առաջար-  
կին, Հասկանալի յե, նրանք ստիպված յեղան համաձայնվելու  
Յեզ անգլիական առևտութակնն նավատարմը միանգամբ անեց,  
լրացվելով շվեդական, նորվեգիական, դանիական և հոլանդական  
նավերով:

Դերմանիայի կողմից սկսված ստորջրյա պատերազմն այժմ  
արդեն չեր կարող հաղթություն բերել:

## Ո՞վ ՇԱՀԵՑ

Նավերը գնդակոծում եյին սուզանավերին: Սուզանավերն  
ընկղմում եյին նավերը, Գերմանիայում մարդիկ ուժասպառ լի-  
նելուց մեռնում եյին, Անգլիայում աննդամթերքի ներմուծումը-  
դժվարացել եր, Մարդկանց համար հատկացրած պարկերով այսու-

շուշ, տապրակներով շաքարը, ձվերով լիցուն արկղները հյուսիսային  
ծովի ձկներին եյին բաժին դառնում Յեզ գերմանական, և անգ-  
լիական ժողովուրդը դրկանցների եյին դատապարտված: Ո՞վ շա-  
հեց վերջրյա և ստորջրյա համաշխարհային պատերազմում:

Համաշխարհային տնտեսության վերարերյալ վիճակագրա-  
կան տեղեկություններն այս հարցին ճիշտ պատասխան են տալիս:

Տեղեկատուներում ասվում ե. համաշխարհային պատերազմի  
ժամանակ համարյա բոլոր յերկրներն սկսեցին անհամեմատ ավե-  
լի քիչ միս, ձուկ, ձու, թեյ և երմուծել, քան ներմուծում եյին  
առաջ: Այդ բոլորովին հասկանալի յե. ժողովուրդն աղթատացել  
եր և ստիպված եր հրաժարվել շատ կենսամթերքներից:

Բայց, ահա ինչն ե հանելուկային. միքանի յերկրներ, ինչ-  
վոր պատճառով պատերազմի տարիներին սկսեցին անհամեմատ  
ավելի շատ թեյ գնել, քան սովորաբար գնում եյին: Դանիան,  
որինակ, տասնմեկ անգամ ավելի շատ գնեց, իսկ Շվեդիան՝ տաս-  
նըչորս անգամ շատ քան խաղաղ ժամանակ:

Միթք դանիացիները, վոր մինչև պատերազմն որական մեկա-  
կան բաժակ թեյ եյին խմում, սկսեցին տասնմեկական բաժակ խմել:  
Իսկ շվեդացիներն այնպիսի անհագ ծարավ եյին զգում, վոր պա-  
հանջվում եր որտեկան տասնչորսական բաժակ թեյ զործածել: Բայց  
չե՛ վոր շվեդացիներն ու դանիացիները բացի թեյից խմում եյին  
և կակտու ու սուրճ: Վիճակագրությունը ցույց է տալիս, վոր պա-  
տերազմի ժամանակ սուրճի ներմուծումը Դանիա անեց մեկուկեն  
անգամ, իսկ կակտոյի մուծումը Շվեդիա՝ ինն անգամ:

Ինչպես յերեսում ե, շվեդացիների և դանիացիների ծարավի  
հետ միաժամանակ զարգացավ և նրանց ախ-րժակլը: Միսը, ձուելը,  
ձուն, պահածո կաթը, — այդ բոլորը ներմուծվում եր Շվեդիա և  
Դանիա՝ յեռապատկված ու քառոպատկված քանակությամբ: Յեզ  
մինչև անգամ այնպիսի չուռվող արտազրանքների, ինչպես, որի-  
նակ, քսելու յուղեղը, նույնպես ահազին պահանջ դրսեվորվեց:

Բանն ինչմենք ե այստեղ: Ինչո՞ւ Դանիայի և Շվեդիայի բնա-  
կիչներն սկսեցին մթերքների այդպիսի անհավատավի քանակի  
կարելք զշալ:

Պատասխանը շատ պարզ ե:

Այս մթերքները վոչ Շվեդիայումն եյին մեռում, վոչ ել Դանիա-  
յում, դրանք այստեղ ներմուծում եյին հարեւանցիորեն, անցնե-  
լիս, իսկ հետո ուղարկում եյին ավելի հեռուները: Շվեդական և  
դանիական վաճառականները զնում եյին դրանք, վորպեսզի ան-

միջապես վերավաճառելին Դերմանիային ԶԵ վոր անգլիական ռազմական նավատարբերությունը թույլ չեր տալիս առևտրական նավերին ուղիղ Դերմանիա մտնելը

Ցեթե ռտարերկրյա վաճառականները Դերմանիային կենսա- մթերքներ չմատակարարելին, շատ հավանական է, նա ստիպված կլիներ զենքը վայր դնել վոչ թե չորս տարուց հետո, այլ պա- տերադմը հայտարարելուց յերկու տարի անց Պատերազմը յերկու անգամ ավելի կարճ կլիներ.

Բայց ինչի՞ յեր սպասում անգլիական ստուգական նա- վատարբեր, թնջ եր մտածում անգլիական կառավարությունը, ՄԵթե նա գլխի չեր ընկնում, թե ինչու չեղոք յերկրների վա- ճառակալաններն այդքան մթերք են գնում. ՄԵթե չեր կարելի հաստատել, թե ով ե ծախում այս վաճառականներին թեյ, կոֆե, կակաո, միս, քսույքի յուղ, բամբակ, այս բոլոր ապրանքները ով ե մատակարարում Դերմանիային չեղոք յերկրների վրայավ.

Դերմանիային մատակարարում եյին, — պատասխանում են վիճակագրական տեղեկատունները, — հենց իրենք՝ անգլիական տուեստրականները. Այդ նրանք եյին, վոր գանիական ու շվեդա- կան վաճառականներին տասնչորս անգամ ավելի թեյ, ինն ան- գամ ավելի կակառ եյին վաճառում, քան մինչեւ պատերազմը նրանք, հասկանալի յե, հիանալի գիտեյին, թե ուր ե գնում այդ բոլորը, Բայց զբա փոխարեն նրանք հսկայական ոգութ եյին ստանում.

Դերմանական կառավարությունը լավ եր վճարում այդ բոլոր մթերքների համար. մթերքներն անմիջապես ուղարկում եյին ուղմանակատ՝ գերմանական բանակի համար:

Անգլիական ռազմանավերը վոչ մի նավ չեյին թողնու- մանիայի մտնել, իսկ այդ ժամանակ անգլիական վաճառական- ները գանիական և շվեդական վաճառականների միջացով ուղար- կում եյին այնտեղ ամեն բան, ինչ անհրաժեշտ եր պատերազմի համար:

Այդ նրանք, անգլիական վաճառականներն եյին, վոր Դեր- մանիային ծախում եյին քսույքի յուղ, տուանց վորի գերմանա- կան սուլպանավերը չեյին կարող ծով գուրս գալ ու խեղզել անգ- լիական նավերը. Այդ նրանք եյին ծախում ճարպեր, վորոնցից Գեր- մանիայում թնդանոթների կամպրեսորների համար հեղուկ եյին պատրաստում. Այդ նրանք եյին վաճառում բամբակ, վորից Դեր- մանիայում արկերի համար պայթուցիկ նյութեր եյին պատ- րաստում:

Նրանք ծախում եյին Դերմանիային և յերկաթ, և պղինձ,

և՝ նիկել, և՝ անտղ, և՝ ալյումին, այսինքն այն բոլոր մետաղները՝ վորոնցից պատրաստում են թնդանոթներ, սավառնակներ, ձուլում են գնդակներ և արկեր,

«Ֆրակ հագած անզիփացին՝ անզիփական վաճառականը, — զբում և համաշխարհային պատերազմի պատմաբանը, — մատակարարելով Գերմանիային այդ բոլորը, դրանով իսկ սափական ձեռքով գնդականարում եր զինվորական համազգեստ հագած անզիփացուն՝ շանզիփական զինվորին»:

Ռազմականակատումիբար հետ պատերազմում եյին անզիփական զինվորը և գերմանական զինվորը, Յերբեմն անզիփացին եր հարձակվում, և այն ժամանակ նրան թվում եր, թե հաղթությունն իր կողմն եւ, Մի ուրիշ անդամ հարձակվողը գերմանացին եր, և նրան թվում եր, թե ճակատամարտն ինքն և շահեր, իսկ իրոք, վոչ նա յեր շահում, վոչ ել մյուսը, Միշտ յերբորդն եր շահում — յերկրի տիրակալը, կապիտալիստը, — միևնույն և անզիփականը, դերմանականը, թե դանիականը:

Սուզանավերը ընկդմում եյին նավերը Նավերը ինեղում եյին սուզանավերը, Մարդիկ խեղդվում եյին — անզիփացիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ, բելգիացիներ, ուսաներ, Վորագան ավելի յեր յերկարածվում պատերազմը, այնքան ավելի շատ մարդ եր վաչնչանում:

Բայց վորքան ավելի յեր յերկարում պատերազմը, այնքան ավելի մեծ շահով, այնքան ավելի թանգ կարելի յեր վաճառել թեյը, և կակառն, և բամբակը, և յերկաթը, և նիկելը, և այսումինը, և ջուղիքի յուղը:

## ՃԱԿԱԾ ՅԵՎ. ԹԻԿՈՒԽՆՔ

Զբի վրա լինի թե ջրի տակ, ցամաքի վրա լինի թե ողում՝ վարեղ ել տեղի ունենա պատերազմը, միևնույն եւ, այն չի կարելի վարել առանց բարդ մեքենաների ու գործիքների, Պատերազմի համար անհրաժեշտ ե մեծ քանակությամբ նավթ և քառական, կառչուկ և բամբակ և, ամենից առաջ շատ ու շատ մետք:

1916 թվին Գերմանիայում ձուլվող ամեն մի հինգ տանօպուտից չորսը զնում եր ուղմանակառ: Հենց միայն իրամատները պաշտպանելու համար պատրաստված եր այնքան միշտ:

լար, վոր այդքան փշալարով կարելի յեր յերկրագունդը մի քանի տակ փաթթաթեր

Ցուրաքանչյուր ճակատամարտի բազդը կախված եր վոչ միայն հրետավորներից, տանկիստներից և ողաջուներից՝ ճակատամարտում, այլ նաև հրահալոցայիններից, ածխափորներից, յերկաթուղայիններից՝ թիկունքում:

Բանակի հղորությունը կախված եր յերկրի տնտեսական հղորությունից, Յեվ պետությունը վորքան ավելի եր թույլ, վորքան թույլ եր նրա արդյունաբերությունը, այնքան ավելի շատ եր տուժում նրա բանակը:

Այդպիս պատահեց, որինակ՝ ցարական բանակի հետ:

Մի տարի ել չեր անցել պատերազմն սկսվելու ժամանակից, յեր սուսական բանակի մի յերրորդ մասը մնաց տասնց հրացանի. Ռուսական յերեք զինվորից մեկն առանց հրացանի յեր. Ճակատամարտում հրացան ստանալու համար հերթի եյին գրվում — հրացան ստունալու համար ողետք եր սպասել, մինչև վոր զինված դինվորներից վորեն մեկը կսպանվեր կամ կրիբավորվեր:

Ի՞նչպիս կարող եր պատահել. վոր տմենահասարակ զինքը հրացանը չբավականացներ բանակին:

Բանա այսպիս և բացարձվում Ռուսական զինավոր շտարը չեր նախատեսել, թե վորքան ռազմամթերքի ծախս կպահանջվի պատերողմի համար. Ճշմարիտ ե, միայն նա չեր, վոր սխալվեց իր հաշիմներում — մյուս յերկրների շտաբներն ել չեյին նախատեսել, վոր պատերազմն այդքան կերկարի և զենքի այդպիսի հսկայական պաշարներ կահանջիւ:

Բայց մյուս յերկրները կարողացան ժամանակին գժվարությունները հաղթահարեն. Նրանք պատերազմի համար մորիլիքացիայի յենթարկեցին իրենց ամբողջ արդյունաբերությունը. Գերմանիայում, որինակ, հրացանների առանձին մասերն սկսեցին պատրաստել հեծանիվային և գրամիքենային գործարաններում. Կարի մեջենաների գործարաններն սկսեցին շրապնելներ բաց թողնել, իսկ դաշնամուրային գործարանները՝ փամիկուշանների համար պարկուճներ:


Յեվ միայն Ռուսաստանում արդյունաբերությունը համարյատ չկարողացավ բանակին ողնության հասնել, նա ինքը չափազանց թույլ եր. յերկրում քիչ գործարաններ կային, քիչ մեքենաներ, իսկ վոր զինավորն եւ մեջենաներ շինել կարողացող քիչ մարդիկ, չե՞ վոր մինչև պատերազմը ուլուսական գործարանատերերը

քիչ թե շատ բարդ մեքենաներն արտասահմանից եյին բերել առավելա

Մինչ Հեղափոխությունը մեր յերկրում ավտոմոբիլային և տրակտորային վոչ մի գործարան չկար Յեզ ահա, յերբ պատեհ քաղման սկսվեց, Ռուսաստանը չկարողացավ իր զորքերն այնպիսի արագությամբ շաղրտել, ինչպես այդ անուած եյին նրա հակառակորդները։

Ռուսաստանում քիմիական գործարաններ համարյա չկային։

Այդ պատճեռով եւ, յերբ Գերմանիան ըստ կըսեց քիմիական պատեհը ազմը ռուսական ըննակը չկարողացավ նրա զրուցները հետ մզել հենց այդ նույն զենքով։



Ռուսական բանակին թնդանոթները չեցին բախտանացնում. վարդենի հակառակորդից ող բանը թացնեն, հակառակը կնքե մարտկոցներ երին դնում։

Ռուսաստանում չկային այնպիսի մարդիկ, վոր կարողանային պերիսկոպ, հեռադիտակ կամ մինչև անգամ հասարակ յերկֆող դիտակ պատրաստել Յեզ ահա պարզվեց, վոր ռուսական բանակը պատեհազմում կռույն եր։

Բոլորը գիտեյին ռուսական բանակի անձնարակության մասինու Յեզ, այնուամենայնիվ, այս կռույնը, համարյա անզեն բանակը պետք ե իրեն շուտ-շուտ

հակառակորդի հարվածների տակ դներ, իր վրա կրեր պատերազմի գլխավոր ծանրությունը. հերիք եր, վոր Փըտնսիախան նախագահը կամ անգլիական թագավորը հեռազրեր ուղարկեյին Նիկոլայ Ռ-ին և ահա ռուսական բանակն իսկույն նետվում եց

Հարձակման՝ իր համար ըոլորովին անհամապատասխան ժամանակ:

Պատերազմից տռաջ ոտարերկրացի կողիտալիստները փող եյին պարտք տալիս ոռւսական կառավարությանը—այժմնրանը պահանջում եյին, վորապեսզի ոռւսական բանակն իր արյունով հետ վերադարձներ այդ փողերը:

Բանակն առանց մարդկանց՝ աներեւակայնի յի: Ճարպիկ և ուժիկ մարսիկին, կենացնի մարդուն իր ուղեղով, ջղերով և մկաններով, պատերազմի ժամանակ վոչչով փոխարինել մե կարելի:

Իսկ յեթե այդպիս ե, յեթե, իրոք, բանակի հիմնական ուժերը մարդիկ են, ապա պարզ ե, վոր ամեն մի պետություն կաշխատի պատերազմի ժամանակ, վորքան հնարավոր ե, մեծ քանակությամբ մարդ հրավիրել բանակ: Յեվ, ուրեմն, ապազա պատերազմում ճիշտ այնպիս, ինչպիս և անցյալում—բանակները պետք ե մեծ լինեն, մասսայական:

Ռտղմաճակատ կուղարկվեն վոչ թե հաղարներ, անզամվոչ հարյուր հազարներ, այլ՝ միլիոն ու միլիոն մարդիկ:

Հասկանալի յի, թե ինչու բուրժուական յերկրների վորոշ ռազմական մասնակետներ կցանկանային, վոր իրենց բանակում թիչ մարդիկ լինեն: Նրանք գիտեն, վոր միլիոնանոց բանակները կապիտալիզմի համար ժամացու վատանգ են: Նրանք կցանկանային իրենց տրամադրության տակ ունենալ այնպիսի բանակ: Վոր բաղկացած լիներ միայն կապիտալիզմին հավատարիմ մարդկանցից: Իսկ այդպիսիները քիչ են:

Այդ բոլորը հասկանալի յի: Բայց ուրիշ բան և նրանց ցանկությունները, և ուրիշ այն, ինչ վոր իրոք կա:

Յեվ իսկապես, փոքր, խավագույն զենքով—զբանց թվում նաև ավտոմատներով և ռադիոմեքենաներով դինգած բանակին կարելի յե հակազրել նույնպիս լավ սպառպինզած, բայց յերկու կամ լերեց անգամ ավելի մեծ մի այլ բանակ: Դժվար չելքունել, թե այդ բանակներից վորն ավելի ուժեղ կլինի:

Փոքը բանակը, վորքան ել նա մեցինայացված լինի, ապա-  
զա պատերազմում վճռական հաղթության չի կարող հասնել  
Յերև սինչն անգամ նա ոկորի ժամանակներում վորոշ հաջողու-  
թյուններ ել ձեռք բերեր, միհնույն ե, այդ հաջողությունները  
աշտական չեյին լինի:

Սավառանակներով, տանկերով, ժարուկոցներով կարելի յե-  
գրունել թշնամու վրա, կարելի յե նրան զնդակուծել, մի կառը  
հող կորդել նրանից, Բայց, այդ բոլորը, չե՛ վոր ոկոռ քիչ և հաղ-  
թելու համար զիս անհրաժեշտ կլինի պահել խրված հողը, ամ-  
բացներ նսկ գտ անհնար և տառնց հետեւազորի ուժեղ ջոկատների:

Մեր ժամանակ ես այնպիս, ինչպես և միշտ, բանակի հիմ-  
նական մասը հետեւակ զորքն ե, միլիոնավոր հրացանաձիգները:

Միայն նրանք կարող  
ամրություններ կո-  
ռուցել, տիրապետել  
նվաճված շրջաններն  
ինչպես վոր ոկեաք ե,  
այնպես, վոր այլևս  
նրանք ձեռքից բաց  
չթողնվեն—միայն նը-  
րանք կարող են հաղ-  
թությունն ամրո-  
պնդել:

Պատերազմում  
միշտ ել և ամեն տեղ  
ոկեաք ե զիպուկ հրա-  
ցանաձիգը,

Միլիոնավոր հրացանաձիգներն են, վոր իրենց վրա յեն  
կրում պատերազմի ամրողջ ծանրությունը, և պատերազմի վախ-  
ճանը մեծ մասամբ նրանցից ե կոխված, վերջնական հաղթու-  
թյունը նրանցից ե կոխված...

Վոյ, ինչքան ել վոր ցանկանան միշտնի գեներալներ,  
ապագա պատերազմում նրանք չեն կարող գոհանալ փոքրաթիվ  
բանակով, վաստի կանակոն ուժեղուցը ջոկատով, Նրանք ստիպ-  
ված կլինեն իրենց յերկրի միլիոնավոր բանվարներին ու գյու-  
ղուցիներին զենքի կանչել, զինել ամրողջ ժողովուրդը:



Դիպուկ հրացանաձիգ—անյօդեր:

## ԱՐՑՈՒՆԱԱԼԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Շուտով կը այն որը, յեղբ նորից, ինչպես յերկու առանցքակ տարի առաջ, կապիտալիստական կառավարությունները պատերազմի կկանչեն իրենց ժողովուրդներին։ Նորից նըանք կառան—«Ժամանակը հասել և հայրենիքի համար կավելու»։

Բայց այժմ արդեն միլիոնավոր մարզկանց համար պարզ են իմպերիալիստական պատերազմը չի կարող կոչվել պատերազմ հայրենիքի համար։

1899 թվին սկսվեց անգլո-բուրական պատերազմը, Խաչից քանիվ ուշ պատերազմը նըանից, վորհարավային Աֆրիկայում զան ազամանդային ազագուած և անգլիական «Արտօնյալ ընկերությունը» վորոշեց, ինչ զնով ել լինի, աիրել այս պատճեռին...»

Այստեղ հայրենիքն ել լինչ գործ ունի.

2014 թվին պայթեց համաշխարհային պատերազմը. վիճում եյին գաղութների մասին, այն մասին, թե եվ և աիրելու Ասիան և Աֆրիկան, ևվ և գառնալու ամբողջ յերկրի տիրակալը։

Այստեղ հայրենիքն ել լինչ գործ ունի.

1934 թվին Բոլիվիան և Պարագվան կռվում եյին իրոք հետ Յերկու արեստ առաջացրին այս պատերազմը—Ռոկֆելլերի և Դետերզինգի արեստները։ Նըանք վիճում եյին այն մասին, թե նըանցից վորը պետք և վաճառի հարավամերիկյան նովթը։

Այստեղ հայրենիքն ել լինչ գործ ունի.

Վէճ, նաև, ով կռվում և կապիտալիստաների և հափշտակիչների բանակում, նա հայրենիքը չի պաշտպանում, իր յերկիրը չի պաշտպանում, այլ իր յերկրի բանկիրներին և պողծարանառերին, այնպիսի մարզկանց և պաշտպանում, ինչպիսիք են Դյունսբերգը, Կրուպպը կամ Լե-Շյենը, նըանց յերկիրն և պաշտպանում, և վոչ իրենը։

Իմպերիալիստական պատերազմը, ոտ յերկրի տիրակալների—կապիտալիստաների շահերի համար մզվող պատերազմ է։

Այսպիսի պատերազմ արդարացում չունի և չի կարող ունինալը։

Կռվել կապիտալիզմի համար։ Կյանքը զոհաբերել, վորպեսզի յերկրի տիրակալները կարողանան իրենց համար հարստությունները հափշտակել, կարողանան իրենց իշխանությունը ծավալել։

Նրանց իշխանությունն առանց այդ ել չափազանց թանգ և նստում մարդկության վրա Որեցոր, մինչև անգամ խաղաղ ժամանակ, նա հաղարավոր մարդիկ և վոչնչացնում:

Ահա, հաշվեցեք, ինչքան մարդ վոչնչացրեց նա միայն անցյալ տարի, յերեքնարյուր վաթսուն հինգ որվա մեջ:

Ասցյալ տարի կողմիտալիստական յերկրներում յերկու միւլիոն մարդ մեռավ քաղցից. համարյա այդքան ել չղիմացավ կարիքի դեմ մզկած մշտական պայքարում և ինքը ձեռք բարձրացրեց իր վրա, և ավելի շատ, անհամեմատ ավելի շատ վոչնչացավ քաղցից, աղքատությունից և ուժեղից վեր աշխատանքից առաջացած հիվանդություններից, — այնպիսի հիվանդություններից, վորոնք վաղուց կարող եյին չինել յերկրի վրա:

Ի՞նչ նշանակություն ունեն այս համեմատությամբ բոլոր տարերային աղետները — յերկրաշարժները և եղիղութեները, փոթուրիկները, Յերկրաշարժը խորտակում և մարդկանց հաղարներով, իսկ այստեղ միլիոններ են կորչում, Յերկրաշարժներ պատահում են յերեթ-յերեթն, իսկ մարդկանց այս վոչնչացումը քաղցից, տեղի յե ունենում ամեն ժամանակ, անընդհատ: Յեզ, վերջապես, յերկրաշարժի համար վոչ վոք մեղավոր չե, իսկ այստեղ մենք շատ լավ գիտենք, թե ով և հանցավորը Յերկրի աիրակաները, իսկապես, արյանուտ ճանապարհով են տանում մարդկությանը:

Ահա նրանց իշխանության համար, այն բանի համար, վորպեսզի այդ իշխանությունը կարողանա ավելի յերկար ժամանակ գոյություն պահպանել, Փաշխատներն իրենց զինվորներին քում են պատերազմի, աշխատում են խարել նրանց՝ Հայրենիքի մասին ասած իրենց խոսքերով:

Բարեբախտաբար, այժմ արդեն այնքան ել հեշտ չե ժողովուրդներին խարել, ինչպես այդ արին 1914 թվին. չԵ վոր նրանք արդեն ունեն անցած համաշխարհային պատերազմի փորձը, Այժմ բանվորները կազմակերպված են, նրանց զեկավարում են կաղիտալիքմի գեմ անհաշտ պայքար մղող կոմունիստական կուռակցությունները:

Վճէ, յեթե արդեն ստիպված պետք և պատերազմել յեթե Փաշխատները կհարկադրեն ժողովուրդներին զենք բարձրացնել, այն ժամանակ արժե զենքը ձեռքն առնել և կռվել ի սեր մի նպատակի, վորպեսզի այդ դաժան ու անմիտ իրավակարգը, վորքան կարելի յե, ավելի շուրջ փուլ պատ

Վորպեսզի, վերջապես, հասնի այն ժամանակը, յերբ վոչ-



Մարտիկը և նույնական ժամկե.

մի անդ այլաւ չե լինի մարդկանց ճնշումը — մարդկանց կողմից, չեն լինի գոչ քաղց, վոչ անզործության, վոչ պատերազմեր:

Նրանց, ովքեր հաստատութեն զորոշել են մարդկությանն որյունալի ճանապարհից գուրս բերել ու նոր, ավելի լով ճանապարհի կանգնեցնել, ովքեր զբա համար պատրաստ են առլու ժրենց ամբողջ ուժերը, իսկ յեթե ունաք լինի, և կյանցը, — կոչվում են ըուլեկիներ:

## ԱՅԴ 1914 ԹՎԻՆ ԵՐ

Բոլոր քաղաքական կուսակցությունները — բացի բունիկեների կուսակցություններ — պատասխանառու յեն համաշխարհային պատերազմի համար. չե վոր նրանց բոլորն ել 1914 թ. ամանգակում եյին իրենց յերկրների կառավարություններին:

Զետ ավելի խայտառակ պատմություն, քան սոցիալիստական կուսակցությունների պատմությունը համաշխարհային պատերազմի սիջոցին:

Վերցնենք, որինակի համար, թեկուղ գերմանական սոցիալ-պետկրատական կուսակցությունը, վոչ մեկ, ոյլ տառեյտկ անգամներ նրա գեկավարները յերգվել են, վոր իրենց թույլ չեն առ համաշխարհային պատերազմ լինի, վճռական բողեյին նրանց բանվորներին դուրս կկանչեն փողոց, ընդհանուր դրադաղուլ կհայտարարեն, թույլ չեն առ կառավարությանը պատեմաղմ սկսել:

Այդպես եյին խոսանում նրանց: Իսկ թնչ որին նրանք, ցերեր, իրոք, վճռական մոմենտը հասավ, ւերը խոկապես պատերազմի անեղ վառնողը կախված եր մեր զիլիին:

Նրանց այն ժամանակ յեկան սոյխուստք և հոգուս պատեմաղմի ձայն տվին:

Նրանց զավաճանեցին սոցիալիզմին, նրանց գերմանական մշապիտավոտներին ոգնեցին խորելու ժողովրդին, քշելու զինվորներին պատերազմի:

Ցեղ դրա համար վորդեա վարձարաւթյուն՝ թույլ արգեց նրանց սոյխուստքի նիստի վերջում մոտենալ վելէնելը Ռ-ին և Շերթով ողմել նրա ձեռքը...

Այդ որերին, ճիշ գերմանական այս սոցիալիստներին նման պարզեցին նուև ոյլ յերկրների սոցիալիստները:

Միայն մի կուսակցությունը—բազեկիկների կուսակցությունը—միշտ պայքարում եր համաշխարհային պատերազմի դիմուններին համաշխարհային պատերազմի դիմունների պայքարում երին։ գեղ այն ժամանակ, յերբ կոպեկալիստական կառավարությունները դեռ նոր եյին պատրաստում այն։ Նրանք չդադարեցրին իրենց պայքարը նաև այն ժամանակ, յերբ արդեն պատերազմը վրա յեր հասել

Ցարական կառավարությունը շատ լավ գիտեր, թե ով են իր գլուխվոր թշնամին։

Դեռ 1914 թվի ամռանը, հենց պատերազմից առաջ, վուստիկանությունն ամբողջ Ռուսաստանում ձերբակալություններ կատարեց, հարյուրավոր բոլշևիկների բանաերը նետեց, բազմաթիվ քաղաքներում տակնուվրա արեց բոլշևիկյան կուսակցական կաղմակերպությունները և փակեց բոլշևիկյան թերթերը։

Ցարական կառավարությունը թվում եր, թե բոլշևիկներն այժմ արդեն զրկված են պատերազմի դեմ պայքարելու հնարավորությունից։

Բայց բոլշևիկներն իզուր չե, վոր ընդհատակյա աշխատանքից առաջարից պայքարի փորձ ունեյին։ Նրանք կազմակերպեցին «Թափառող» գաղտնի տպարտն։ ամեն շաբաթ տպարտնը տեղափոխում եյին մի նոր տեղ, վորպեսզի հետքերը խճճեն, վուստիկանությունը մոլորեցնեն։ Ձեռադրերն այդ տպարտնն եյին բերվում վոչ պորտֆելներում, վոչ ել թղթապանակներում, այլ լուցկու տուփերում։ Նրանք զըգած եյին լինում պապիրոսի թղթեկորների վրա, խուզարկության դիպքում նրանց կարելի յերանմիջապես այրել նոկ պատրաստի, տպված թերթիկները դուրս եյին տանում սունկերով կամ կանաչեղինով լցված զամբյուղների մեջ դրված։ Հետո այդ թերթիկները զցում եյին գործարանները, կայարանները, մորթիլիզացիոն կետերը, վորտեղից զինվորները ռազմաճակատ եյին մեկնում։

Ցեղ ահա, այն որերին, յերբ բոլոր թերթերը բոլոր յերեղըներում բանվորներին ու գյուղացիներին պատերազմի կոչեյին անում, հնչեց. Անինի ձայնը, բոլշևիկների ձայնը,

Անինը ժողովուրդներին կոչ եր անում՝ դադարեցնել իմպերիալիստական պատերազմը, և վոչ միայն կոչ եր անում, այլև ցույց եր տալիս, թե ինչպես անել այդ։

— Ցեղը պատերազմի դեմ արտահայտած բողոքների մեջ չե, ցարական կառավարությունն ուղած խնդիրների մեջ չե, —

ասում եյին բոլշևիկները առա բանվորներին և գյուղացիներին: — Այդ բոլորը չեն ողջի, զեր վոր, կապիտալիստներին և կալվածատերներին պատերազմի անհրաժեշտ և, իսկ ցարական կառավարությունը կարիքածատելերի ու կապիտալիստների կառավարությունն եւ:

Խնանությունը խել նրանց ձեռքերից — ահա պատերազմը պոչնչացնելու միակ միջոցը:

Բայց զրա համար անհրաժեշտ և զենքից չհրաժարվել, այլ այդ զենքը դարձնել նրանց զեմ, ովքեր առաջացրել են պատերազմը՝ կապիտալիստների դեմ: Իմպերիալիստական պատերազմը, ժողովուրդն

բածել քաղաքացիական պատերազմի, ժողովուրդների հակասմարտ՝ ընդդեմ յերկրի տիրակալների:

Ահա ինչի եյին կոչ անում բոլշևիկները, ահա ինչի եյին պատրաստվում նրանք.

1914 թվի աշնանը բոլշևիկները խորհրդակցություն հրավիրեցին:

Խվանովո-Վոզնեսենսկից, Խարկովից, Ռիգայից և այլ քաղաքներից Պետրոգրադ եյին գալիս բոլշևիկ բանվորները, Գալիս եյին գարտուղի ճանապարհներով, վորովեսպի խարեյին վոստիկանական լրաւեններին: Կիշնորով խոռ կիսակայարաններում իշխում եյին գնացքից, անտառներով ու ճահիճներով վուշերվ կարում — Հանում մի այլ յերկաթուղու ճյուղի, այստեղից ուրիշ գնացք նստում:

Նորմաբերի յերկուսին, Պետրոգրադի շրջակայքում, Ոզերկայում, Ճեմեռվա համար փակված ամսաւնոցներից մեկում խորհրդակցությունը բացվեց: Նրան շատ քիչ ժարդ եր մանակցում — տեղերից միքանի պատվիրակներ և ելի հինգ բոլշևիկներ — պետական Դումայի պատգամագործներ:

Տան բոլոր պատուհանները վերմակով ծածկել եյին: Դուռը քաց եյին անում միայն պայմանական թակոցից հետո:

Խորհրդակցության մասնակցողները յերկու որ դուրս չեյին գալիս այս տնից: Յերկու գիշեր քնում եյին իրար կցած սեղանների վրա: Յերրորդ վերջին գիշերը հանկարծ բորձը թըխկոց լավից, իսկ դրանից հետո գուռը դղրդյանով պոկվեց ծխնիներից: և ատրճանակները ձեռներին պատրաստ, ժանդարմները ներս խուժեցին սննյակ:

— Տեղից շշարժվել: ձեռքերը, վեր, — պատվակեց ժանդարմային, սպան:

Առաջարկությունն սկսվեց: Իզուը և յին վորձում բոլշևիկներն ապատվել — ժանդարմենը ամուս բռնել ելին նրանց ձեռքերից: Հետո բանտ տարան նրանց:

Մանը գուռը շրխկաց դնողցով, և ամեն մեկը ընկալ մի մնախուց:

Հարյուր որ նրանք նստեցին այսօնեղ:

Իսկ հարյուր որից հետո խցերի դռները բացվեցին — պահպախումը բոլշևիկներին դատարան տարավ: Յերեք որ շարունակվեց դատը: Վերջապես մեղադրյալներին վերջին խոսքը տվին:

— Մեղ դատում են, — ասացին նրանք, — ժողովրդի իրավունքների տոկում պաշտպանության համար, մենք կորչում ենք նրա համար, վոր մեր գիտելիքների չափով պաշտպանում եյինք բանվորների շահերը:

Կես գիշերին դատարանը դատավճիռ հանեց — իննը մարդու կերպու Սիրիս, յերկուակին փակել բանտում:

Յերկաթյա յելարանի հարթակի վրա բոլշևիկները գրկախառնվեցին ու համբուրվեցին իրար հետ. հետո նրանց կրկին ցրեցին իրենց խցիկները:

Իսկ հետո յեկավ բանտային լուսանկարիչը, լուսանկարեց նրանց, բժիշկը նայեց նրանց և զրի առավ «առանձնահատուկ նշանները», առևով նրանց մատներից արտատիպ հանեց: Յեզ շուտով բոլշևիկներին — Դումայի նախկին պատգամավորներին — հագցրին կալանավորական խալաթները՝ կրծքներին համարներ կարած, ամեն մեկին սպիտակեղենով մի առարկակ տվին, կանողալները բներին:

Բանտային վակ ավտոմոբիլը մոտենում եր Նիկոլաևսկի կայարանին: Կառամատույցը բալորովին դատարկ եր: Բայց յերբ բոլշևիկներն արդեն մոտենում երին գլխավոր մուտքին, նրանց պատահեցին միքանի բանվոր: յերկաթուղայիններ, Բանվորները ճանաշեցին նրանց և կանգնեցին:

— Մի վատացք, ընկերներ, — բացականչեցին նրանք, — շուտով կազմատենք:

Եռդեքտարշն սկսեց շշալ յերկաթյա ձողեր հագցրած պատուհաններով վագոնը շարժվեց տեղից: Նրա առաջ ահագին ճանապարհ կար, հազարավոր վերստեր: Նա գնում եր դեպի արևելք: Սիրիս — այնտեղ, վորտեղ այդ ժամանակ արդեն աքսորումն եր զանվում Ստալինը...

«Մեր կուսակցության աշխատանքը հարյուր մասամ ովեամ դժգութիւնը, —այլպէս եր զրում ոյտ ոքերին լենինը, —բայց այնուամենայնիվ, մնաք այն կտանենք»:

## ԵԵՐԲ ԿԱՅԵՐՁԱՆԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Այն մասին, թե ինչպես եր լենինը զեկավարում մեն ուայցարն ընդդեմ պատերազմի, ինչպես նա ընդդեմիշա իր կտպերը խզեց սոցիալիզմին դավաճանող և պատերազմը խրախուսող բոլոր ևսցիալիստներից հետ, ինչպես նա միջադային համագումարներ եր հրավիրում, բոլոր յերկրների ժողովուրդներին պայցարի հանում պատերազմի դեմ, —այս բոլորի մասին այսակո անհնար և պատմենք

Կասեմ միտյան, թե ինչ հետեւանքի հասցը լենինի սկսած այդ պայցարը

Դուք կարդացիք այս զբանում վերդենի ճակատամարտի մասին: Հիշեցնք, ինչպիսի քաջությամբ եյին կռվում ֆրանսիական զինվորները, քանի զետ հավատում եյին, վոր պատերազմում են իրենց հայրենիքի համար:

Բայց արդ նույն զինվորները, վորոնք վերդենի տակ հնապանուրեն զնում եյին մեռնելու համաձայն իրենց հրամանառարների կարգությունը յան, մի տարի անց սկսեցին ճանապարհին զնացքները կանգնեցնել, պահանջել, վորպեսզի նրանց հետառնեն Փարիզ:

— Ժամանակն և պատերազմը վերջացնելու, հեղափոխությունն սկսելու...

Դուք կարդացիք այս զբանուկում Ամյենի ճակատամարտի մասին: Հենց այդ ճակատամարտի ժամանակ գերմանական զինվորներն առաջին անգամ հրաժարվեցին յենթարկվել իրենց սպաներին, բայց յերեք տարից հետո կարմիր զբոշակներ բարձրացնելով՝ Բեռլինի վրա զնացին:

Դուք կարդացիք Զենքրյուզեյի ճակատամարտի մասին: Նույն զինվորները, վորոնք մասնակցել եյին այդ կովին, զորացըը մտն մտնենտին ապատամբեցին և քիչ եր մնացել, վոր զինվորական մինիստրության շենքը գրավեյին լոնդոնում:

Ցեղ, վերջապես, Ռուսաստանում ժողովուրդներն իրենց

ողայքարը մինչև վերջ տարանու Հեղափոխության դրոշի տակ ըստիկները մեր յերկիրը դուռս բերին համաշխարհային պատերազմ-ից ։ Հեղափոխական, քաղաքացիական պատերազմում պաշտպանեցին այն կազինալիստներից, իսկական խաղաղություն ավելին նրան։

Իսկ ինչու միլիոնավոր մարդիկ Լենինի ցույց տված ուղիով գնացին Խնչու համաշխարհային պատերազմին այլևս մասնակցել չցանկացող այդ մարդիկ այդպիսի պատրաստակամությամբ զոհաբերում երին իրենց կյանքը հեղափոխական կռվում։

Վորովչետեն նրանք այժմ իսկապես պաշտպանում երին իրենց հայրենիքը, իրենց աղատությունը։

Այժմ նրանք կապիտալիզմի համար չեյին կռվում, այլ նրա դեմ, հենց այն գայլային որենքի դեմ, վորը և պատերազմներ ե ծնում։ Յեվլ, նշանակում ե, այս պատերազմում տարած հաղթությունը մոտեցնում եր այն ժամանակը, յերբ այլևս պատերազմներ չեն լինի։

Կզա այդպիսի որ. բոլոր ժողովուրդները կազատվեն կազինալիութից, գայլային որենքի տիրապետությունից։ Այնու պատերազմներ չեն լինի—ուղղակի նրա համար, վոր այլևս գոյություն չեն ունենա այն պատճառները, վորոնք առաջներում առաջացնում երին այդ պատերազմները, չեն լինի այն մարդիկ կապիտալիստները, վորոնց անհրաժեշտ եր պատերազմը։

Բոլոր զենքերը, բնչպիսիները վոր կան յերկրի վրա, կնեանք այն ժամանակ հակա վառարանը, կհալինք և նրանցից կպատրաստենք բոլորին անհրաժեշտ իրեր։

Այն ժամանակ ամեն զենքի տեսակից մենք միայն մի-մի նմուշ կպահենք և այդ նմուշները կգնենք թանգարանում։ Թող մեղանից հետ ապրող մարդիկ գիտենան, թե ինչ դաժան ժամանակներում են ապրել իրենց նախնիները։ Թող նրանք իմանան, թե ինչ զնով և նվաճված նրանց աղատությունը։

Այդպիս կանենք, յերբ ժամանակը դա, իսկ առայժմ զենքը մեղ հարկավոր եւ

ՄԵՐԵ մենք չենք անում այն ամենը, ինչ մեղնից ե կախված, վորպեսզի պատերազմը հեռացնենք։

ԶԵ վոր Խորհրդային իշխանությունն եր, վոր դեռ 1927 թվին բոլոր յերկրներին առաջարկեց զինաթափվել, արձակել



Մեր զնդացքութիւնները զենիքսյին զնդացքի ժամ:

զանակները, միւնույն որում զոչնչացնել յերկրի վրա յեղած բուռը թնդանոթները, տանկները, ռազմանավերը, սավառնակները, սուզանավերը, այն բուռը, ինչ վոր պատերազմի համար ե, ինչ վոր մահ և բերում մարդկանց... Բայց այդ առաջարկությունը մերժվեց բոլոր յերկրների կոստավարությունների կողմից:

Այն ժամանակ Խորհրդային Միությունն առաջարկեց բուռը յերկրներին՝ կրնատել իրենց բանակները թեկուղ յերկրուանգամ, և հրաժարվել զենքի ամենոս դաժան ու կործանիչ անսակ ներից, Բայց կապիտալիստական պետություններն այս առաջարկին ել չհամաձայնեցին:

Դրանից հետո Խորհրդային Միությունն առաջարկեց «առնորոշել—պատերազմ» սկսողի ճշտակի բարորշումը, յեթե այդ բնորոշումն ընդունվեր, պատերազմ սկսելն անհամենատ ավելի ողջվար կրիներ—ամեն մեկին անմիջապես պարզ կլիներ, թե ով են նրանում հանցափռը: Բայց պետությունների սեծ մասը այս ես մերժեց:

Վերջապես, Խորհրդային Միությունը բուռը յերկրներին առաջարկեց ստորագրել չարձակվելու և փոխադարձ ողնություն պայմանագիր: Ահա ինչումն եր կայանում այս պայմանագիր, ըստին մի, պետություն պարտավոր և դուրս դուլ պատերուզմ սկսողի գեմ, ոլորտավոր և պաշտպանել իսպագությունը: Բայց Դերմանիան, Շապոնիան և Հենաստանը մերժեցին նաև այս առաջարկությունը:

Ահա թե մնաց ինչըան փորձեր ենք արել, վորպեսզի խաղաղությունն ամրացնենք: Բայց մեր բոլոր ջանքերը զեմ են առնում այն յերկրների դժմադրությանը, փորոնք անպայման պատերազմ են ցանկանում—և ամենից առաջ ֆաշիստական ողեառ-թյունների դիմադրությանը:

Մենք խաղաղության կողմակից ենք: Թաշիստները՝ պատեղազմի:

Նոր իմպերիալիստական պատերազմ և սպառնում աշխարհին:

Այդ պատերազմը պատրաստում են ֆաշիստները: Այդ նրանց են կամենուահարձակվել մեզ վրա, նրանք են նախորուց գշնակիցներ փնտառում իրենց համար, պատերազմի ընդհանուր ճակատ ստեղծուեւ:

Մարդկության ամբողջ ապագան հարվածի սպառնալիքի տակ եւ Դեռ կարելի յթ արդյոք հեռացնել այդ հարվածը, պահպանել խաղաղությունը:

Այս, զեռ կարելի յեւ Բայց, այժմ խաղաղությունը պահպանելու համար հարկավոր եւ նրա համար պայքարելու մնապես հանցազործի ձեռները կապում են, վորպեսզի նա վոչվոքի շկարողանա ֆասել, ինչպես խելազարի վրա հանդարտեցնող շապիկ են զցում, այնպես ել ժողովուրդները պետք եւ կապն ֆաշիզմի ձեռները, վորպեսզի նա նոր պատերազմ չկախի:

«Պատերազմի ճակատին» բոլոր յերկրներում պետք եւ հակադրել ժողովրդական միասնական «խաղաղության ճակատը»:

Ճակատ ընդդեմ ճակատի—միայն արդյուն և հնարավոր այժմ իրազին պայքարել խաղաղության համար:

Բոլոր ուժերը խաղաղության համար մթվող պայքարին: Այս պայքարը պետք եւ միացնի և նրանց, ովքեր դեմ են պատերազմին, և նրանց, ում համար այժմ պատերազմը ձեռնոտու չեւ:

ԶԵ վոր, կապիտալիստական կառավարությունների ու կուսակցությունների մեջ ել կան այնպիսիները, վորոնք առայժմ պատերազմ չեն ուզում, իրենք ել են վախենում ֆաշիզմի սպառնալիքից: Բայց «խաղաղության ճակատի» գլխավոր ուժը, իհարկե, նրանցում չի գտնվում. այսոր նըանք դեռ խաղաղության կողմանից են, վազը կարող են պատերազմի կողմանից դառնալ:

Խաղաղության կողմանիցների զվաճավոր հենարանը Խորհրդային Միությունն ե, միակ պետությունը, վորին պատերազմ պետք չեւ:

Վորքան ավելի ուժեղ լինի մեր հայրենիքը, վորքան ավելի ամուռ լինի մեր բանակը, այնքան ավելի ամուռ կլինի խաղաղությունը պահելու հույսը:

Խաղաղության կողմը լինել, այդ այժմ նշանակում ե Խորհրդային Միության կողմը լինել: Պատերազմի դեմ լինել—այդ այժմ նշանակում ե ֆաշիզմի դեմ լինել:

Այս, ֆաշիզմը պատերազմ ե, Այժմ, իսպանական գեղքերից հետո, զրանում արդեն վոչ մի կասկած լինել չի կարող:

Ահա թե ինչպես սկսվեցին այդ գեղքերը:

1936 թվին իսպանիայում տեղի ունեցավ ընդհանուր քվեար-

Հությունն Շվեյցարիությունը ցույց տվեց, վոր Իսպանիայի ազգարնակշության հակայական մեծամասնությունը պաշտպանում և ժողովրդական ճակատը, միայն նրան և հավատում Քվեարկության այսպիսի վախճանունի հետևանքով ել Իսպանիայում կադամից նոր կառավարություն—ժողովրդական ճակատի կառավարություն։

Ենք անմիջապես հարց առաջացավ. իսկ այժմ ինչ պետք է անեն ֆաշիստները։ ԶԵ վոր նրանք միշտ ել և բոլոր ուժերով պայքարում ենին ժողովրդական ճակատի դեմ։

Իսպանական ֆաշիստները հենց իրենք անմիջապես պատճենացնեցին այդ հարցին։ Նրանք ասացին. քանի վոր ամբողջ յերկիրը պաշտպանում և նոր կառավարությունը, ապա իրենք ևս յենթարկվում են նրան։ Ֆաշիստական գեներալներն ու սպաները հանդիսավոր յերգում ավելին Ենք կառավարությունը հավատաց նրանց։


Ճիշտ ե, յեղան միքանի կասկածելի գրաստեր, Այսպես, որինակ, իսպանական ֆաշիստներն սկսեցին այցելել Գերմանիա և Իտալիա, այնտեղ ինչ-վոր գաղանի բանակցություններ եյին վարում։ Ֆաշիստական գեներալներն ինչ-վոր սկսեցին շատ հաճախ սաղմական ուսուցում և մանյովրներ կատարել, իրենց զորքերը մի տեղից այլ տեղեր շղթանք Բայց իսպանական կառավարությունը մատնեցի արանքով եր նայում այդ ըոլորին։

Հինգ ամիս այսպն շարունակվեց։

Իսկ հունիսի 18-ի լույս 19-ի գիշերը Սեվիլյան ռազիոնկայանը, վոր գանվում եր ֆաշիստների ձեռքին, հաղորդեց ողերեւութարանական այսպիսի մի ամփոփագիր. «Ամբողջ Իսպանիայի վրա յերկինքն անամոլ ե...։ Դա ազստամբության պայմանական նշանն եր»։

Ֆաշիստական խորվություններն իսպանական համարյացովոր քաղաքներում միաժամանակ բռնկեցին. ֆաշիստների ամբողջ հույսը դրված եր անակնկալի, պայքարի համար իսպանական ժողովրդի աննախապատրաստ լինելու վրա։ Ազստամբը ների համար առանձնապես կարևոր եր Իսպանիայի մայրաքաղաքի՝ Մադրիդի դրավումը։

Բայց իսպանական կոմունիստներն արթուն եյին, ապօատամբությունը նրանց հանկարծակի չըերեց։ Անմիջապես բանվորներին զենք բաժանվեց։ Ենք քաղաքների մեծ մասում ապօատամբությունն իսկույն ճնշվեց։ Մադրիդը մեաց որինական կառավարության ձեռքին։



Մեր դահսուհավոր հասկովները,

Թվում եր, թե ապստամբությունը չհաջողվեց, և ապստամբ դեներալներին մի բան եր մոռմ—անձնատուր լիներ ԶԵ վոր ուժերն արգեն չափից գուրս անհավասար են—մի կողմում մի բուռն փոշիստներ և նրանց կողմից խարված, Աֆրիկայից բերված մարոկկացի զինվորներ, իսկ մյուս կողմում՝ իսպանական ամբողջ ժողովուրդը:

Բայց խոռվարար զեներալներն անձնատուր չեղանու Նրանք, բանից գուրս և գալիս, պահեստի մի կողիր ել ունեցին—Խոամիայի և Գերմանիայի ոգնությունը:

Այս այստեղ ել բացվեց, թե իսպանական ֆաշիստներն ինչու համար եյին նախորոք Գերմանիա և Խոամիա գնացել, ինչի մասին են այնտեղ բանակցություններ վարել, Այս յերկը ըստներից սկսեցին այժմ խոռվարարների համար շատապ կարդով հարյուրավոր նորագույն տանկեր և ստվառնակներ համար Ողտվելով զենքի վերաբերյալ իրենց ունեցած առավելությունից՝ խոռվար-ըները նորից հարձակման անցան:

Այն ժամանակ ֆրանսիական և անգլիական կառավարությունները տեսնելով, վոր իսպանական դործերի մեջ սկսում են ռոտար պետություններ խառնվել, և ցանկանալով գրանից խոռվագիր Յեվրոպայի բոլոր պետություններին առաջարկեցին այսպիսի մի համաձայնություն ստորագրել. բոլոր պետությունները խոստանում են զենք չմտակարարել վոչ իսպանական խոռվարներին, վոչ ել իսպանական կառավարությանը, Ինարկե, զամանարդարացի յեր. չեր կարելի խոռվարարներին և ամբողջ ժողովրդի կողմից ընտրված որինական կառավարությունը հավասարեցնել. Բայց զբա փոխարին այդ համաձայնությունը կարող եր խոռվարարներին զրկել զենքի մատակարարումից իսկ, վոր պլիսավորն ե, նա կարող եր խոչընդու հանդիսանալ իսպանիայի պատերազմը միջազգային պատերազմի վերածվելուն:

Այդ պատճառով ել Խորհրդային Միությունն ստորագրեց համաձայնությունը:

Ստիպված ստորագրեցին այդ համաձայնությունը և Գերմանիայի ու Խոամիայի կառավարությունները.

Սակայն զերմանական և խտական ֆաշիստները խարեւայության դիմեցին—համաձայնությունը նրանք ստորագրեցին, բայց չգործադրեցին. Նրանք շարունակում եյին խոռվարարներին զենք մատակարարել:

Խոռվարարները մռացան Մադրիդին:

Բայց այստեղ պարզվեց, վոր Մադրիդը գրավելու համար տանկեր ու սավառնակներ ունենալը գեր բավական չե, այդ ըանի համար անհրաժեշտ ենակ մեծ բանակ ունենալը. Անեղքուղին կովում Մադրիդի պաշտպանները, Նրանք բազմաթիվ տանկեր ու սավառնակներ խլեցին խոռվարաբներից. Նրանք իրենք եյին պատրաստում տանկերը ու սավառնակներ իրենց գործարաններում. Նրանք կարողացան դենք գնել Ամերիկայից և Խոպանիա փոխադրել:

Յեկ ահա Մադրիդի պատերի տակ ֆաշիստական բանակը պարտություն կրեց ու ցնցվեց:

Բայց այս ժամանակ գերմանական և խոտական կառավարությունները բոլոր կազմանքներն ու խորածանկությունները մի կողմ զրին և սկսեցին ապստաբներին ողնելու համար Խոպանիա ուղարկել վոչ միայն զենք, այլև իրենց զորքերը...

Այժմ, յերբ այս տողերը գրվում են, Մադրիդի տակ պայքարը զեր շարունակվում է, և վոչ վոք չգիտե, թե ինչ կլինի նրա վախճանը:

Բայց այժմ մի բան պարզ է. Գերմանիան և Խոտալիան խզուք չե, վոր այդքան յեռանդով ողնում են խոպանական խոռվարաններին. Ֆաշիստները ձգտում են՝ Խոպանիան զրավել նրա համար, վորպեսզի այն ևս քաշեն իրենց իսկ կողմից սարքած շաբաթերազմի ֆրոնտը, և նրա հարստություններն ու ուժերն ողագործեն ապագա համաշխարհային պատերազմում—պատերազմ մենից առաջ, Խորհրդավին Միության դեմ:

## ԶՐՈՒՑՑ ՊԵՐԵԿՈՂԻ ՄԱՍԻՆ

Առաջին անգամը չե, վոր թշնամին պատրաստվում ե մեր յերկիրը հափշտակելու, առաջին անգամը չե, վոր պատերազմի վտանգն ապահովում ե մեզ:

Տասննութ արի առաջ, քայլայման ու սովոր ժամանակը, յեր մենք չունեյինք վհչ հաց, վհչ մետաղ, վհչ քարածուխ, վհչ նազիք, յեր համարյա բոլոր գործարաններն անուշազրության եյին մատնված, իսկ գնացքները յերկաթուղու զծերով շարժվուած եյին սայլից վոչ արագ, այդ դժվար ժամանակ մեղ վիճակից դենքը ձեռներիս պաշտպանել մեր հայրենիքը:

Այս ժամանակ մենք չունեյինք այնպիսի հզոր բանակը

ինչպես այժմ. քաղաքացիական պատերազմի ժանր պայմաններում և ստեղծվել մեր Կարմիր բանակը:

Յերեք տարի շարունակվեց քաղաքացիական պատերազմը, յերեք տարի հետ եյինք մղում ոտար և ուստի կապիտալիստների կողմից կազմակերպված սպիտակ բանակները, Կռիվներ եյին զնում Ռւբալում, Միքիլում, Գետըոգը տակ, Որյով տակ, Եինի մոտ:

Վերջապես 1920 թվի աշնանը և՝ ծովակալ Կոլչակը, և՝ գեներալ Յուդենիչը, և գեներալ Դենիկինը ջարդ ու փշուր յեղան-սպիտակների ձեռքում—այժմ նրանց հրամանատարը բարոն Վրանգելն եր—մասց միայն Ղըմը:

Ենս ուղում եմ Ղըմի համար մղած պայքարի մասին պատմել, թե կուղակ միքանի խոսքով. այդքանը բավական կլինի, վորպիսդի պատկերացնենք մեզ, թե ինչպես եյինք կովում մենք քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Նոյեմբերի 3-ին կարմիր զորքերը մոտեցան Սիվաշին, Զբէ-յն շերտին, վոր Ղըմը բաժանում և մատցած յերկրից:

Ղըմը հենց կողքին եր, շատ մոտիկ. բայց այսուղ մտնելն անհնար եր. Սիվաշը, այդ ճահիճ-ծովը փակում եր զորքերի ճանապարհը:

Բնությունն ինչը Ղըմը դարձրել ե անմատչելի մի ամրոց. ըսուր կողմերից նա շրջապատված և ջրով և միայն հողի մի ըտրակ շերտով՝ Պերեկոսի պարանոցով միացած և մայր ցամաքի հետ. Այդ պարանոցն այնքան նեղ ե, վոր այսուղ մտնողները ժավալիվ չեն կարող. Մինչև անգամ փոքրիկ բանակը կարող և պաշտպանել այն, փակել Ղըմի մուտքը:

Հենց զբա վրա հլ հույս եյին զրել սպիտակները:

Պերեկոս քաղաքի մոտ, պարանոցի հենց սկզբում իր ամբողջ լայնությամբ ցամաքը վակված և վաղուց ի վեր շինված հողային պատնեշով. նրա առաջ գտնվում ե քառասուն մետր լայնությամբ մի փոստ Հենց այդ հողապատնեշն ել Վրանգելն ընտրեց իր ամբողջ լայնությունները կառուցելու համար. Մի տարուց ավելի աշխատում եյին այստեղ սալյուտները. նրանք հողաթումը կաըր-աեցին իրամատներով, քաղվեսային ըներով, ըլինգամներ սարքեցին, թաղստարաններ՝ թնդանոթների համար, գնդացրային ըներ:

Խոկ ամբությունների այս շարքի հետևում—պարանոցի վերջում—Ծուշունի մոտ սպիտակները կտոռուցեցին յերկրորդ շարքը ևս։ Այստեղ դրին սեփաստոպոլյան ամբություններից վերցը և հետաձիգ հակայական թնդանոթներ։

Այսպես եյին սպիտակները փակել Նըիմի մուտքը, հարծեայի կողպեազով եյին կողպել թերակղզին, իրենց վերջին ապաստարանը։

Հոկտեմբերի 30-ին Վրանգելն անձամբ դիտեց բոլոր ամբությունները, «Այսուհետեւ,—ասաց նա զննելուց հետո, —Նըիմը Քշնամու համար անմատչելի լե»։

Խոկ ուղիղ մի շարաթից հետո, կարմիր ճակատի հրամանատար Թրունզեն, այդ անվեհեր բոլէնիկը, վոր ցարական ժամանակ մահվան եր գատապարտված, հրաման արձակեց՝ վերցնել Նըիմը։ Ծեկ մեր զորքերը գրոնի շարժվեցին դեպի Պերեկոպիցայց նրանք շարժվեցին Նըիմի վրա վոչ այն ճանապարհով, վորով սպասում եյին նրանց սպիտակները։ Նրանք գնացին այսպիսի ճանապարհով, վորը նշանակված չե և վոչ մի քարտեղի մքա։

Այդ ժամանակ Նըիմում ցուրտ և հաղվագյուտ չոր աշուներ։ Բացի այդ, յերկար ժամանակ փչում եր անընդհատ քամի, վոր Սիվաշի ջրերը քշում եր դեպի արևելք։ Սիվաշն սկսեց ծանծաղել Այստեղ, վորտեղ, քարտեղին նայելով, տարածվում ե ծուզը, այժմ նեղ շերտի նման ձգվում եր մերկացած հատակը։

Թրունզեն զորքերին տարավ ծովի հատակով—Պերեկոպիքիունցը։ Նոյեմբերի 8-ի գիշերը, յերբ բալորովին մթնեց, տասնեւհնգերորդ և հիսուներկուերորդ դիվիզիաներն իջան ափեցու հատակով շարժվեցին։ Մթության մեջ, ճանապարհոց շշեղվելու համար, հետախույզները նախորսք ամրող ճանապարհի յերկարությամբ նշանաձողեր եյին գնում։

Մասսիուղը քուլա-քուլա բարձրանում եր Սիվաշի ծանծաղացած հունի վրա։ Կարմիր բանակայինները գնում եյին խոնավությունից կծկվելով։ Նրանք համարյա բոլորն ել բորիկ եյին, շատերը մինչև անգամ շինել շունեյին։ Նրանք փաթաթված եյին ցնցուահների մեջ, և գլխաներին, սաղավարտների փոխարեն, կտպել յերեսորբիչներ, շապիկներ, ինչ վոր պատահել եր։

Խավարի ու անգորորության մեջ գնում եյին մարտիկները վոչ մի բարձրաձայն խոսակցություն։ Մթության մեջ վոչ մի անգամ մի լուցկի ել չչթթաց, ԶԵ վոր, յեթե թշնամին նրանց

աեսներ ճանապարհին, կարմիր բանակայիններից վոչ մեկը չեր-  
պատվի—մերկ ու հարթ հատակում գնդակներից թաղնվել շեր-  
լինի, պաշտպանվելու հասար խրամատներ չկային:

Միայն հազարավոր զոտերի զգույշ խշոց, միայն ջրալի-  
ցերի ճղփյուն, կարծես ստվերների բանակ եր մյուս ափն-  
աւղնորվում, կտրում անցնում հովիաը, վորով դեռ վոչ վաղուց  
Մըլաշն եր զըրում իր ալիքները:

Խոկ այստեղից, ափից, ուր բուն եյին դրել թշնամիները-  
հաճախ լուսարձակների ճառագայթներն եյին յերկարածզվում,  
կտրատում զիսավերների խավարն ու արագությամբ փախչում ավե-  
լի տաճ, Յերբեմն ուսկետն եր թշում վեր, դեպի անստոष յեր-  
կինցն ու մի վայրէյան կախվում վարպես հրեղեն սունկ և, դան-  
դադությամբ ցըվելով, ցած ընկնում, թռիչքի ժամանակ հանգչե-  
լով; Գիշերը մերթ լուսավորվում եր դժգույն, առջնապային-  
լույսավ, մերթ կրկին ըոլսրովին սեվանում:

Մարդիկ զնում եյին ու գնում Արդեն մեր առաջընթաց:  
ջոկատները հասան պարանոցին, վորն արևելցում կազմում և մի-  
փոքրիկ հրվանդան, իսկ—ճեսեինները նոր եյին միայն մոտե-  
նում Միլաշի մեջտեղին—ճանապարհի դեռ կեսս ել չեյին անցելու-

Յեզ հանկարծ, դեռ հատակով քայլող կարմիր բանակային-  
ները խավարի մեջ ձախ կողմում նկատեցին ինչ վոր լուսավոր-  
շերտ. նա կարծես թե մեծանում եր, մոտենում և ավելի ու ավե-  
լի լոյնանում:

Այդ ջնարն եր գալիս:

Յեղանակը խարեց կտրմիր մարտիկներին. քամին փոխեց-  
ուղղությունը և այժմ ջուրը քշում եր հետ, ջոկատների կողմը—  
Անաղմուկ և առանց կանգնելու ծովը լցնում եր իր հատակը.

Մովը հասավ մարտիկներին, Արդեն նրանց վոտները չփչը-  
փում եյին ջրում, թնգանոթները թաղվում եյին ցեխի մեջ։  
Մարդիկ ու ձիերը շատ շատ ընկնում եյին ջրի տակ աննկա-  
տելի փոսերը, Հեծյալը վոտքը դրած-չդրած՝ ձիու հետ միանգա-  
սից կորչում և այստեղ, անկարող լինելով այլես ճանճուտից դուրս-  
պրծնել Յեզ քանի զնում՝ նշանաձողերով ցույց տված ուղիով՝  
տաճ ընթանալս ավելի յեր դժվարանում:

Միլաշը վերադառնում եր ժամանակավորապես լքած իբ-  
րովիս,

Ի՞նչ աներ Զըրից հետ փախչել, մի վերադառնալ:

Սակայն, չը վոր այստեղ, մթության մեջ, մեր առաջընթաց

Զոկատներն արդեն կռվի յեն բռնվել հրվանդանի վրա։ Նրանց  
ճանապարհը կտրված է։ Խսկ առանց ոգնության նրանք պարա-  
նոցի վրա չեն կարող դիմանալ։ Վհչ, այժմ հետ վերադաշտանալ՝  
նշանակում և ընկերներին վոչնչացման մատնել, խախտել հրա-  
մանը, դավաճանել Հայրենիքին։

Յեկ ահա, մարտիկները շարժվեցին ռռաջ։ Նրանք մի փոքր  
շեղվեցին նշանաձազերով թռւյց տրված ճանապարհից և գնացին  
անծանոթ տեղերով, վորտեղ կարծես թե ավելի ծանծաղ եր։

Արագ եյին գնում  
կարմիր բանակային-  
ները. չե՛ վոր նրանք  
պետք և ջրից առաջ  
ընկնեյին և ցամաք  
դուրս գային լուսա-  
բացից առաջ, նախ-  
քան սպիտակները  
կնկատեյին նրանց։

Բարեբախտաբար  
նրանք ճիշտ ուղղու-  
թյուն եյին գտել։ Յեկ  
յերը վերջին կարմիր  
բանակայինը յեղեղ-  
ների միջից մյուս  
ափը գտերս յեկավ,  
նրա հետերց ար-  
դեն փռված եր ծո-  
վի հավասար ու լայն  
մակերեսը։

Այդպես տասնեւ-  
հինգերորդ և հիսու-  
ներկուերորդ գիմի-  
պիաներն անցան Սի-  
վաշը և հարվածեցին  
Պերեկոսպի թիկունքին։

Այս քամին ջուրը քշում եր հետ կարմիր  
բանակայիններէ կողմը։

Հենց այդ միենույն ժամանակ հիսունմեկերորդ գիմիզիան  
շամացով զրոնի զիմեց Պերեկոսպի վրա՝ ճակատի կողմից։

Կարմիրներէ հազար ռազմիկներէ յերեքական թնդանոթ եր  
ընկնում, սպիտակներին՝ քսանական, այսինքն՝ համարյա յոթ

անդամ ավելիս Սպիտակները հողապատճեղով լավ պաշտպանված եյին, իսկ մեր մարտիկները շարժվում եյին բաց, հարթ տափառանով, հակառակորդի աչքի առաջ:

Յեվ, այսուամենայնիվ, նրանք առաջ եյին գնում: Ճիշտ ե, այդ որը նրանց չհաջողվեց մինչև հողապատճեղը հասնել: Նրանց հասան միայն մինչև փոսը, և թեև նրանք կարողացան վոչնչացնել այստեղ լարափակոցները, բայց ավելի առաջ շարժվել չկարողացան, գրոհը փոսի մեջ թուլացավ:

Յերեկոյան 51-րդ դիվիզիան նորից հարձակման անցավ: Նրանց դիմավորեց արկերի ու գնդակների միապաղպերեղին ծածկութը: Այս անդամ մարտիկներին հաջողվեց կիս մոռենալ հողաթմրին: Ընդամենը քառասուն քայլ եր նրանց բաժնում նպատակակետից: Բայց այդ վերջին քառասուն քայլեր համար կարմիր բանակայինների ուժերը չեյին բավականացնում, այնքան խոշոր եյին կորուստները:

Խոկ կես գիշերին տագնապալից լուր ստացվեց: Առավուայտն հրվանդան հասած դիվիզիաները թեպետ գեռ առաջ են շարժվում, բայց նրանց ուժերն անընդհատ մարտերում արդին սպառվել են: Պաշտրեղին չի հայթայթվում նրանց, պարենչկա և, վոր ամենից վատն ե, խմելու ջուր չկա: Յեպէ հիսունմեկերորդ դիվիզիան չպատռի Պերեկոպն ու իրենց ոգնության չհասնի, մեր դորքերին հրվանդանի վրա վոչնչացում և սպառնում:

Այս ժամանակ, խորը գիշերին, նորից դիվիզիան անցավ հարձակման: Սա յերբորդ գրոհն եր մի որվա ընթացքում,

Դեպի յերկինք սլացավ կապույտ ռակետը և առաջինը գրուէր նետվեցին մեր զրահապատճերը: Առավելագույն արագություն դարձացնելով փոթորկի նման սլացան նրանք թշնամու հըետային կրակի միջով: Զրահաջոկատի մարտիկները կեռիկներով կառչում եյին փշալարերից, մաս-մաս կտրտառում այն ու անցքեր բաց անում հետևակի համար:

Սպիտակների մարտիկոցները համառը գնդակոծում եյին մեր զրահապատ մեքենաները:

Արկերից մեկը հարվածեց առաջընթաց միքենային, որուրս բերեց նրան շարքից: Աըյան կորստից գժգունած՝ զրահապատճերի ջնկատի հրամանատարը զուրու յեկավ այստեղից—նա փորից վիրավորվել եր արկի կտորից: Նա անմիջապես նստեց հարևան-

Վլրահապատի վրա, Վիրակապության կայանը գնալու փոխարեն նա շաբունակնց զեկովարել մարտը:

Արդեն մեր հետեւկը վազում եր զեպի հողաթումը, մազլցում նրա վրա, ձեռքի նանակներ եր սփռում սպիտակների վրա:

Այս անգամ սպիտակները ցնցվեցին, Անընդհատ գրոհներից ցածրեց, իմանալով, վոր կարմիր զորքերը մոտենում են և առջիկը, և հետեւկը, ցըշապատվելուց վախճառով, նահանջեցին հողապատճեցից:

Պերեկողն ընկապի Բայց սպիտակները դեռ ջարգված չեյին. Նրանք թագնվեցին Յուշունում:

Յուշունը թերես ավելի ուժեղ եր Պերեկոպից. Բաղմաթիկ աղային լճակներով կարառված, պարանոցն այստեղ վերածվում և մի ջրային լորիրինթոսի, Յեզայս լարիրինթոսի ամեն մի անցքում աղանված եյին սպիտակներն իրենց ամրությունների հետեւմ:



Այս լարյուրինթոսի ամեն մի անցքում պահպել եյին սպիտակները:

Վրանզելն իր ամբողջ ուժերը նետեց Յուշունը պաշտպանելու համար—և՝ զրահապատները, և՝ տանկերը, և՝ սավառնակները, և՝ զրահապատ գնացքները, մինչև անգամ նավերն ել մատեցան ափին և սկսեցին դնդակոծել մեր զորքերին:

Յերկու որ այստեղ կոխվեր եյին տեղի ունենում: Նոյեմբերի 10-ին կարմիր բանակայինները գրավեցին յուշունյան խրամատների առաջին յերկու գծերը. Անում եր յորըորդը—վերջինը:

Այդ ժամանակ իրամատների այս գծի վրա գրոհող բըեցաղն այն ասաբճան հոգնած եր, վոր կարմիր հրաժանատարու-

Թյունը նրան առաջարկեց հետ քաշվել թիկունք՝ հանգստանալու, դիջելով իր տեղը նոր հասած զորքերին:

Բայց կարմիր բանակայինները պատասխանեցին—«Մենք կհանգստանանք, յերբ Յուլունը վերցնենք»։ Ենք առավոտյան նրանք առաջինը պատուեցին յուշունյան ամրությունները, իսկ այդ ժամանակներում մի ուրիշ դիվիդիա—յերեսուներորդը—անցավ Սիվաշը գիշերով, գնդակների տարափի տակ, յերեք գերանից մի նեղլիկ կամուրջ գցեց և նրա վրայով անցկացավ Նըիմ։

«Մենք մատեցանք լարափակոցներին։ Դաշտում ամենուրեք ընկած եյին մարզկանց ու ձիերի զիակներու թափթփված եյին չպայթած ականներ։ Շատ մեռածներ կախված եյին լարափակոցներից։ Անցնելիս մենք նայում եյինք նրանց գերերին, այստեղ կորան 265-րդ և 266-րդ գնդերի մեր ընկեր կարմիր բանակայինները...»

Այս, շատ կարմիր մարտիկներ կորան այդ որը—կորան վոչ իդուր—նրանք այդ որը զարձրին քաղաքացիական պատերազմի վերջին որը։

Սպիտակ բանակը, հույսը կորցնելով, փախավ։ Մեր զորքերը վերջապես նեղ պարանոցի կոկորդից դուրս յեկան Նըիմի լայնարձակ տափաստանները և այստեղ հալածում եյին սպիտակներին։

«Հաղթություն, և փայլուն հաղթություն և տարված ամսող զծի վրա,—զրում եր Յորունզին—Հեղափոխական թափն ամելի ուժեղ դուրս յեկավ, քան ընության, տեխնիկայի ու մահարեր կրակի միացյալ ջանքերը»։

Այժմ ընկեր Ֆրունզեն այլնա կենդանի չե. կենդանի չեն և այն ժամանակների բազմաթիվ հերոսներ։

Բայց կարմիր բանակում առաջիւ նման ազրում և այն մինույն «հեղափոխական թափը», վոր նրան հաղթություն պարզեց Պերեկոպի տակ։

Միայն այդ թափի զորությունն այժմ կրկնապատկված ե, — վհչ, վոչ թե կրկնապատկված, այլ տամապատկված ե—շտեխնիկայի և մահարեր կրակի ուժով։

Այդ բանակը պաշտպանում և մեր աշխատանքը, պահպանում և խաղաղությունը, հսկում և մեր յերկրի սահմաններին։

«Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ցանկանում, — բոլորիս փոխարեն ասաց ընկեր Ստալինը. — բայց և մեր հողից, — ավելացրեց նա, — վոչ մի վերջոկ չենք տա վոչ վորից»։

Մեր մարտիկների սաղավարտների վրա շողապում և հընդութեա աստղը, Այդ նշան և այն բանի, վոր նրանք բոլոր հինգ մայր ցամացների ճնշվածների բարեկամներն ու պաշտպաններն են, Այդ պատճառով ել կարմիր բանակը բոլոր մայր ցամացներում, բոլոր յերկրներում բարեկամներ ունին.

Մ'զ և անդամալույժ Բառուն Բառուն ավստրիական արհեստավոր ե, ապրում և նաև Վիեննայում, Քառն տարի առաջ նաև պատերազմի կանչվեց և կռվում կորցրեց իր յերկու վուտքը Այն որվանից նաև հասկացել ե, թե ունին և պատերազմ հարկավոր և ով և նրա դեմ Անձամբ իրեն պատերազմը վոչչով չե սպառնում. բայց նա չի ցանկանում, վորպեսզի նրանք, վորոնք գեր տասնվեց-տասնյոթ տարեկան են, շուտով նույնպիսի անդամալույժներ դառնան, ինչպես նա ինքն եւ Յելի ահա, լսելով, վոր Ժնևում աշխատավորների հակառակարգմական համաշխարհային կոնգրես և Հրավիրվում, նստում եր յեռանիվ սայլակը, ձեռքի հետանիվը, ձեռքերով բռնում նրա լծակները և գնում Ժնև Նա շատ յերկար և զնում, շատ-շատ որեր սայլակը ցընցվում և ճանապարհներին—անդամալույժ Բառուն արդեն ծեր եր, նրա ձեռները հոգնում եյին աշխատանքից Բացի այդ, նա կանգ և առնում բոլոր քաղաքներում և ամենուր, ուր հնարավոր ե, նոր, իմպերիալիստական պատերազմի դեմ ճառեր և արտասանում Վիեննային նա Վիեննայից հասնում և Ժնև

Ենք նա այսեղ իմանում ե, վոր շվեյցարական իշխանություններն արգելել են կրոնգրեսը, ստիպված են յեղել փոխադրել Ամստերդամ, Ժնևից Ամստերդամ շատ և հեռու Բայց ծերունի-Բառուն նորից նստում եր սայլակը, ձեռքերով բռնում լծակները, ու յերգելով կրկին ճանապարհ ընկնում, Այդպես շրջում ե նա ամբողջ Յեվրոպան, յերկրից յերկրի, նա վոտքեր չունի, կիրումեարներն անցնում ե ձեռներով: Նա Ամստերդամ և համնում շարաչար տանջված, բայց գուն ե, ժամկետին ե տեղ հասեր Յել կրոնգրեսի մասցյալ 1199 պատիրակների հետ ստորագրում ե յերգումը—միշտ պայքարել Փաշիզմի դեմ, իմպերիալիստական պատերազմի դեմ, պաշտպանել Առողջապային Միությունը...

Առօրէրդային Միությունը, Կարմիր բանակն ամբողջ աշխարհում ցրված միլիոննավոր բարեկամներ ունեն:

Կոմինտերնի վերջին կոնգրեսին բոլոր ժողովուրդների ներ-



Մեր առնկերը:

կայացուցիչները վաթառւնինդ լեզվով վողջունում եյին կարմիր բանակին:

Նրան վողջունում եյին նրանք, ովքեր պայքարում են մարդկությունն ազատազրելու համար, — կոմունիստները:

Ֆաշիստները լարում են իրենց բոլոր ուժերը, վորպեսզի վերջ տան կոմունիզմին, վերջ տան մարդությամբին:

Կոմունիստներին գլխաւում են Գերմանիայում, կախում են Բուլղարիայում, ջրհան մեքենայի հոսանքի տակ սառեցնում են Չինաստանում, խնդրաման են անում. Ճապոնիայում... Բայց վուշնչառնել կոմունիզմը չեն կարողանում:

«Առողջապահությանը հասցըած ամեն մի հարված վորպես սպիրիտն էմիս մեր մեջքին», — այս յերգը հորինել են գերմանական բանվորները: «Պատերազմը ԽՍՀ Միության դեմ—այդ պատերազմ ե հենց մեր դեմ», — այսպես են տառւ ճապոնական քանվորները:

Դատարանում ֆաշիստական մինիստրը գոռում ե բուլղարական կոմունիստ Դիմիտրովին վրա. «Ես ձեզ կկախենք: Իսկ Դիմիտրովը հանդիսաւ պատասխանում ե. «Ենձ թվում ե, պարունակնիստը, վոր դուք ինձանից վախենում եք...»:

Այլուն քաղաքի բանտարյին խցիկում գերմանական կոմունիստ Ավգուստ Լյուտզենսը վերջին նամակն ե գրում իր յերեխաներին.

«Իմ թանգարին դավակներ, — գրում ե նա, — յերբ դուք այս նամակն ստանաք, ձեր հայրն այլևս կենդանի չի լինի, նրան, համաձայն դատավճռի, մահվան պատժի յեն յենթարկում ե, նշանակում ե, այլևս մենք չենք տեսնվի: Բայց յերբ դուք կմեծանաք և կուսումնասիրեք համաշխարհային պատմությունը, դուք կհասկանաք, թե ով եր ձեր հայրը, ինչի համար պայքարեց և բնչի համար նա մեռավ. ու նույնպես կհասկանաք. թե ինչնել ձեր հայրն այսպես գործեց, և վոչ ուրիշ կերպ. Այժմ մնաք բարով ու մեծացեք վորպես պայքարողներ: Ընդունեցեք ձեր հոր վողջույնը»:

Այս նամակը գրվելուց յերկու որ հետո Լյուտզենսին ուրիշ կոմունիստների հետ միասին դուրս բերին բանտի բակը: Դահին արդեն սպասում եր նրանց: Մնացյալ բանտարկյալներին նույնպես բակը դուրս բերին, վորպեսզի ներկա լինեն կոմունիստների մահապատճին:

Դահինը բարձրացրեց կացինը: Բայց նրա կացինն իշխելուց առաջ Ավգուստ Լյուտզենսը կարողացավ կանչել — «Մեռնում եմ պրոլետարական հեղափոխության համար: Ռուս Փրոնտը:

Մահապատճեն հերթը կոչվածար Կարլ Վոյլֆինն էր. ըստ առվորության՝ մահվանից առաջ նրան հարցը ին վերջին ցանքության մասին:

— Են կցանկանայի վերջին անգամ բացվել, — պատասխանեց Կարլ Վոյլֆը, — և, պատասխանի չսպասելով, դահճին մի զրնդուն ապահակ հասցը եց. Մի բողեյից հետո նա ևս արիարար մեռավ, ինչպես Լյուտգենսը...

Եանհայում ճապոնական պինվորները գնդականարում եյին շինացիներին:

Ճապոնական մի սպա կանչեց առաջին պատահած տակում մոտուր. նրան անհրաժեշտ եր շատար հասցնել շուտափույթ հաղորդագրություն Ի՞նչ եր մուտք անելու չինացի շոֆերին, Յեթե նա հրաժարվեր պային տանել, ճապոնացին հենց ուղղակի կողմ ներ նրան և մի այլ ավտոմոբիլ կվարձեր:

Յեթ ահա շոֆերը — նրա ազգանունն անհայտ մասց — հնադանդությամբ, առանց վորւե խոսակցությունների տարած նրան այնտեղ, վորտեղ վոր պետք եր, Ավտոմոբիլը սլանում եր լրիվ ընթացքով: Սպան լուռ նստել եր կաշվե նստարանի վրա: Նրա առաջ լուռ նըստած եր և շոֆերը. Հմուտ ձեռքով նա զեկը շուռ եր տալիս մի քիչ ձախ, մի քիչ աջ: Նրա զեմքը հանգիստ եր ու անշարժ: Յեթ հանկարծ, յերբ ավտոմոբիլը մոտենում եր կամքջին, շոֆերը դեկն այնպիսի արագությամբ ու միանգամից շուռ տվեց, վոր ավտոմոբիլը գետափից ուղիղ ջրի մոջ թռավ: Ջրի մի ճղփյուն, ու այլևս չկային ավտոմոբիլով սկացող յերկու մարզը:



Ավտոմոբիլը ստեկց ուղիղ ջրի մեջ.

«Մարդսիզմը վոչնչացնելու համար պետք եւ վոչնչացնել քանվոր դասակարգը, — ասաց ընկեր Ստալինը. — իսկ վոչնչացնել քանվոր դասակարգը՝ անհարին եւ:

Կարմիր աստղը փայլում եւ ամրող աշխարհի վրա: Խնչպես ասողը յերկնքում մութ գիշերին ուղի յեւ ցույց տալիս նավերին և նրանով ծովագնացները ճիշտ ընթացք են նշում, այդուհետեւ կարմիր աստղը ժողովուրդներին եւ ուղի ցույց տալիս:

Խ՞նչ կասեն քաշիստներն իրենց զինվորներին, յեղբ նըանց մեր զեմ դուրս բերեն, Նըանք չեն համարձակվի ճշմարիտն ասեց նըանց:

Խսկ մենք գիտենք, թե ինչի համար ենք կռվելու:


Մենք կկալինք նրա համար, վորովեսպի ավելի շուտ վրա հասնի առանց պատերազմների ժամանակը, Մենք կպատերազմնենք ընդդեմ գայլային որենքի իշխանության, կյանքի նոր ավելի լավ կարգի—սոցիալիզմի համար,—նոր մարդկային որենքի համար:

Մենք կպաշտպանենք մեր հայրենիքը—ամբողջ մարդկության հույսը:

Մենք սիրում ենք մեր հայրենիքը և պատրաստ ենք այն պաշտպանելու նրա համար, վորովեսպի համազին սոցիալիստական պետությունն և հանդիսանում է ու արժանապատճեն, վորուեղ չկա մարդու շահագործում մարդու կողմից, վորուեղ մարդկային անքն ու արժանապատճենը առաջանաւ ծախսի առարկա չեն, վորուեղ ծաղկում և զանազան ազգությունների պատկանադրությունը առաջականացնելու մեջ աշ-

խատավորների հոյակապ բարեկամությունը:

Մենք սիրում ենք մեր հայրենիքը և պատրաստ ենք այն պաշտպանելու նրա համար, վորովեսպի նա առաջ և ու հարուստիր գործարաններով, Փարբիկաններով, յերկաթուղային նանապարհներով, իր տեխնիկայով, նրա համար, վորովեսպի նրա հոգերը բերը յեն, նրա ընդերքի հանքային գանձերն անհաջելի-




Մեր ձեռքը չե դուզ ու ոչը չե դուզնենի դուիք մարտերում:



ՄԵՐ կոսովարդի քանզար զամակություն անհաղթ ժողովուն նկատ Վարչելուց...»

յեն, զետերը, լճերը և ծովերը հպոր են ու ջրառատ, — և այդ  
ամենը պատկանում է մեզ.

Մենք դուրս կդանք մեր հայրենիքը պաշտպանելու այս-  
պես, ինչպես քաղաքացիական պատերազմի ժամանակ դուրս  
եյին գոլիս դոնեցյան հանքագործ բանվորները և սալի պար-  
աբերանները, վորոնք ցարիցինյան տափաստաններում ստեղծեցին-  
սպիտակ գվարդիական գնդերի ուղին փակող ճկարմիր Վերդե-  
նը, ինչպես դուրս եյին գոլիս սեծովյան հեղափոխական-  
ծովայինները, վո-  
րոնք ծովերի պատ-  
արածությունը փո-  
խանակել եյին ոտա-  
րերկրյատեխնիկային-  
հակառակ ինքնա-  
ստեղծ դրանպատ-  
զնացքների հարթակ-  
ների և իրենց սվին-  
ների յիամերգային-  
ուուր ծայրերի ու անձ-  
նական քաջության-  
նետ. Մեզ կառաջնոր-  
դի իր նպաստկների-  
անխորտակելի գիւ-  
տակցությամբ և հղոր-  
տեխնիկայով համա-  
պինված բանվոր դա-  
սակարգի անհազթելի-  
մարչալ կլիմ. Վորոշի-  
լովը...



Ապագա մարտերում մեց ինդիքն և հաղթել

և կոփենք մեր դիմացկունությունը, մեր կամքի ուժը. Թող ամեն-  
մեր կոմյերիտականի համար որինակ լինի ընկեր Ստալինի մեծ-  
ու լուսավոր պատկերը, վորը ժանդարմենի շարքերի միջով ու  
հարգածների տակ գնում եր գլուխը բարձր պահած և թշնամու-  
սուջ չեր արտահայտում թռւլության մինչև անդամ ամենա-  
փոքր մի նշան:

Ապագա մարտերում մեր ինդիքն և — հաղթել

## ՀԱՎԵԼՎԱԾ

Հավանորեն այս գրքում ձեզ պատահեցին անծանոթ անուններ ու գեղքեր, հիշեցումներ այն տեսակ բաների, վորոնց մասին ցանկալի կլիներ ավելի սանրածանորեն իմանալ:

Վորովին անհարմար եր զրույցի ընթացքն ընդհատել ծանօթություններով, զբա համար վորոշեցինք բոլոր բացառություններն ու լրացումներն ի մի հավաքել և այստեղ ամփոփել առանձին բաժնում:

Աջ 7: «Զինվարնե՛ր,—բացականչել եր կայսր և ցույց տվել իր պալատի առջևի ծառերը, —այս սերները դեռ շղեղնած ու շրափված՝ առն կվերտադառնութեար նաղբանակով»:

Վիճելու II շատ եր սիրում զինվորների առաջ ճառեր արագաստնել, և նրա բոլոր ճառերը միշտ ել յեղել հն չափազանց պարծենկոտ ու ուղարկածնչու Այսպես, որինակ, 1900 թվին իր զորքերը Զինաստան ուղարկելիս բարի յերթ մաղթեց նրանց այսպիսի խոսքերով—«Զինայել, գերի չվերցնել, կովեցեք այնպես, վոր հազար տարուց հետո ել վոչ մի չինացի չհամարձակվի իսեթ նայել գերմանացու վրա»:

Չնայած վոր նա խոսքերով շատ եր գոռող, զործի մեջ Վիճելու II վախկոս եր, Բավական և մի որինակ բերել. նա շատ հաճախ ճառեր և արտասանել ողային նավատորմի նշանակության մասին, բայց նա ինքն իր ամբողջ կյանքի ընթացքում սիրտ չի արել սավառնակ նատել և դեթ հինգ րոպեյով թռիչք կատարել. Նրան այդ թվում եր չափազանց վատանգովոր:

Աջ 15. «Նարանակում ենք դիմանալ: Յենթարկվում ենք կրակի ուս վանձավոր գրանիք:

Վոր ամբության պարետն աչքի առաջ ուներ գերմանական հրանետները: Հրանետները հորինել եր գերմանական մի հրդեհաշնչ համաշխարհային պատերազմից քիչ առաջ, Նըանք մեծ ձնշման ազդեցությամբ դուրս են նետում վառվող յուղի շիթեր:

Աջ 25: Թագածառամզը, վոր իր խոկ զինվարների կողմից դահին ամսուն եր ոտացել...

„Massenmörder“—այսպես եյին անվանում նրան զերմանական դինվորները— յեթե բառացիորեն թարգմանենք, կսաց-պի «մասսայական մարդասպան»:

Թագաժառանգը համաշխարհային պատերազմի ժամանակ մի-քանի բանակների հրամանատար եր. այնպես եյին համարում, թե նա զանգում և ռազմաճակատում, դինվորների հետ բաժանում և ռազմական դժվարություններն ու վտանգները Բայց իսկապես ամբողջ պատերազմի ընթացքում նա վոչ մի ժամանակ թնդանոթի զնդակի հասողության տարածությունից ավելի չե-մուտիկացել առաջավոր դիրքերին:

Եջ 19: Յօրերադ արդ կովի մեջ մտան գերծանց թնդանօթները: Ի՞նչպես պատկերացում տալ այս թնդանոթների ուժի ժա-սին: Յերևակայիցեց, վոր սրբնթաց զնադքն իր ամբողջ թա-փով զարկվում է պատին. դա, իհառկե, կլինի խորտակիչ հարված-բայց զերծանոր թնդանոթի արկն ել ավելի մեծ ուժով և հարվածում:

Եջ 25: Գեներալ Սարային այն մարդկանցից չեր, վարանց կա-րելի յեր զիջումներով հօգնեցնել:

Համաշխարհային պատերազմից հետո գեներալ Սարայլը Սի-րիայում գրավեց զերագույն կոմիսարի պոստը: Այնտեղ նա զոր-ծի ձեռնարկեց նույնպիսի յեռանգով ու մոլեռանդությամբ, ինչ-պես մի ժամանակ Հունաստանում Նրա կառավարման արդյունք-ները շուտով յերևացին: 1925 թվին արարական ցեղերը նրա զիմ ապստամբեցին: Գեներալ Սարայլը սագառնակներ ուղարկեց՝ ոդից ուժբակոծելու արարական քաղաքները: Ազգատամբությունը ճնշ-վեց: Սակայն հենց Սարայի անունը այնքան տեսլի դարձավ Սիրիայի բնակչությանը, վոր Փրանսիական կառավարությունն ամենախիելացին համարեց հետ կանչել Սարային: Նրան առա-ջարկեցին հրաժարական տալ:

Եջ 35. Աօխարհում յեղած ամբողջ ալյուքինի կեսը պատկա-նում և Մելլոնին:

Ա. Խըբկական բանկիր Մելլոնը աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկն և, նա Միացյալ Նախագահների ֆինանսների անփոփոխ մինիստրն եր յերեք նախագահների՝ Հարդինզի, Կու-միջի և Հուկերի ժամանակ:

Եջ 36: Այդ պատճուռով ել նրանք բոլոր միջոցներով զանում են մուտք գածել ոստը յերեմներ:

Ահա միքանի որինակ:

Անդլիական գործարաններում պատրաստում են շատ փոքր ամիսի մանող մեքենաներ, կարծես թղուկների համար Առաջին Հայոց բարեկանութիւնը անհասկանալի յէ, թե ևւմ կարող են պետք դալ այդ բան փոքր մեքենաները Բանից դուրս ե գալիս, վոր զրանք ուղարկում են Զինաստան. այնտեղ ֆարբիկաններում աշխատում են յերեխաներ:

Դերմանական արհեստական ատամների ֆարբիկաններում ու ատամներ են պատրաստում: Ինչու համար, Դրանք ուղարկում են Մալալան կղզիները, այնտեղ միքանի ցեղեր գերազասում են ու ատամները:

Ճապոնական գործվածքների վրա հաճախ գործարանային կեզծ դրոշմներ են դրվում՝ անգլիական կամ ֆրանսիական. Ինչու համար և այդ արվում: Ճապոնական գործվածքային գործարաններն աշխատում են խուսափել մաքսի զանձումից, ավելի հեշտ և այդ ձեռով արտասահման մուժել իրենց ազրանքները և այնտեղ նրանց վաճառել ավելի մեծ շահով:

**Սշ ԱՅ:** «Յեր մենք խօսում ենք Յնվրապայում նոր հոգեր ձեռք բերելու մասին, մենք առաջին ներքին աշխի առաջ ունենք Խուսափանքը:

Նյուրենբերգում վերջերս տեղի ունեցած ֆաշիստական համագումարում Հիտլերն ել ավելի էկակ ճառ արտասահմաց: Նա բացարձակ հայտարարեց—«Դերմանիային հարկավոր և ամբողջ Ռեկրանան և Ռուբալը»:

**Սշ ԱՅ:** Այդպես և ասում զեներալ Արտիկին:

Գեներալ Արտիկին Մանջուրիայում գործող ճապոնական բանակի հրամանատարն եր. հետագայում նա դարձավ Ճապոնիայի դինվորական մինիստրը:

**Սշ ԱՅ:** Կելլոզի պակեր:

Այս պակտը գրված և վոսկե գրչով, հատկապես այդ նպատակի համար պատրաստված տռաձնապես ամուր թղթի վրա: Վոսկե գրիչը պահպան և Փարիդի թանգարանում պահպան տակ. ստորագրություններով և կնիքներով թուղթը պահպան և Վաշինգտոնում: Իսկ ինքը պակտը—ալդ թղթի վրա գրված պարտավորությունները,—չի կատարում և վոչ մի ֆաշիստական յերկիր:

**Սշ ԱՅ:** 1917 թվի նույիսի 22-ին անգլիական զինվարների մի ջակատ ուղարկվեց առաջավաց գիծը, վարպեսզի այնուղի գազամեալ հաստափ:

Գազանետեր անվանվեցին նոր հնարյած այն թնդանոթները,

վորոնց բաց եյին թողնում թունավոր նյութերով լցված ականհերք Միքանի հարյուր, իսկ յերբեմն ել միքանի հազար դպրունետեր միացնում եյին եկեղեցական հոստնքով և համագործելու տալիս Յերկիրը դողում եր ինչպես յերկրաշարժի ժամանակը էրդեն շերտը, կրակոցների փայլմանքը—կայծակի նման ուշանում եր ռազմաճակատով. Հաղարավոր ականհերք, բզղությով ու իրենց հետեւց շողուն հետքեր թողնելով, կտրում եյին ողը. Թունավոր գաղի ամպը հանկարծակի տարածվում եր հակառակորդի խրամատները վրա:

Գաղանետերը հնարել և անզիտական ճարտարապետ Լիվենսը Նետաքրթիր և այն պատճառը. վոր դրդնց նրան գաղանետ պատրաստելու:

1915 թվի մայիսի 7-ին գերմանական սուզանավերից մեկն Ամերիկայից Յեվրոպա տանող ճանապարհի վրա խորտակեց Շլուզիտանիա մարդատար վիթխարի նավը. Շատ ժողովուրդ վոշընչացավ, գրանց թվում և Լիվենսի յերեխան. Այդ որը Լիվենսը յերդվեց վրեժ առնել Գերմանիայից. Գաղանետի հորինումը յեղավ նրա վրեժինդրությունը.

Եզ 53: Խպրիտը բիմիտական պատերազմի բարձրագույն նվաճումներ:

Զպետք և կարծել, վոր իպրիտը և մացած թունավոր նյութերը պատերազմի ժամանակ են հնարքել Վճչ, Նրանցից շատերը դեռ վաղուց արդեն հայտնի եյին. Խպրիտը, որինակամինչ համաշխարհային պատերազմն արդեն վաղուց գտնված եր, ֆուզենը՝ հարյուր տարի նրանից առաջ, իսկ Քլորը՝ ել ավելի առաջ. Բայց հենց քառներորդ դարում, համաշխարհային պատերազմից առաջ, միջոցներ հնարքեցին այս թույները մեծ քանակությամբ պատրաստելու. Յեզ հենց համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք առաջին անգամ գործադրվեցին մարդկանց գեմ:

Եզ 54: Բոլոր յերեներում գիտնականներն սկսեցին նետազանի խպրիտ:

Նոր թույնի աղղեցությունը ճշտությամբ պարզելու համար, վրրոշելու համար, թե ինչպիսի համակենտրոնացման ժամանակ ևս համամատաբար անմնաս և և վորի ժամանակ մահացու, մի ամերիկական ուսունող համաձայնեց առանց հակապաղի մանել իպրիտի գոլորշիներով լցված խցիկը. Նա այսակա նստեց քառասուննինդ բոլոր համասին խցի մեջ գցեցին մի մուկ, մի-

կատու և մի շունչ Թառասունհինդ ըռպեյից հետո խցիկը ըսցը արին, կենդանիները շուտով սատկեցին, Իսկ ուստինողն սկսեցիրն վաս զգալ միայն վեց ժամից հետո, Յերեկոյան դեմ նա կուրացավ։ Մյուս որն առավոտյան նա կրկին սկսեց տեսնելու բայց նրա աչքերը ինիստ ցավում երին։ Յերեսունվեց ժամվացնթացըում նա չկարողացավ և վոչ մի ըռպե քննել։ Յերրորդ որը նրա կաշվի վրա այրվածքներ առաջացան, բշտիկներ դուրս տվին։ Միայն յոթ որից հետո նա մի թիշ ավելի լավ զգաց իրեն, և յերեք շաբաթից հետո վերջապես նա սկսեց կազմուրպիեւ։

Եղ Ճ8. Կրաւպպ ֆօն Բոլենը ու մետաղների արքան եւ.

Կրուպպը Գերմանիայում ամենահարուստ մարդն է և այժմ ել այդպիսին եւ Պիլինելմ II իր հարստությամբ Գերմանիայում՝ վեցորորդ մարդն եր։

Եղ Ճ9. Այժմ ի՞նչպիսի բիմիական պահետազմ կլիթի, Այս նարցին փորձում եւ պատասխանել տնօղիական զեմերալ Ֆուլիերը։

Գեներալ Ֆուլլերը համաշխարհային պատերազմի ժամանակը՝ տանկային կորպուսի շտարի պետն եր, Պատերազմից հետո նա միահամանակ բրիտանական զլիսավոր շտարի պետի ոգնական դարձավ։

Գեներալ Ֆուլլերը Փաշիստ եւ Նրա գրքերում հատուկ բայիններ կան՝ նվիրված գաղութային և քաղաքացիական պատերազմներին։ Գեներալ Ֆուլլերը խորհուրդ եւ տալիս բանվորական ցույցերը ցըել գաղային ռումբերով։ Գաղութներում բռնկած տպատամբությունների ժամանակ նա խորհուրդ եւ տալիս սալվադունկներից թունավորել այն ջրհորները, վորոնցով ոգտվում են տեղական ցեղերը։

Ֆուլլերի այս յերկու ցուցումներն ել կենսագործվում են։

Ենք Յելլոպայում, և՛ առանձնապես Ամերիկայում բանվորական ցույցերի ցըման համար գործադրում են թունավորություններ, Իսկ իտալո-հարեշական պատերազմի ժամանակ իտալական Փաշիստները, իրոք, սկսեցին ողից թունավորել հարեշական ջրհորները։

Եղ Ճ10. Ահա թե ինչու նամար ելին զրծածում փռչացնող և արցունքաբեր զազերը, Վորաբեսօնի նամապարն նարքեն սպանող զազերի նամար։

Մեջ եմ ըերում 1918 թվի հունիսի 16-ի գերմանական քիմիական գրուի արձանագրությունը։

«Կես դիշեր եւ կրացանաձգությունը վաղուց և դադարել»

Զինգուրները հանդիսատ քնած են խրամատներում։ Հանկարծ նրանց արթնացնում և մարտկոցային փոթորկոտ գնդակոծումը։ Անդադար թոշում են արկերը՝ միքանիսը փոշտացնող նութերով լցված, մյօւսները՝ ֆոսգենով։ Փաշտացնող գազերը արթնացողներին խոնդարում են հակագազերը հազներ մուսկենը կործանում են նրան, ովք շփոթվել է, Ընդամենը յերկու բռպե յե տնում այս կատաղի գնդակոծումը։ Հետո թնդանոթներն են սկսում կրակել՝ բոլորովին այլ կերպ. այժմ նրանք անհամեմատ ավելի ուշուշ են արկեր ուղարկում — կարծես ըստ ժամերի, համահավասար ընդհատումներով։ Հավաստաչափ, առանց շտագելու, ուղարկում են նրանք արցունքաբեր արկեր, Այս արկերը վոչ վոքի չեն սպանում, բայց դրա փոխարեն նրանք հնարավորություն չեն տալիս հակագազերը զեթ մի բռպեյով հանել Այդպես անցում են չորս յերկար ու ձիգ ժամերը։ Յեզ ահա յերկինքն արդեն սկսում և լուսավորվել, թնդանոթները հանկարծակի՛ լուս են։ Հանդիսավոր գուռթյուն և տիրում, Խնչքան ցանկալի յե զիմանկը զեն զցել իրենից, լրիկ կրծքով շնչել առավատյան թարս ողը, Միքանի զինվորներ արդեն սիրու են անում դրանու Յեզ հենց այդ բռպեյին արկերի նոր փոթորիկ և անցնում, կրկին փոշտացնող նյութերով։ Այդ վերջին գնկակոծումը հարվածում և անզգույշներին ու անկարգապահներին։

Խ 63. Գիտությունը նավասարապես նարմար և ոգտագործել և մարդկանց սգնելու, և նրանց խորտակելու նամար։ Ամեն ինչ կախված է նրանից, թե օ՞ւմ ձեռքն և նո ընկերում։

Դրա համար վորպես որինակ կարող են ծառայել գերմանական նշանավոր քամերկու։ Դարերի գյուտերը, վորոնց համար նաև ստացավ միջազգային բարձրագույն նվերը՝ Նորելյան մրցանակը։ Այդ գյուտերը վերաբերում են և գյուղատնտեսությանը և պատերազմին։

Պայթուցիկ նյութեր պատրաստելու համար պետք է ունենալ բավարար քանակությամբ ազոտային միացություններ — «կապակցված ազոտ»։ Գերմանիան մինչև համաշխարհային պատերազմն իր «կապակցված ազոտը» չուներ, նա այն ստանում եր հեռվից, ովկիտոսի վրայով եր բերում։

1914 թվին յերբ անզինական նավատորմը բլոկադայի յենթարկեց Գերմանիան, բոլորը հուսադրվեցին, վոր պատերազմը շուտ կվերջանա։ Գերմանիան ստիպված կլինի ամենամռախիկ ժամանակում անձնատուր լինել. նա վոչ մի տեղից «կապակցված

աղուաշ չի կարող ձեռք բերել Բայց այս հույսը չարդարացավ՝ Անցնում եյին ամիսներն ու տարիները, իսկ Դերմանիան պայմուցիկ նյութերի վոչ մի պակաս չեր զգում, Բոլորն զգում եյին, վոր այստեղ ինչ-վոր դադանիք և թագնված:

Այժմ մենք զիտենք, վորն եր այդ գաղտնիքը, պրոֆեսոր Դարերը զտալ արհեստականորեն ազոտային միացություններ ստանալու միջոցը. Նա սովորեց «կապելը այն ազոտը, վորը միշտ լինում և ողի մեջ Յել իր այս խոշոր դյուռը նա հանձնեց «Ֆարբենինդուստրի» արեստին:

Այսպես, այդ դյուռն ազտագործվեց իմպերիալիստական պատերազմի համար! Բայց չե վոր նրան կարելի յեր ոգտագործել և այլ կերպ. «կապակցված աղոտը պիտանի յե վճչ միայն պայթուցիկ նյութեր պատրաստելու համար, այն գործադրում են նույնպես դաշտերում, վորպես ամենաարժեքավոր պարարտատանյութ:

Հաշված ե, վոր «կապակցված աղոտի» այն քանակությունը, վոր վորպես պայթուցիկ նյութեր ծախսված և վերգենի ճակատամարտում, կրավականացներ, յեթե նու ոգտագործվեր վորպես պարարտանյութ, — ամբողջ Յելբուզայի բերքը կրկնապատկելու:

Եզ օք, Ողային բանակը ժամանակ չպետք է վասնի հակառակորդի զօրքերի նետ պայքարելու համար. նա պետք է հարձակվի ուղղակի հակառակորդի բիկունի վրա:

Այս միտքն առաջին անգամ հայտնել է իտալական ֆաշիստ գեներալ Դումնու նա պնդում եր, վոր ողային նավատորմը մի խնդիր ունի միայն—հակառակորդի քաղաքների ոմքակոծումը. Այս խնդրի վրա պետք է կենարունացնել բոլոր ջանքերը և վոչ մի բանով զբանից ուշազրություն չշեղել. Զարժե, որինակ, հակառակորդի սավառնակների հետ կորիթների մեջ խճճվել. անհամեմատ ավելի ձեռնուու յե խուսափել նրանց հանդիպումներից, ջանալ ողի մեջ նրանց կրղքով աննկատելի անցնել:

Այդ բանում գեներալ Դումնու տռարկում եյին. յեթե հակառակորդի պազմական ուժերը վողջ ու անվտաս մեան, ապա այդ դեղքում, ել լնչպես կարելի յե հակառակորդից հաղթությունը խլել:

Դրան գեներալ Դումն պատասխանում եր ազումային ըների առակով:

— Պատկերացրեք ձեզ, — ասում եր Դումն. — վոր քաղաքային-

պարկում բռն են դրել ազոտվերը և դուք վարչել եք, թէ  
գնով ել լինի, վոչնչացնել այդ ազոտվերին: Ի՞նչպես կվարվեք:  
Հրացանով կկանգնեք ձեր գոների առաջ և կսպասեք մինչև վոր  
ազոտվը ձեր մոտով թոշի: Թը կականք յենթադրաբար ամրող  
քաղաքը չափչփել ընկնելով ոգում յերեացող առաջին ազոտվի  
հետեւից: Պարզ ե, վոր դուք վճէ այս, և վճէ մյուս միջոցով յեր-  
քեք չեք կարող ձեր նպատակին հասնել:

Միակ ճիշտ միջոցն ե՝ շապառվ մանել պարկը, հրացանա-  
պարկ անել բոլոր ազոտվերին, քարուքանդ անել նրանց ըները,  
վոչնչացնել նրանց ձվերը:

Ճիշտ այդ միջոցով ել ավելի հեշտ և վոչնչացնել հակառա-  
կորդի սավառնակները, Ոգում չընկնել նրանց հետեւից, այլ մուտք  
պործել յերկրի խորը, ուռմբերով ավերել նրանց ըները՝ տերող-  
քոմիները. վոչնչացնել այն ձվերը, վորոնցից նրանց գուրս են զա-  
յիս՝ ավիացիոն գործարանները, պայթեցնել վառելիքի պահեստ-  
ները և հենց դրանով զրկել հակառակորդի սավառնակներին  
անհրաժեշտ աննպից:

Ցերք այդ բոլորը հաջողվի մեզ, այն ժամանակ թշնամու-  
ողային նախատրում կդադարի գոյություն ունենալուց, թող  
մինչև անզամ հակառակորդի մոտ մնա սավառնակների վորեն  
քանակություն. միննույն ե, այդ սավառնակները չունենալով  
վոչ աերոզրոմեր, վոչ վառելիքի պաշտը, վոչ նորոգման արհես-  
տանոցներ, բոլորովին անզոր կլինեն:

Այդ բոլորը վերաբերում ե սավառնակներին: Բայց այդպիս  
կը արելի յե դատել և հակառակորդի ամրող բանակի մա-  
սին: ԶԵ վոր ամեն մի բանակի կենսամթերք պետք և մատա-  
գարարել զենց ու արկեր հասցնելու նոկ յեթե թիկունքում յեր-  
կաթուղու գծերը քայլայված լինեն, մատակարաբումը կդադա-  
րի: Յեկ՝ բանակն այլևս անզոր կլինի:

Այդպիս զատելով գեներալ Դուեն գալիս և այս յեզրակա-  
ցության. ապագա պատերազմում պայքարի հիմնական միջոցնե-  
րը լինելու յեն ոչային հարձակումները հակառակորդի քաղաք-  
ների վրա: Այլ խոսքերով ասո՞ յեթե ցանկանում ես շուտա-  
փույթ հաղթության հասնել, ամենից առաջ հարձակվիր վճէ  
թշնամու բանակի վրա, այլ նոր քաղաքների վրա, սպանիր վոչ  
թե մարտիկներին սազմանակատում, այլ անզեն ընտեկչներին  
թիկունքում:

Աշ 68. Վ.Ռ՝ հարժակումները Փարիզին մեծ վճ ոս չպատճառիցին:

Ետո ոռումքեր են պայթել՝ առանց վոչ վոքի թվաս տարու Շատերը վիրավորել են մեկ-յեր կու մարդ Միայն մի ոռումք իսկապէս շատ մարդ սպանեց—նա ընկավ յեկեղեցու մեջ ժամերդության ժամանակ և պայթեց հասարակություն ամենախիստ տեղում:

Աշ 70. Փարիզը լուսմ եր օգային քօնամաւ մօսեցումք ելեբ- որտկան ականջներով — ձայնորոշիչներով:

Ձայնորոշիչը վոչ միայն հեռվից բռնում ե սավառնակի գոռոցը, այլև հնարավորություն և տալիս այդ գոռոցով վորուշելու, թե վորտեղ և գանգում այժմ սավառնակը: Վորպեսզի հասկանանք, թե ինչպես ե կատարվում այդ, նախ պետք ե բացառել, առհասարակ մենք տառյա կյանքում ինչպես ենք իմանում ձայնի ուղղությունը:

Մեղանից ամեն մեկը, մինչև անգամ փակված աչքերով, սովորաբար կարող ե գուշակել, թե ձայնը վորտեղից իրեն հասավ, աջից, թե՛ ձախից, Այդ գուշակումն այնքան հեշտությամբ և արագությամբ ե տեղի ունենում, վոր մենք ինքներս ել չենք նկատում, թե ինկապէս ինչով ենք տաշնորդվում: Սակայն, հոգեբաններն ու բնախոսները բացատրեցին, գործն ինչումն և այստեղի Բանից դուրս և գալիս, յերբ ձայնը հասնում ե ձախից, այն ժամանակ մենք նրան վորսում ենք սկզբում ձախ ականջով, իսկ աջ ականջով մի քիչ տվելի ուշ իսկ յեթե ձայնը հասնում է աջից, այն ժամանակ, ի հարկե, հակառակն ե աեղի ունենում, Ահա հենց այս ժամանակի չնշին տարրերության ժամանակ ել դատում ենք, թե վորտեղից յեկավ ձայնը: Յեկ հենց այդ պատճառով, մի ականջով խլացած մարդը զրկվում է այսպիսի ընդունակությունից:

Գետք ե, համենալն դեպս, ասել, վոր մենք ձայնի ուղղության մասին շատ սխալ ենք դատում: Ժամանակի տարրերությունն արդեն չափազանց չնշին ե: Զե՞ վոր, յերկու ականջների միջի տարտեռությունը շատ ե փորբ—միայն տառնեվեց սանտիմետր: Ուրիշ բան ե, յեթե մի ականջը մյուսից հեռու լիներ վոչ թե սանտիմետրներով, այլ մետրերով—այն ժամանակ մենք ավելի ճշտությամբ կդատելինք:

Հենց այստեղ ել մեր ականջներին ոգնության ե գոլիս ձայնորոշիչը, նրա շականջները—խոսափողերը իրարից յերեք մետր հառ յեն:

Զայնորսիչների վրա աշխատառդ մարտիկը կոչվում է բորդ-Լավ լուրդ լինելու համար պետք եւ շատ նուրբ լսողություն-ունենալ, ըստվորում յերկու ականջով ել պետք եւ հավասարողն լով լսել:

Եջ 70: Փարիզը դիմում եր գիտեալին յերկինքը ելեցրական աշխեռվ՝ լուսարձակներով:

Սովորական լոմպից լույսը ցրվում է բոլոր կողմերը և այդ պատճառով ել մի փոքր արածություն անցնելով, շատ արագությամբ թուլանում է, իսկ լուսարձակում լամպի հետեւից դըրված եւ գոզավոր հայելի—լույսը չի ցրվում, այլ գնում է բարակ ու պայծառ սյունի նման։ Սովորական լամպը կարելի յեւ համեմատել շարպանի հետ, վոր ջուրը միանգամից նետում է բոլոր կողմերը, իսկ լուսարձակը կարելի յեւ համեմատել ջրհան մեքենայի հետ, վոր նեղ և ուժեղ հոսանք եւ տալիս։

Եջ 71: Գերմանական «L-Z-9» ցեպելինք նենց նոր փորձում եր ոմբակօծել կանցնի...

Մեր արամազդրության տակ են այս հարձակման մասնակցներից մեկի գրությունները։ Այս դրանք։

«Արեգակի յերեկոյան ցոլքին վերջին մի արագ հայացքով հրաժեշտ ենք տալիս մեր յերկրին։ Սոտոռները գոռոցով սկսում են իրենց աշխատանքը։ Այսպես ուրեմն, մենք գնում ենք Անդլիա։

Աղջամուղին արագությամբ վրա յեւ հասնում է Շովափը կըտրում-անցնում ենք արդեն գիշերով։ Ժամեր ետևում ճանապարհը նեղուցի միջով։ Մուգ-կանաչ, համարյա սև եւ ծովը մեր տակ։ Չորս կողմը սև, ահավոր գիշեր եւ Միայն յերկնօռում միլիոնավոր տաղեր են փայլում, նրանք անդրադառնում են ներքև, ալիքների մեջ։

Բայց ահա արդեն վոչ աստղերի ցոլքերը, այլ ինչ-վոր կարմիր կետեր սկսեցին վառվել հեռու ներքեռում։ Դրանք հսկիչ նավերն ու գիշերապահ մակույկներն են—յերկնքից մենք նրանց խողովակների միջով տեսնում ենք խորը, նրանց կաթսաների մեջ։ Բացի նրանցից վոչ մի կրակ լիչ յերեռում։ Խուլ խավար ու յություն եւ տիրում շուրջը, ջրային անծայրածիր անապահ վրա մենք մենակ ենք միքանի հաղար մետր բարձրության վրա։ Միաձայն դրանք են մոտոռները, դողդողալով որորվում մակույկներն ու նոպանները։

Մենք ստուգում ենք ուղղությունը, լարվածությամբ նայում

իսպարի մեջ։ Յերբ կերևա վերջապես անզլիական տփը։ Վեռէ մի փարոս չի յերևամ։ Բայց, ահա, ամպերի հետևից մի ակնթարթով գուրս և նայում լուսինը և նրա արծաթափայլ շողքի ժամանակ գծագրվում և Անզլիայի ծովափը։ Դա Բլեքվոտերն և Մինչև Լոնդոն դեռ յերկու ժամից ավելի կա։

Կրկին կանգնում ենք մենք մակույկի պատուհանների մոտ և լուսնի լույսով համեմատում յերկրի ուրվագծումները քարտեզի վեռ։ Ներքենում մեռյալ խաղաղություն եւ Անզլիան արհեստականորեն թաղված եւ լրիվ խավարի մեջ։ Չի լսվում և վոչ մի կրակոց, վոչ մի լուսարձակ չի շողջողում։ Անզլիացիները չեն ցանկանում ժամանակից տռաջ մատնել իրենց ղենիթային մարտկոցների գանգված վայրը։

Հեռվում գայլամակեց մի կրակ, նրանից հետո յերկրորդը, Մեր հաշիվներով մենք այժմ պետք եւ վոր ուղիղ Լոնդոնի վրա լողավայր լինենք։ Վեթխարի քաղաքը հիանալի կերպով մթնեցրած եւ Բայց լուսինը կրկին յերևում եւ մեղ ողնում ջոկել կվարտալներն ու փողոցները։ Այստեղ ամեն ի՞նչ խաղաղ եւ։

Հրամանատարը կանգնում եւ բաշխման տախատակի մօտ, վորտեղից տեղի յեւ ունենում ոռոմքերի նետումը։ Նրա միացրած ելեքտրական լամպիկները բռնկում են։ բազմագույն աղոտ լույսով։ Նա մեկնում եւ ձեռքը դեպի լծակը։ Լոնդոնի վրա ընկնում եւ տռաջին ոռոմքը։

Սովառակի յեղրին կռացած, մենք սպասում ենք։ Վորքան յերկար, ստրօսափելի յերկար եւ ձգվում ժամանակից վերջապես լսվում եւ պայթյունի ձայնը։

Յերկրորդ ոռոմքը հրձիգ եւ ինչ-վոր բռնկվեց ներքենում, ակսեց վասկել, իսկ մենք այս կրակով կորող ենք այժմ հաշվել քածու արագությունը և ուղղությունը յերկրի վրա։ Մեղանից մեկը ոռոմքեր եւ նետում, մյուսը պայթյուններին հետեւմ, իսկ յերրորդը՝ թանոնն ու կարկինը ձեռքին կանգնած եւ նավավարության սեղանի հետեւ։

Բայց մենք չենք կարողանում ավարտել մեր աշխատանքը, Հանկարծ ներքենում ինչ-վոր բռնկում եւ ինչպես անթիվ կարմիր կրտիկներ, թոշում եւ վերև, պատռվում մեր շուրջն այսպիսի արագություն, վոր մինչև անզամ լսվում եւ պրոպելլերների դղրդոցի միջով։ Մինույն ըուպեյին դեպի վեր են ձգվում լուսարձակների ճառագայթները, շոշափում մեղ իրենց սարդային յերկար

Հեռաներով աջից, ձախից, բոլոր կողմերից: Նորից մի բոպե, և  
մենք ընկնում ենք լուսարձակի լուսային կոնուսի կենտրոնը...

Մենք կորցրինք ժամանակի հաշիվը: Մենք մերթ փախ-  
չում ենք լուսարձակների լուսյից՝ խարելով նրանց մեր ուղղու-  
թյան փոփոխումով, մերթ նորից պատահում ենք նրանց, վայ-  
ընաբար սլանում են նրանք մեր կողքով խաչաձեզերով, կանոն  
առնում ու կրկին նետվում դեպի յերկինք... Մենք ինքներս չենք  
հասկանում, ինչպես և մեզ հաջողվում վերջիվերջու բախտավոր  
կերպով փախչել գնդակոծումից:

Լոնդոնն արդեն մեր հետեւմն ե, հեռու Մակույկում մութ  
ե, վոչինչ չի յերեսում, միայն չափագործիքների սլաքներն են  
հաղիկ տոկայծում իրենց ֆոսֆորային զույնով: Խակ մեր աշքե-  
րում դեռ լողում են գույնզգույն շրջանները — լուսարձակների  
շլացուցիչ լույսի հետքերը:

Մենք կրկին ծովի վրա յենք: Հեկավարը տրորում է աշքերը,  
կերցելով նայում, վառում իր գործիքների վրա փոքրիկ լամպիկը:  
Մակույկը լուսավորվում ե, փայլում նրա ալյումինի կերտվածքը:

Բայց հենց այստեղ ել սկսվում է դժոխնքը, թիմզայի գե-  
տաքերանի մոտ ռազմական նավերը նկատեցին մեզ, Մեկը մյու-  
սի հետեւից դեպի մեզ են թռչում արկերը: Պայթող ու հրձիղ  
ռումբերը շահում են մեր շուրջը, բոլորովին մոտիկ: Միայն տաս  
ըրապելից հետո հրաձգությունն սկսում է հանդարտվել:

Կրկին միքանի ժամ գնում ենք խավար, անշշունչ դիշերով:  
Արդեն թռչում ենք շամաքի վրայով, Բրուգգեյի և Գենստի միջև,  
յերբ գնդացրորդը վերենի կառամատույցից հանկարծ զեկուցում և  
հակառակորդի յերկու սավառնակների հայտնվելու մոտին: Գի-  
տենալով տուն տանող մեր ուղին՝ սավառնակները վորոշել ենին  
մեզ այստեղ գնդակոծել:

Ծոճում և գնդացիրը վերենում, մեր պլատֆորմի վրա: Լու-  
սատու գնդակները թռչում են մեր մոտով, անցնում դեպի խորքը:  
Թերաթորիչք:

Հրամանատարը հըաման և տալիս — «Բարձրության զնիք-  
բարձրությունն այժմ մեր միակ փրկությունն եւ: Սավառնակ-  
ները մեզանից ավելի արագ են թռչում, բայց նրանց վերելքի  
արագությունն ավելի պակաս և մերից:

Նրանք հետ են մնում, բայց շարունակում են հարծանքը:  
Հանկարծ մեր գնդացիրները կրկին կրակ են բացում — սա-  
վառնակները հասան մեզ: Վոչ մի զեղքում չպետք և թռւյլ տալ

Նրանց զերիթոքլից ավելի վերև բարձրանալ Մենք կորու պղինենք, յեթև այժմ նրանցից ներքեւ մտանք:

Մենք ավելի վերև ենք բարձրանում, Բալոններից գոյզը մշտադաւթյամբ դուռս են փչում, Կւերիքն զիրիթարիլի ուժերը զեռ ելի բարձրանալ, Տաճում են զնդացիքները Սլանում են հրձիք ռակեաները: Հանկարծ ինքնաթիւններից մեկը շուր և դալիս ու ներքեւ առղում, Նըս մոտուը զնդակով ծակվել եւ Մյուսը, հավանորեն ծախսել եւ իր բոլոր փամփուշաները, նա մի կողմ և քաշվում ու անհետանում:

Բախու եր, վոր այս անգամ ազտավեցինք մենք».

ԱՉ ԵՅ: Միային ապահաները քանձ մառախօսւով փարա քում են գրահապա զնացքը, տանկը կամ մարտիկների զօկասը:

Զգեաք եւ կարծել, թե այս ապարատներն անպատճառ ու ձուխ են արձակում. պատերազմում ավելի հաճախ ուսովում են ուղիւակ ծխոտ, վորը մառախուզի վարագույրի նման քղարկում և զորքերին:

ԱՉ ԵՅ: Ապազա պատերազմում ամեն ինչ կփոխի իր զայնն ու տեսքը:

Դողարկվելու ամենահասարակ և ամենասովորական միջոցներից մեկն եւ առարկաների բծավոր նախշելը (կամուֆլաժ): Այսպիս նախշված դրահակիքները կամ տանկը հեռվից դժվարությամբ կարելի յեւ ճանաչել - չնորդիվ բծավոր նախշի նըս անսովոր, տարորինակ գծագրություն են ստանում:

Դորշ-կանաչավուն «պաշտպանական» զույնի հապուստը, վոր մոցըել են բոլոր յերկրների զինվորների մեջ, նույնպես քողարկման նպատակներին և ծառայում. մարտիկն այդպիսի հագուստով խոտերի ու թփերի մեջ քիչ և նկատվում:

ԱՉ ԵՅ: Զենիքաջին մարտիկներն սկսում են կրակել դեպի ալացօղ սափառնակը:

Զենիքային մարտկոցները սովորաբար հաղորդալարերով կապված են լինում լուսարձակների, ձայնորսիչների, հեռագիտակների և հատուկ ապարատների հետ, վորոնք ծառայում են տարածությունը վրոշելու համար: Բոլոր այս գործիքները, ելեքտրական հոսանքներ ուղարկելով, իրենց ցուցմունքները հազորգում են հաշվեմեքենաներին: Այս մեքենաները, իրենք, տունց մարդու միջամտության, վայրկենապիս կտարում են անհրաժեշտ հաշվարկութմները, և իրենց հերթին ստիպում են առանձին մոտուների թնդանոթներէ փողերին պահանջվող թեքու-

թյունը և ուղղությունը տալ: Այսպիսով թնդանոթները կարծեանք իրենց իրենց նշանի յեն առնում սավառնակին, մարտիկը պետք է միայն փոքրիկ ուղղութեան մտցնի: Այդ բոլորի շնորհիկ ստացվում և հրաձգություն մեծ արագություն և ճշտություն:

Եջ 20: Նա գրանում և նակառակարդի վրա «մեռյալ տնկյունից»:

Թե սավառնակի և թե տանկի թնդանոթները չեն կտրող ուղիղ ներքեւ կրակել. կողերը խանգարում են: Այդ պատճռում ել ստացվում և մի փոքր տարածություն, վոր թնդանոթը չի կարող գնդակոծել, իսպանիայի քաղաքացիական պատերազմիժամանակ կառավարական գորքերի դինվարներն ոգտագործում եյին այդ հանդամանքը՝ հակառակորդի տանկերի վրա հարձակվելիս թագ կացած, նրանք սպասում եյին տանկի մոտենալուն, այնուհետև հանկարծակի դուրս եյին ցատկում իրենց թագուսուցից, վորքան հնարավոր և ազելի մոտ վագում տանկին և նրա թրթուրների տակ նետում ձեռնանոնակների կապեր: Այս ձևով նրանք միքանի ֆաշիստական տանկեր դուրս են բերել շարքից՝ հարկե, պայքարի այս մեջ տանկերի դեմ տահանջում և հըսկայական հարպեկություն և բացարձակ անվեհություն:

Տանկերի դեմ պայքարի այսպիսի միջոց մեզ մտացին անգամ զործադրվեց 1920 թվին, մեր քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Եջ 21: Մեր ոդաշուները նամաշխարհային ռեկորդներ են տանում:

Հենց միայն 1936 թվին խորհրդային ռդայուները համաշխարհային տասնեւորս ռեկորդներ են սահմանել: 1937 թվականին համար հարկ և հիշատակել յերեք չտեսնված, սքանչելի ռեկորդ՝ այդ մեր ռդաշուների թռիչքն: և հյուսիսային բնվեռ, Խորհրդային Միության հերոսներ Զկալովի, Բայրուկովի, Բելյակովի ու Գրոմովի, Յումաշեևի, Դանիլինի թռիչքն և բնվեռի վրայով Մոսկվա—Ամերիկա մարզրուտով:

Եջ 22: Աղային հարձակումներն այժմ անհամեմատ ավելի վտանգավոր ելինեն, քան առաջներում եյին:

Այդ յենթագրություններն ամբողջովին հաստատեց քաղաքացիական կռավի փորձն իսպանիայում: Ֆաշիստական ստվառնակների ռումբներից ավերվել և ամբողջ Մազրիդի համարյա մի չորրորդ մասը:

Բայց հենց այդ պատերազմի փորձն ել ցույց տվեց կործա-

Նիշների հակայական նշանակությունը հակառակային պաշտպանության գործում Հենց վոր իսպանական կառավարությունը մեծ քանակությամբ կործանիչներ ձեռք բերեց, ողալին ոմբանությունների վասար միանգամբ նվազեց. կործանիչները թշում ենին ընդդեմ ֆաշիստական սովորությունների, նրանց հետ կոմի բռնվում և թույլ չեյին առաջի քաղաքին մոտենալ:

Աշ 89: Խրամի կարգանում են նախագագում օնիշ:

Ին այդ տեսակետից ինչ արդյունքի կարելի յէ հասնել կունուպոր մարդկարարվ, ցույց եւ տալիս լենինգրադի մի բանվորի, Պաջրավիճակիմի անդամի որինակը. Նա սովորեց վոչ միայն աշխատել հակագաղում, այլև դրանիւն մարդանքով պարտպել, մինչև անդամ քննել հակագաղումը Ռութ որ անցկացրեց նա հակագաղում, հանելով այն միայն ուտելու ժամանակ.

Աշ 90: Այդ գիտե՞ն նա, ով ուսումնաբարել և հակաբիմիական պատասխանության կանոնները:

Համենայն գեղս այսուղ պատասխանում են բնագրում արված հարցերին Յեթի ձեր կաշվի վրա ընկնում և իսրբիտ քաթիւ, գուշ պետք և անհապաղ և զգուշությամբ որբեց նազթի կամ ընկնինի մեջ թաթախած բարեկով: Բայց հիշեցնեք. վոչ մի դեպքում չի կարելի իսրբիտ կաշվի վրա դես-դեն քուսել, արութել Միքանի փոշտացնող նյութերով թռւնավորվելիս ոգնում և շնչին համակենարունացման քլորի զոլորշիների ներշնչումը, նույն միջոցը, վոր զործազրվում և գրիպի ժամանակը թե լինչուս պետք և արհեստական շնչառության կատարել, չեմ պատճի, զա պետք և ուսումնաբարել վոչ թե խոսքերով, այլ զործնում կանում:

Աշ 91: Ողային նավառը:

Սավանակներն առաջին անգամ հետախուզության համար պատագործվեցին 1912 թվին, իսալո-թուրքական պատերազմի ժամանակ: Հետեւյալ՝ 1913 թվին անզիլիական մանյովրներին մի հետաքրքիր փորձ կատարվեց. ողալիունները յերկնքից նարինցներ ենին նետում յերկրի վրա, աշխատելով նողատակին դիղցներ, իսկ 1914 թվին սկսվեց համաշխարհային պատերազմը, և բոլոր յերկընների ոգաչուներն այժմ արդին նետում ենին վոչ թե նարինցներ, այլ իսկական ռումբեր:

Աշ 92: Մարտկոցը նօան և բանում շաբաթառադին:

Ցեմե մի կրտսեցը անդրախոիչը և ավել իսկ հետեւյալը թերաթուիչը, այն ժամանակ սովորաբար զմզար չի լինում ուղղեն

վորոշել, ինչպիսի Նշանառության ժամանակ արկը կարող է նպատակին դիպչել. հենց այդ ել կոչվում ե նշան բռնել «պատռաքաղին»:

Ազ 100. Առվառնամաները ոլոնում են յերկինք և բարձօնքում կատարում են վիրածներ, գալարագծեր, օօպարներ, ուրնոցներ, բնի փայլ որումներ, մերյալ ողակներ, գորիի:

Այս բոլորը բարձրագույն պիլոտաժի ֆիզուրաներ են, այսպիս ասած՝ «ողային լարախաղացություն», Ողաչուներն ուսումնասիրում են այդ ֆիզուրաները վոչ միայն մարզանքային հետաքրքրությունից—նրանք շատ կարևոր են ողային մարտի ժամանակ. Նրանք սղաջուներին սովորեցնում են խռովագին հոկառակորդի կրակոցներից, բարձրագույն պիլոտաժի մաս քաշվել և այսուհետեւ կրկին նետվել գրոհի, Բարձրագույն պիլոտաժի արվեստը զարգացել և հենց համաշխարհային պատերազմի ժամանակը:

Պատերազմի ժամանակ ողային մարտի ստուել հանդգնող ների մեջ առաջիններից մեկն եր ուռու ողաջու նեստերովը Նազմակնեց խենթության չափ համարձակ մի փորձ կատարել. իբ սավառնակավ խոյահարել թշնամու սավառնակը. Նրան, իսկապիս հաջողվեց այդ միջոցով հակառակորդի սավառնակը ցած զցել բայց ինքն ել այդ միջոցին խորտակվեց.

Ազ 102. Ողաչուն պետք ե սպառի սղային հետօղություն—տեսահոգաւրյուն:

Այստեղ աչքերին ոգնության ե գալիք Փոտոպապարատը. Նայնպիսի մանրամասնություններ ե զանազանում, վոր հայացքով վոչ մի կերպ չի կարելի վորսալ. Այսպես, որինակ, հինգ կիլոմետր բարձրությունից վոչ վոր չի կարող յերկրի վրա մարգուն նկատել, անգամ յեթե նա ունենա ամննասուր տեսողություն. Բայց հինգ կիլոմետր բարձրությունից հանգած պատկերի վրա կարելի յի ջոկել վոչ միայն մարդկային փոքրիկ կերպարանքները, այլ մինչև անգամ, յեթե դիտենք խոշորացույցով,—մարդկային վոստի հետքերը շաղու խոտի վրա:

Սակայն Փոտոպապարատն ունի յերկու կարևոր պակասություն—նա չի զանազանում գույները, և տափարակ պատկերում է տալիս. Նայելով լուսանկարին՝ հաճախ անհնար ե լինում վորչել, բնչն ե ավելի մատիկ գտնվում, բնչն ավելի հետու

Ֆոտոգրատարարներին հաջողվել ե այս յերկու թերություններն ել վերացնելը

Բնչմանք առբընում ենք, վոր մի ծոռը մեզանից ավելի

Հեռու յե, իսկ մյուսն ավելի մոտիկ,—մտածում եյին ֆոտոգրուտարարները—վորովհետեւ մնաք յերկու աչք ունենք և յերկուսով ել միաժամանակ ենք նայում: Մի աչքը ծառն: իր տեղից ուրիշ կերպ ե տեսնում, իսկ մյուս՝ մի փոքր ուրիշ: Հենց այդ չնշյն տարրերությամբ ել մնաք դատում ենք տարածության մասին, ինչներս չնկատելով այդ իսկ ֆոտոալարատը, չե՛ վոր փոխարինում ե մեր մի աչքին, և վոչ յերկուսին ել:

Ֆոտոգրաւտարարները միջոց զտան խուսափելու այդ դժվարությունից—նրանք վորոշեցին սավառնակից յերկու նկար հանել իրար հետեւից: Միևնույն ե, սավառնակը թռչում ե, նրա հետ թռչում ե և ֆոտոալարատը,—այնպես վոր իրարից հազիվ տարրերվող նկարներ են ստացվում: Այժմ յերկու նկարին ել պետք ե նայել այնպես, վոր մնակը տեսնենք միայն աջ աչքով, իսկ մյուսը՝ միայն ձախով: Այդ բանի համար կա մի հասարակ գործեր—ստերեոսկոպ. անմիջապես պատկերի վրա ամեն ինչ կենդանանում է—բարձրանում են սարերը, խորանում փոսերը, ամեն բան իր տեղն ե լինում:

Մնաւմ եր մյուս ինսպիրը. հաջողեցնել, ֆոտոալարատն սկսի զանազանել գույյները: Ֆոտոգրաւտարարներն այդ ել արին. Նրանք հնարեցին պանխրոմատիկ ֆոտոալակիներ: Այդպիսի ալպակին զանազանում ե վոչ միայն գույյները, այլև գույյների յերանգները յերկրի վրա: Յեթե, որինակ, թնդանոթը ներկված ե կանաչ գույյնով, խոտի գույյնի նման, դա սկանխրոմատիկ ալպակուն չի կարող խաբել: Խոտը նրա վրա պարզ դուրս կը, իսկ կանաչ գույյնը թիթեղիկի վրա պղտոր հետքեր կթողնի, վորոնցով անմիջապես կարելի կլինի բաց անել քողարկումը:

Այսպիս ֆոտոալարատը հասավ աշքին: Բայց ֆոտոգրաւտարարները զրա վրա կանգ չառան: Նրանք վորոշեցին աչքից ել անցնել: Նրանք պատրաստեցին այնպիսի ալպարատ, վոր մթության մեջ նկարում ե:

Դա կարող ե անկարելի թվալ: Չե՛ վոր, յեթե լույս չկա, ապա և ֆոտո թիթեղիկի վրա վոչինչ տապկել չի կարող: Դա ճիշտ ե: Բայց գործն ամբողջովին նրանումն ե, վոր տարրեր մթություն ե լինում: կա իսկական մթություն, յերբ վոչ մի լույս չկա: Կա նաև վոչ իսկական մթություն, ելի այդպես սկ, սակայն վորաեղ, իրոք, ներթափանցած լույս կա: Դա ույլտրա-մանուշակագույն կամ ինֆրակարմիք մթությունն ե: Մեղ համար միենառյան ե, իսկական և մթությունը, թե՛ վոչ: այն հառագայթ-

Ները, վորոնք մանուշակագույններից հետո յեն և նրանք, վորոնք կտրմիրներից հետո յեն, վոչ մի կերպ չեն ազգում մեր աշքի վրա. Բայց, մազունները, որինակ, ավելի շատ են տեսնում, քան մնաց — նրանք ելի այնպիսի գույներ են դանաղանում այստեղ, վորոնք մեզ համար բոլորը միաձուլվում են մթության մեջ:

1933 թվին առաջին անգամ հնարվեցին այնպիսի թիթեղիկներ, վորոնց վրա ինֆրա-կարմիր ճառագայթներն ազդում են. Առաջին անգամ մթության մեջ կատարվեց կինոնկարահանում խավարի մեջ այն ժամանակ, յերբ վոչ մի մարդ վոչինչ չի տեսնում...

Այժմ յերեակայեցեք՝ հակառակորդը վորոշել և առավայրան հանկարծակի զրոնի ձեռնարկեր, Գիշերով, մթության քողի տոկ, նըտ զորքերը կատարում են վերջին անդաշարժերը, Հազարավոր մարդիկ շարժվում են անտղմուկ, ինչպես ստվերներ. Հրամանները արվում են շանչոցով: Վոչ վոք լուցկի ել չի չխացնում: Չե վոր ամբողջ հաջողությունը կախված և անակնկարությունից: Ամբողջ հույսը մթության վրա յե:

Նրանք չեն ել կասկածում, վոր մթության քողն իրենց վրայից քաշված եւ զոր լուսարձակը դորքերը վողողում և անտեսանելի ինֆրա-կարմիր ճառագայթներով: Ինչ վոր մեկը վերևից նկարահանում և նրանց թեզ թիթեղիկի վրա տեսն ինչ պարզորեն տպվում ե, ինչպես ցերեկով:

Այս ինպիրը, լուսանկարահանումը մթության մեջ, գնաված և ԽՍՀ Միության գիտա-հետազոտական կինոլուսանկարչութեան ինստիտուտի կողմից:

Եջ 103. Ցերեկից փարձե՞լ եք դուք արդյամ վերծանել ծածկագրված համար:

Ծածկագրված նամակներով սովորաբար իրար հետ հաղորդակցություն են ունենում հակառակորդի թիկունքը մուռք դորժան լրտեսները և դիվերսանտները: Նրանց հետեւելու և բանելու համար պետք է կարողանալ նրանց զաղանի գրագրությանների ծածկագրերը կարդալ:

Համաշխարհային պատերազմի ժամանակներում լովագույն ծածկագրապետը համարվում եր անգլիացի Անգլիան զինվորական հրամանատարությունը շատ եր գնահատում նրա աշխատանքը, և հաշվում եր, վոր նո Անգլիային ավելի ողուտ ե տալիս, քան չորս դիվիզիա ռազմահակառակում — քառասուն հազար մարդ:

Համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական լրրատեսությունը դեկավարում երին Խոպանիայում ապրող գնդապետ Ֆան-Կրոնը, գեներալ Լյուդվինդորֆի ազգականը, և Ամերիկայում ապրող Թոն-Պատեհնը Նբանց ցուցմունքներով գերմանական լրրատեսությունը և դիվերսանաները հակառակորդի ռազմական գաղտնիքներն եյին իմանում, պայմանագրությունները, հրկիվութեանը և թունավորութեանը կողմակերպում։

Մենք պետք եւ հիշենք, վոր կապիտալիստական և առաջին հերթին ֆաշիստական յերկրներն աշխատում են մեր յերկրին ուղարկել վորքան հաւաքոր և ավելի շատ լրտեսնել- և դիվերսանաները։ Մենք պետք եւ միշտ արթուն լինենք, պետք եւ կարողանանք ճանաչել լրտեսներին, դիվերսանաներին, զնաւարտներին, ոտարերկրյա հետախուզությունների գործակալներին—արոցկիստներին, բուլարինականներին և մեր հայրենիքի այլ զավաճաններին, և վոչընչացնել նրանց։

#### Ս Յ 107. Տանկերը ննարվեցին 1915 թվին։

Դա այնքան ել ճիշտ չեւ Ավելի ճիշտ կլիներ տանկը չորրորդ անգամ հնարվել և 1915 թվին։

Տանկի առաջին նախագիծը գտնվում է անզիտական զինվորական մինիստրության թանգարանում։ Նրա վրա արված և այն գեներալի համառոտ յեղակացությունը, վորին ուղարկված եր այդ նախագիծը նրա կարծիքն իմանալու համար—Շնէ կարծիքով դա խեղադարի ցնորք եւ։ Նախագիծը վերաբերում է 1912 թվին։ Համարյա այդ միևնույն ժամանակ մի ավտորիտական սպանության տանկի նախագիծ է կազմում։ Նրա նախագիծն ել խռուտանվեց, և նրա մասին շուտով մոռացան։ Վերջապես, արդին համաշխարհային պատերազմի ժամանակ, նախորդ աշխատանքների մասին վոչինչ չիմանալով, նազիլական և ֆրանսիական ճարտարապետները միաժամանակ հնարեցին տանկը, Այսպիսով, չորս տարվա ընթացքում չորս անգամ հնարվեց տանկը։

Այդ արդին այնքան ել զարմանալի չեւ ԶԵ վոր տանկը զրահակիր ավտոմոբիլի (զրահն ու հրանոթները) և թրթուրավոր տրակտորների (մասսան ու թրթուրը) համակցությունն եւ Սակայն և զրահակիր ավտոմոբիլը, և՝ թրթուրավոր տրակտորը համաշխարհային պատերազմից քիչ առաջ հնարվեցին։ Գազափառը տանկին մասին, կարելի յեւ տանկ, վոր հասունացել եր, և Խումեյին միայն հարմար պարագաներ, վորողեսդի այն իրազործվեր։

**Եջ 109. Դենքերալ Լյուդենդորֆ:**

1916 թվի սեպտեմբերից ընդհուպ մինչև համաշխարհային պատերազմի վերջը գեներալ Լյուդենդորֆը փաստորն զերմանական գերազույն հրամանատարն եր Այդ նա յեր 1917 թվին պնդում, վոր Գերմանիան ստորջրյա անխնա պատերազմ հայուարքի: 1918 թվին, Բրեստի խաղաղության կազմումից հետո, նրա ցուցմունքով գերմանական գործերը պարագեցին Ռւկրասինա, Այդ նա, Լյուդենդորֆն եր Կրուպպի ու Դյունաստերդի հետ միասին պատերազմի ժամանակ նշանակում ու փոփոխում գերմանական մինիստրներին:

Գերմանիայի պարտությունից հետո գեներալ Լյուդենդորֆը փախավ արտօսահման վետապայում նա վերադարձավ Գերմանիա և 1923 թվին Հայլերի հետ միասին փորձեց Փաշիստական հեղաշրջում առաջացնել Նորերս Փաշիստական Գերմանիան Հանդիսավորապես տոնեց գեներալ Լյուդենդորֆի ծննդյան յութանաւամյակը:

**Եջ 110. Գծանակն ունի իր ելեքտրոկայանը, իր ռադիոկայանը, իր օրմանը, իր նեռախոսացանցը, աստղադիտարանը, զեռուցումը, պահեստները:**

Այդ ամբողջովին չե ճիշտ Ավելի ճիշտ կլիներ ասել՝ գծային նավը գոչ թե մի, այլ չորս ելեքտրոկայան ունի, չորս ռադիոկայան, չորս իբրարից անկախ ջրմուղային սիստեմ, չորս հեռախոսային ցանց և այլն: Կարճ տասած—գծային նախն ունի կենուունակության քառապատկված պահեստի ուժեր—յերբ մարտում հակառակորդի արկերն ավերեն մինչև անգամ յերեք ելեքտրոկայանները, մինչույն ե, մեկը դեռ կմա, և նա կարող է շարունակել ճակատամարտը:

**Եջ 110. Ստորշրջա արկեր կոչվում են սուպերֆիներ:**

Տորպեդը շատ բարդ կազմություն ունի. նա ունի և՛ թիավարող պոտուտակներ, և՛ ղեկեր, և՛ տառնձին ապարատներ, վորոնք ստիպում են նրան միշտ ուղիղ ու միշտ մինչույն խորությամբ լողալի Նրան պետք է միայն հրել—ջուրը զցել իսկ հետարգին իր մեջ պարունակված սղմած ողի ուժով ինքն տասչ կերթա: Ամեն տորպեդը մոտ մի տանն ծանրություն ունի, իսկ արժե սիրանի տառնյակ հազար ոռութիւն:

Սակայն, պետք է ճիշել, վար այժմ ճապոնիայում փորձում են պատրաստել ավելի պարզ կազմվածքի, եժան տորպեդներ, առանց շարժընթացի ավտոմատիկ կառավարումի—այսպիսի առողեղի շարժումը պետք է կառավարի նրա մաջ նստող մարդու:

Զարծե խռուել այն մասին, վոր նրա մեջ նստած ժարդն ստույգ մահվան և զատապարտված—յեթե տորպեդը վրիպի, նա կիենդր մի, իսկ յեթե դիպչի հակառակորդի նավին, տորպեդում նստած մարդը նրա հետ միասին կողայթի:

Եզ 122. «Արագուրիյումը—26 նամզայց, ուղղաւրյումը՝ արևելք-նարավ-արևելք. նշանաւորյում—80 կարելավային: Նեանացայց—տաս ձախ:

Սովային հանգույցը—դա նավի մի ժամում անցած մղոն-ների քանակն է: Մովային մղոնը 1852 մետր է: Կաբելառով—ծովալին մղոնի մի տասերորդ մասն է: Ցելիկ—նշանառության դործիքի այն մասն է, վոր ծառայում և նշանառությունը ճշշտելու համար:

Եզ 123. Մավակալ Շեներն իր նրամաններն աւդարկում եր-ռադիօլի միջոցավ, անզիխցինները բանում ելին այդ նրամանները և վերծանում:

Պատերազմի սկզբում գերմանական նավերից մեկը ռուսական ծովափից վոչ հեռու ընդհարվեց ականի և ընկղմվեց: Ռուսական իշան ծովի հատակը, խուզարկեցին խորտակված նավը և նավասենյակներից մեկում զատն պողպատյա արկդում թագցրած մի գիրք՝ գերմանական ծածկագրության բանալին: Ռուսական կառավարությունն այն հանձնեց անգլիական ծովակալությանը: Ոգտվելով այդ գրքից՝ անգլիացիները կարդում եյին ծովակալ Շեների ծածկագրված ռադիոնքամանները:

Եզ 124. Սակայն Զելիկոյին այդ մանիսվեն ել շնաջողվեց:

Ցուալանդական ճակատամարտից հետո Զելիկոն հանվեց նավատօրմի դիլավոր հրամանատրության պաշտոնից. այդ կատարվեց այնպես, վոր նրա համար վոչ մի վիրավորական բնույթ չկրեր—այժմ նրան նշանակեցին ծովային մինիստր: Պատերազմը վերջանալուց հետո նրան գրաֆության աստիճանի բարձրացրին և 500,000 ֆունտ ստերլինգի սահմանում (մոտ 5,000,000 ռ.) դրամական նվեր տվին:

Եզ 125. Եերեմն նավակը ջրից դուրս եր գոլիս և իր ապա-կյա աշխավ՝ պերիսկոպով՝ դիմում եր ծավը:

Զրատույզ նավակի պերիսկոպը հաստ, յերկար, տաս մետր յերկարություն ունեցող մի խողովակ է: Յեթե այդ խողովակը դատարկ լիներ, այն ժամանակ նրա միջով վերեռում կարելի յերականել յերկնքի միայն մի փոքրիկ կտոր: Բայց խողովակում դանվում է ապակիների—հատվածակողմերի և աեսապակիների մի-

ամբողջ սխառեմ։ Այս ապակիները վրոսում են շրջապատող ծովի գլուխերը և, այն տարրերը անկյունների տակ իրար ուղարկելով, վերջինվերջո ուղղում են զեղի դիտողի աշքը։ Այսպիսով լույսի ճառագայթն ընկնում է պերիսկոպի մեջ վոչ թե սովորականի նման ուղիղ, այլ միքանի անդամ փոփոխելով իր ուղղությունը, հասնում է աչքին կարծեն վաստակունով։

Եզ 131։ 1917 թվի ապրիլին սուլանավերը դրասալզ արին յետեր նարյաւ նավ։

Համաշխարհային պատերազմի ընթացքում գերմանական սուլանավերը ջրառույզ են արել ընդունելը վեց հազար նավ։ Ամենից շատ վայրագություն եր անուժ «U-35» սուլանավը—միայն նա վոչնչացրել ե 187 ռանտրա-մարդատար և ութ ռազմական նավեր։

Եզ 132։ Ռազմիամեռագրիչը կեղծ ազդանետն է սկզբացնում օգոստյան մասին—«SOS»։

Այս ազդանշանն առաջանում է «Save our souls» նախագահառության սկզբնատառերից—«Փրկեցեք մեր հոգիները», կամ, ավելի պարզ—«Փրկեցեք մեզ», «SOS» արգում է կարիքի միայն ամենածայրանեղ դեպքում, յերբ նաման ընկդմվում է։ Այսպիսի ազդանշան ընդունելով, մռակայցնում գտնվող ամեն նավ հանուպարկից հետ ե դառնում և ոգնության շտապում խորտակվողներին։

Այս ազդանշանն ի չարը գործադրողներից անզիւցիներն առաջինը չեն յեղել Նրանցից առաջ «SOS» կեղծ ազդանշաններ են սկսել տալ գերմանացիները Գերմանական «Մելք» ռազմանախն այդ միջոցով վոչնչացրել ե անզիւական միքանի նովեր։ Դա «SOS» ազդանշանը տալիս եր, իսկ այնուհետեւ, յերբ նավերը մոռենում ելին վորդեսպի նրան ոգնեն, նա սուլում եր նրանց։

Եզ 133։ Անգլիական և ամերիկական նավահիմարտները դեռ չերբեք արդան նավեր չելին պատրաստել։

1917 թվին, Սիսոցյալ Նահանգների համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց առաջ, նրանց նավաշինարաններում աշխատում ելինքսանևինգհազար մարդ, իսկ մի տարրուց հետո—արգեն յերեք հարյուր հազար բանվոր, քառան անդամ ամելի։

Եզ 134։ Ռուսաստանում չկային այթպիսի մարդիկ, վարօնք կատարանային պերիսկոպ, նեռադիմակ կամ միթև անգամ յերկինագիտակ պատրաստել։

Այս բոլոր գործերները պատրաստվում են վոչ հասարակ,

այլ առանձին ոպտիկական ապակուց։ Այս ապակին յեփելու դադարնիքը հայտնաբերել և ոպտիկ Գիւան հարյուր հիսուն տարի առաջ, և այդ որվանից նա ժամանգաբար փոխանցվել եւ Համաշխարհային պատերազմից առաջ արդ գաղտնիքը գիտելին ընդունվել յերեք մարդ—Շոտարը (Ծեյս Փիրմայի անդամ) Գերմանիայում, Զեննը՝ Անգլիայում և Մանսոնան՝ Ֆրանսիայում։ Այս յերեք Փիրմաններն իրար մեջ բաժանել եյին ամբողջ աշխարհը Ռուսաստանը բոլոր ոպտիկական գործիքները գնում եր Շոտարից։ Յերբ պատերազմն սկսվեց, Ռուսաստանը, ինչարկե, այլևս Շոտարից չկարողացավ ոպտիկական գործիքներ գնել, իսկ Մանսոնայի և Զեննի գործարանները չափազանց փոքր եյին, վորպեսզի կարողանային բավարարել ոռւսական բանակի ոպտիկական գործիքների կարիքը։

Ցեզ ահա, 1916 թվին, ոռւսաց կառավարությունը հատում պատգամավորություն ուղարկեց Փարիզ՝ Մանսոնայից գնելու նրա գաղտնիքը, վորովհետև հենց Վերդենյան ճակատամարտի որերն եյին և այն ժամանակ Ֆրանսիան առանձնապես կարիք եր զգում ոռւսական բանակի ոգնությանը, ուստի Ֆրանսիայի նախագահը խոստացավ ոռւսաց կառավարությանը՝ ազդել Մանսոնայի վրա։

Մակայն Մանսոնան շատ կամակոր գուրս յեկավ, նա չհամաձայնեց մինչև անգամ մի միլիոն ֆրանկով ել հայտնել իր դադարնիքը։ Նա շատ կարուկ հայտարարեց, վոր այդ խոսակցությունները նրան միայն ջղայնացնում են, իսկ ապակու յեփումը նրանից պահանջում է լիակատար հանգստություն։ Նա նախազգուշացրեց, վոր յեթե նրանք մի անգամ ընդմիշտ հանգիստ թողնեն իրեն, նա կդադարեցնի ոպտիկական ապակի յեփելը՝ անզում Ֆրանսիայի համար։

Այդպես, վոչ մի արդյունքի չհասնելով, ոռւսական պատգամավորությունը վերադարձավ Ֆրանսիայից։

Իսկ այժմ մեղ մոտ՝ նորհրդային Միության մեջ կան սեփական գործարաններ, վորոնք ոպտիկական ապակի յեն յեփում, և բոլոր ոպտիկական գործիքները մնանք ինքներս ենք պատրաստում։

Եջ 147: Ռուսական բանակը ուստ անգամ ե նարձակման մեջ, ուստ անգամ ե խօսոր նարդուրյաններ տարել։ Բայց չափազանց քանզ են նաև երան այդ նարդուրյանները։

1916 թվի մայիսին ֆրանսիական նախագահը և խոալական

թագավորն ռուսաց թագավոր Նիկոլայ Ա-ին միաժամանակ հեռաղբեր ուղարկեցին ոզնության պահանջով. գերմանական բանակը հենց այդ ժամանակ գրուում եր վերդենի վրա, իսկ ավատարիականը՝ Վենետիկին եր սպառնում. Նիկոլայ Ա հրաման տվեց ռուսական զորքերին շուտափույթ հարձակում սկսել:

Հարձակումն ավստրիական ռազմաճակատի վրա սկսվեց հունիսի 4-ին, գեներալ Բրուսիլովի հրամանատարությամբ. Նա շնչարծ հետևանքներ ավեց—համարյա հենց առաջին որերին հարցուր հազար զերիներ վերցվեցին. ավստրիական զորքերի զգայի մասը սարսափով փախուստի դիմեց. Պատերազմի ընթացքում արդպիսի մեծ հաղթություն դեռ վոչ մի բանակ չեր արքել:

Ավստրիան ստիպված յեղավ տնօմիջապես դադարեցնել հարձակումն իտալական ճակատի վրա. Վենետիկը վրկվեց. Այդ ժիշտ, եղբրդենյան մարտերի ամենայնուն շրջանում գերմանական հրամանատարությունը տասնունեկ դիվիզիա հանեց Փրանսիական ճակատից և ուղարկեց Ավստրիային ոզնելու Դրա շնորհիվ ֆրանսիացիներին հաջողվեց պաշտպանել վերդենը:

Սակայն ռուսական զորքերի այս հաղթությունները հազարան չեղան. սաստիկ շտապողական ձևով եր ձեռնարկված ռուսական հարձակումը. Բրուսիլովը ժամանակին չստացավ տնօրաժեշտ ոզնական ուժեր, և հարձակումը դադարեցվեց.

Այս հարձակման ընթացքում ռուսական բանակը կորցրեց մոտ մեկ միլիոն զինվոր:

**Աջ 15:** Յենվայելվը գիտեր, վոր իր փարձով կօգսվեն մեր ուղարձութերը, վարժությունը ամփակած կլինեն ապագա պատերազմում քոիցներ կատարել մեծ կամ փոր բարձրություններից:

Պարաշյուտիստ լինել՝ նշանակում ե ամենից առաջ կարգապետության վարժված մարդ լինել. Պարաշյուտիզմի տեխնիկան արդեն այնպես ե, զոր վոչ մի անճշտություն չի թույլ տալիս, չի հանդուրժում վճչ շտապողականություն, վճչ ել հապաղում. Չե վոր, յեթե պարաշյուտիստը շտապի և ժամանակին չսպասելով, ողակը ձգի հենց սավառնակից բաժանվելու մոտենալին, այն ժամանակ պարաշյուտը կդիպչի սավառնակին, և դա կարող է պարագյուտիստի համար վատ վախճան ունենալ նակ յեթե, ընդհակառակը, շփոթվի և ողակը ձգի շատ ուղացած, յերկրին շատ մոռեցած, այն ժամանակ պարաշյուտն արդեն չի կարող բացվել և պարաշյուտիստը մահացու կերպով ջարդ ու փշուր կլինի...

Գետք և պարաշյուտը բացել վոչ շատ շուտ, վոչ ել շատ ուշ:

Այս ժամկետներից առաջինը, սկզբինը, արդեն վաղուց շատ հշառությամբ հաշված եւ ինչ վերաբերում է մյուս ժամկետին, ապա նա յերկար ժամանակ անորոշ եր մնում, Կոչ վոք ճշությամբ չեր կարողանում ասել, թե յերբ և պարագյուտի բացման վայրկյանը, յերկրից վորքան մոտիկ դեռ կարելի յէ նրանից սպավել:

Ենք պատասխանված և մյուս հարցին—մարդը վմբքան ժամանակ կարող է դիմանալ ապատ կերպով ցած ընկնելուն, առանց իր առողջությանը մնասելու, վմբքան ժամանակ կարող է նա ցած թռչել առանց պարագյուտը բաց անելու:

Ահա այդ բոլոր հարցերին ել պատասխանեց Յեկայելին իր թոհիչքով:

Ազ 168: Գերմանական լիազորները զինադադարի խնդիր ելին բերեն:

Հենց այդ ժամանակ Սպա քաղաքում Վիլհելմ II-ի նուխտգահության դիմուրդական խորհրդակցություն եր տեղի ունենաւմ. պետք եր վճռել, թե ինչ անել հետո: Գերմանական գեներալները մեկը մյուսի հետեւից հայտարարում եյին, վոր այսուհետեւ կովելին իմաստ չունի, պատերազմը տանուլ է տրված: Քանի գեռ շարունակվում եր այս խորհրդակցությունը, հեռախոսային զանգերն ամեն բոպե հնչում եյին. զանազան քաղաքներից հազորզում եյին, վոր Գերմանիայում հեղափոխություն և սկսվել Վիլհելմ II բոլորովին իրեն կորցրեց: Այն ժամանակ մոտեցան իր մերձավորները և նրան ասածարկեցին միակ, իրենց կարծիքով, արժանավոր յելքը—վերջին անգամ նետվել մարտիու խորտակվել նրանում: Վիլհելմ II համաձայնեց այդ առաջարկին:

Բայց վերջին բոպեյին, ինարկե, նա վախեցավ: Առաջանակ իր խոսքը, նու գաղտնի կերպով փախավ Հոլմնդիա: Մի ըուրա առավատ եր, անձրեւը հեղեղի նման թափվում եր, յերբ կայսերական ավտոմոբիլը մոտեցավ հոլանդական սահմանին. Վիլհելմ II դուրս յեկավ նրանից և մոտենալով հոլանդական պաշտոնյային, տվեց նրան իր սուսերը: Վիլհելմ II ստիպված յեղավ. քանի դեռ սահմանապահ պոստի պետի և հոլանդական կառավարության միջն բանակցությաններ եյին գնում, միքանի ժամանակընի տակ սպասել: Վերջապես նախկին կայսրին թույլատըռ-վեց մաս հոլանդական մի կալվածատիրոջ տանը: Յեկ յերեկոյն Վիլհելմ II արդեն նստել եր սաստիկ տաքացրած սենյակում:

իր համար նոր մարդկանց հետ սեղանի շուրջը, ապահովթյամբ ուստում-իմում եր և գոռողությամբ պատմում իր արկածների մասին:

Վիլհելմ Ա-ից հետո շուրջով Հոլանդիա յե փախչում և թագաժառանդը:

Վիլհելմ Ա մինչև այժմ ել իր ընտանիքով ապրում և զուլանդիայում: Նրա բոլոր կալվածքներն ու պալատները թողնվել են իրեն, այնպես վոր նա Յելլովայում համարվում և ամենաահարուստ մարդկանցից մեկը: Վիլհելմ Ա-ի վորդիներից մեկը գերմանական ֆաշիստական կուսակցության անդամ եւ:

Եջ 162: Գերմանիան հանձնվեց: Դա պատերազմի վերջն եւ:

Համաշխարհային պատերազմը վերջացավ նոյեմբերի 11-ին, առավոտյան ժամը ուղղի 11-ին: Այդ րոպեյին ռազմաճական գաղարեցին բոլոր ռազմական գործողությունները: Ցնվ հենց այդ ժամանակ, ի նշան պատերազմի ավարտման, Փարիզում սկսվեց թնդանօթային հանդիսավոր վողջույն՝ հարյուրմեկ անգնդակ ձերզով: Փարիզի բնակիչներն այդ վողջույնից ել ի հաւացան, վոր խաղաղություն հաստատվեց: Նրանք, վորոնք այդ որը Փարիզումն են յեղեւ, պատմում են, վոր այնտեղ ինչ-վոր աներենակայելի բան եր կատարվում: մարդիկ վողոցում գրկախառնվում եյին և ուրախությունից արտասվում:

Եջ 163: Այդտան վիլիսարի բնդանորից կրակելը նետ բան չեր: «Յերկար Բերտան» կառուցել եր գերմանական պրոֆեսոր Ռասուլենբերգը: Իր աշխատանքի համար վորպես նվեր գերմանական համալսարաններից մեկը նրան փիլիսոփայության դուռը տորի պատվավոր կոչումը տվեց:

Եջ 164: Յերկու տեսա առաջացրին այս պատերազմը—Ռուփիելերի և Դեսերդինգի թիւսները:

Հանրապետական բառարանում ահա ինչ է՝ ասված Ռոկֆելլերի մասին:

«Ամերիկական միլիարդատեր, խարդախ կոմբինացիաներով, կաշառքներով—ու բռնություններով գարձել և աշխարհում ամենախոշոր նավթային արքան»:

Ռոկֆելլերը մեռալ այս տարի, 97 տարեկան հաստկում:

Իր վերջին տարիները Ռոկֆելլերը շատ փակված եր անց-կացնում, համարյա վոչ վոթի շահենելով, շրջապատված հատուկ շրջկական պահպանությամբ—տասնյակ բժիշկներ անընդհատ հետևում եյին նրա առողջությանը, բոլոր միջոցների դիմում:

վորպեսպի նըւա տան մեջ վոչ մի հիշանդություն չկարողանա  
մուռք գործել:

Դեսերդինզը—նավթի անգլիական թագավորը, Ռոկֆելլերի  
մըսակիցն և Դեսերդինզի մասին շատ քիչ բան է հայտնի—նա  
խնամքով թագանում և իր կենսագրությունը և իր մասին  
վոչ մի տեղեկություն չի տալիս մինչև անգամ տեղեկագրերի և  
բառարանների համար Վոչ վոչ մինչև այժմ ճշտությամբ չգի-  
տե, վրասեղ և յերը և ծնվել Դեսերդինզը, ով և իր ծագումով:  
Սակայն նրա գործունեյության մասին վորոշ տեղեկություններ  
կան: Որինակ, հայտնի յե, վոր 1922 թվին խորհրդային կա-  
ռավագրությանն առաջարկ և արել, վորպեսպի նա վարձակալու-  
թյան տա իրեն Բագվի նավթային հանքերը: Խորհրդային իշ-  
խանությունը մերժումով պատասխանեց: Առանձնապես այդ որ-  
վանից Դեսերդինզի տեղելությունն ավելի յե սրվել դեռի Խոր-  
հրդային Միությունը: 1929 թվին պարզվեց Դեսերդինզի մաս-  
նակցությունը խորհրդային չերվոնեցների կեղծիքի մեջ՝ Բեռ-  
լինում: Այժմ Դեսերդինզը ստանակառում ու փող և մտակա-  
րարում Հիտլերին:

**Աջ 186:** Այս համեմատաւրյամբ շնչին նաևնակաւրյամ ունեն  
տարեալին բալոր աղեմները՝ յերկրաօարժմերը, նեղեղումները, փորո-  
րիկները:

Տարերային ամենասարսափելի աղետներից մեկը 1923 թվին  
ձագոնիայում տեղի ունեցած լերկաշարժն էր. նա յերկու  
հարյուր հազար մարդ վոչնչացրեց: Բայց համաշխարհային իմ-  
պերիալիստական պատերազմը վոչնչացրեց վոչ թե յերկու հա-  
րյուր հազար մարդ, ոյլ հիսուն անգամ ավելի—ինչ միլիոն մարդ:

**Աջ 185:** Ֆախիսմները նախարար իշեմց նամար դասնակիցներ են  
նե գանօւմ, պատերազմի ընդհանուր նակաս անդաւմ:

1936 թվի վերջում Գերմանիան և Իտալիան կոմունիզմի  
դեմ միասնարար պայքարելու համաձայնության պատրվակի առկ  
ինչ Միության դեմ ռազմական դաշինք կնքեցին:

ԲԵՎԱՆԴԱԿՈՒՅՈՒՆ

#### **Books Received**

ԳԱՅԻ ՈՐԵՐԸ

Զարդար Վերպանիկ Հակոբոսմարտի մասին	9
Դիմումին Պրինցիպը	22
Պատերազմի հայանելունները	27
Առաջինի թագավորի պատմությունը	31
Պատերազմերի պատճեռը	34
Տաղար և Ծիռոս	35
Հեղա գույք կորու և պատերազմ սկզբեւ	42

### **STRUCTURE AND**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

Հըսւց առաջին զարգանային գրտեհ մասին	47
Տաղեն	50
Խորիս	51
Դիղերի և ներկերի արքուն	56
Զըսւց փոշացնող պատերազմի մասին	57
Ցերպերին կրեաց և յերկարութենիթ բժեշտ	64
Խելպես և Փարբեց դպրապահվում պատյին հարձակումից	68
Ռանեանձնիները պատերազմում	72
Տափառամարտ պատմ	77
Գաղ և Ծոկագագ	82
Բաժանմարտ պատկերը, մըր ուրասմիկի չեն	86

**Cherry tree**

ՑԱՐԱԳԻ ՑԵՎ ՇՈՎՔ ՎՐԱ

Աղային համառուրմ . . . . .	32
Խնչքին են սպառում պաշտամեցը	36
Ի՞նչ և յերեսմ վերեկց . .	16
Գերանական բանակի ու որը	107
Տանիք ուղերձ ու սկսնդիեցը	221

Եսկային նովոտուրմը . . . . .	115
Զբույց Յուլյանդական մարտի մասին . . . . .	119
Պատերազմ Հրէ ոտկ . . . . .	122
Զբույց Զենքառոյան պղեղացիայի մասին . . . . .	124
Ո՞գ շահեց . . . . .	141
Տական և թիկունք . . . . .	144
Զբույց պարագաւունվ թիկունք մասին . . . . .	150

### ՑԱՐԱՐԴ ՄԱՍ

ՀԱՅ . . . . .	157
Ցերինդին սաղինութը . . . . .	161
«Ցերկար Ցերասյի» պատմությունը . . . . .	166
Ցետրափիր և արզուց բանոկ՝ առանց մարգկանց	174
Զբույց «1118-14-Ա» ազագու մասին . . . . .	178
Սպասարդինվան մազգուրդ . . . . .	182
Արյունալին ճանապարհը . . . . .	186
Արդ 1916 թվին եր . . . . .	188
Ցեր կվերջունան պատերազմերը . . . . .	192
Զբույց Գերեկոսի մասին . . . . .	200
Կարմիր ոսող . . . . .	205
Հաջելիքն . . . . .	215



Պատ. Խմբուկից՝ ԱՇ. ԴԱԶԱՄՑԱՆ  
Տեղ. Խմբուկից՝ ԱԽ. ԴԱՍՎԱՐՑԱՆ  
Լեզվական Խմբուկից՝ Հ. ԿԱՐՈՒՔՑՈՒԽԵԱՆ  
Սըրուկից՝ Խ. ԱՅՎԱՋՑԱՆ

Դշտվական լեռզար՝ Տ. Խ. 1873  
Հրամ. 6726, պատվեր 525, ավագ 4000  
Հանձնված և արտադրության 1929 թ. սեպտեմբերի 10-ին  
Սահմանված և ապագարության 1929 թ. Հունվարի 21-ին



13460

Thos. M.

